ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(78-րդ տարի) Թիվ-5 (1687) Մայիս 2024

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Մայիսի խորհուրդն ու ժամանակի մարտահրավերը (էջ 1-3)

2- Քաղաքական

Արտաշես Շահբազյան
Մտորումներ ճանապարհի կեսին (էջ 4-5)

3- Պատմաքաղաքական

Անի Մելքոնյան
Հայաստանի իշխանությունների հարաբերությունները Ռուսաստանի հետ 1918-1920 եւ 2018-2024 թթ. (էջ 6-10)

4- Հասարակություն

Մարի Ռոզ Աբուսեֆյան
Բավ է, որքան ժամանակ վատնեցինք (էջ 11-16)

Մանվել Մկրտչյան
Որտե՞ղ են ապրում հակազգային և հակապետական մանրէները (էջ 17-20)

5- Սփյուռք

Սարգիս Մահսէրէճեան
Սփյուռքի ներուժը եւ Հայաստանը (էջ 21-29)

6- Դեմքեր և դեպքեր

Հրազդան Զէյթլեան
Սոնա Զէյթլեանի կեանքի գործը (էջ 30-31)

Հրազդան Զէյթլեան
Սոնա Զէյթլեան
Կենսագրութիւնը և ստեղծագործական ուղին (էջ 32-42)

7- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Ուրկէ՞ սկսիլ (էջ 43-44)

Մայիսի խորհուրդն ու ժամանակի մարտահրավերը

Մայիս ամիսը միշտ տոնական տրամադրությամբ, լավատեսությամբ է համակել մեզ, պարուրել է հաղթողի զգացողությամբ: Հայաստանի անկախացման օրերից սկսած՝ քառորդ դար ոգեշունչ միջոցառումները հաջորդում էին իրար, հիշում էինք «Ավարայրի» մասին, գալիս հասնում էինք սարդարապատյան երկունքին, և փառավորվում էինք՝ մտածելով, որ այս կամ այն կերպ առնչություն ունենք նորօրյա Ավարայրին ու Սարդարապատին՝ արցախյան հերոսական հաղթանակին: Ժողովուրդները միշտ կառչած են մնում իրենց պատմական հերոսների ու հերոսականության, իրողությունների ու առասպելների միֆականացված արժեքներին: Մարդկային կյանքը միշտ իմաստավորվում ու ոգեշնչվում է իրենից վեհ, իրեն առաջնորդող գաղափարներով ու խորհրդանիշերով: Այդ ամենը մերժելու դեպքում «սուրբ տեղը» լրացնում են այլ արժեքներ՝ հակադրելով մարդուն, խորթացնելով և թշնամացնելով սեփական ինքնության հետ: Սեփական արժեքներն ու խորհրդանիշերը մարդուն շաղկապում են իր անցյալի հետ, ուժ ու արժանապատվություն են ներշնչում, դարձնում են նրան ավանդականի վերածված այդ երևույթների պահպանման ու շարունակման մեկ շղթան՝ նախանձախնդիր նախնիների նպատակների ու երազանքների իրականացման հարցում և պատրաստ ամեն ինչի՝ հանուն իր ինքնության հիմքերը կազմող նյութական ու հոգևոր արժեքների: Այս մտքերը վերացական, փիլիսոփայական դատողություններ չեն, այլ շատ կոնկրետ ու շոշափելի իրողություններ, որոնց մթնոլորտում այսօր ապրում է, եթե չասենք, այդ «ապուրն է ուտում» հայ ժողովուրդը: Նրա պատմությունը, նրա հերոսական անցյալն ու հազարամյակների մաքառման ընթացքը դրվել են հարցականի տակ, մերժվել է նույն հայ ժողովրդի այսօրվա առաջնորդների կողմից: Փորձ է արվում՝ ապացուցելու, թե սխալ ճանապարհով են գնացել իրարահաջորդ սերունդները, ընտրել են հակադրությունն ու պայքարը՝ խաղաղության ձգտելու փոխարեն: Իհարկե, թույնի պես ներարկվող այս գաղափարախոսության շրջանառումը պատմական ինքնության հիմքերը խարխլելուց առավել նպատակ ունի արդարացնելու պայքարից, դիմակայությունից խուսափելու այսօրվա ռազմավարությունը, ինչը արժեզրկել է պետությունը, զրկել է նրան իրական ինքնիշխանությունից և ուղիղ գծով տանում է դեպի գաղութացում: Հայաստանի իշխանությունը երկիրը նախապատրաստում է դարավոր հակառակորդին հանձնելուն: Արցախը հանձնելուց, նրանից պաշտոնապես հրաժարվելուց հետո շարունակվում է պարտությունների այն շղթան, որի վերջը չի երևում,

Սարդարապատի հուշահամալիրի բացման օրը

իսկ այդ վերջը ավելի շուտ կդառնա հենց Հայաստանի վերջը: Եթե այդպես չէ, կարո՞ղ է իշխանությունը հայտարարել, որ ինչ-որ գծից այն կողմ ինքն այլևս ոչինչ չի զիջելու: Այս իշխանությունը ցայսօր եթե ինչոր բան էլ խոստացել է, ապա միայն այն, թե արտաքին ուժերը մեզ կպաշտպանեն:

Արցախը վերջնականապես հանձնելու օրերին երկրի ղեկավարը հայտարարեց, թե արցախահայերին ոչինչ չի սպառնում: Ոստիկանական բռնությամբ նա տներից հանեց Տավուշի գյուղացիներին և ադրբեջանցիներին հանձնեց տարածքի անառիկ պաշտպանական դիրքերը, հայտարարեց, թե գյուղ հասած ադրբեջանցիների հետ կարող են առևտուր անել, իսկ եթե չեն ցանկանում նրանց տեսնել, կարող են ծառեր տնկել: Այսպես ցինիկ, այսպես սեփական վշտին անհաղորդ կարող է լինել միայն բացահայտորեն դավաճանության ճանապարհը բռնած ղեկավարը: Այս իշխանությունը երբեք չխոսեց այն մասին, որ 2020 թվականի պատերազմի գլխավոր հովանավորը Թուրքիան էր՝ իր գլխավոր շտաբի, հատուկ զորամիավորումների ուղղակի մասնակցությամբ, զենքի մեծաքանակ մատակարարմամբ և քաղաքական աջակցության ապահովմամբ: Հայաստանի պաշտոնյաները 90-ականների սկզբի ՀՀՇ-ականների պես հայտարարում էին, թե թուրքական վտանգի մասին խոսողները մնում են հարյուր տարի առաջվա պատկերացումների գերության մեջ, նաև փորձում էին ստեղծել կիրթ ու խաղաղասեր ադրբեջանցու կերպար: Իրադարձությունների զարգացումը փաստեց միանգամայն հակառակը, և դրանով հանդերձ չփոխվեցին հայ կապիտուլյանտների գաղափարախոսությունն ու որդեգրած քաղաքականությունը: Սրա կողքին քաղաքական ու ռազմավարական դաշնակիցներն ու պոտենցիալ դաշնակիցները մերժվում են, դառնում են իշխող ուժի հակաքարոզչության թիրախը: Ռազմական դաշնակցի առջև պահանջ է դրվել՝ լքելու Ադրբեջանի հետ ողջ սահմանային գոտին, երբ այս իշխանության քանդած բանակը ի վիճակի չէ դիմակայելու հնարավոր հարձակումներին, իսկ ղեկավարությունն այդպիսի տրամադրություն չունի: Վերջին տարիներին հայ զինվորներից մշտապես պահանջվել է չպատասխանել ադրբեջանական սադրանքներին: Ի դեպ, դրա համար էլ պաշտպանության նախարար է նշանակվել ապազգայինների թիմից մեկը, որը անվերապահորեն կատարում է գերագույն գլխավոր հրամանատարի՝ պարտության տանող բոլոր հրամանները:

Մինչ այսօրվա բախտախնդիրների իշխանության գալը Հայաստանի ղեկավարությանը հաջողվել էր հայ-ադրբեջանական հակամարտությունից հեռու պահել արտաքին ուժերին, իսկ այսօր այս հակամարտությանը ուղղակիորեն կողմ են դարձել և՛ Արևմուտքից, և՛ Արևելքից բազմաթիվ շահագրգիռ ուժեր, որոնք տարածաշրջանը վերածում են աշխարհակարգային բախման գոտու: Հայաստանի «տարբեր քաշի» իշխանավորներ իրենց խոսափող լրատվամիջոցների հետ հայտարարում են, թե Ռուսաստանը ցանկանում է Հայաստանը վերածել Ուկրաինայի, իսկ իրականում հենց իրենք ընտրեցին Ուկրաինայի դրածո իշխանության ճանապարհը և համառորեն շարունակում են այն, երբ ակնհայտ է, որ Ռուսաստանի դեմ այս երկրին առճակատման տարած ուժերի նպատակը եղել է սոսկ Ռուսաստանի հետ իրենց անուղղակի բախումը, որին պետք է զոհաբերվեին Ուկրաինան և ուկրաինացիները: Ակնհայտ պարտություն կրելով ուկրաինական

ճակատում՝ տվյալ ուժերի ձգտումն է Ռուսաստանի ազդեցության չեզոքացումը Անդրկովկասում և Կենտրոնական Ասիայում: Իր հերթին Հայաստանի իշխանությունը անկամորեն ստանձնել է այդ դերը՝ հակադրվելով Ռուսաստանին և պատրաստակամություն դրսևորելով մինչև վերջ զիջելու ադրբեջանաթուրքական դաշինքին: Հայաստանի իշխանության իրական պայքարը սեփական ժողովրդի դեմ է, որը ձգտում է կանխել Հայաստանի թուրքացումը և զոհաբերումը արևմտյան հեռահար ծրագրերին: Իսկ այս պայքարում Հայաստանի իշխանության դաշնակիցը թուրքադրբեջանցիներն են, ովքեր չեն ցանկանում Փաշինյանի և մյուս դավաճանների հեռացումը իշխանությունից:

Ինքնիշխանության և ինքնության պահպանման համար ազգային ռազմավարության վերածված դարավոր պայքարը հայությունը որդեգրել է առարկայական դրդապատճառներով և այն, ըստ էության, դարձել է ազգի գոյատևման միակ երաշխիքը: Չլինեին 30-ամյա ազգային ազատագրական պայքարն ու 1918-ի հերոսամարտերը՝ չէր ստեղծվի Հայաստանի Հանրապետությունը, և չէր լինի այսօրվա հայոց անկախ պետությունը: Հայությունը չընդուներ 1990-ականների արցախյան պատերազմի մարտահրավերը, չէր լինի Արցախի ազատագրումը և մոտ քառորդ դար ձգված հարաբերական խաղաղությունը: Չկարողանալով հաղթել սեփական ինքնության պաշտպանությանը ունակ ժողովրդին՝ թշնամին նրա ներսում բուծեց իր հինգերորդ շարասյունը, որը հանձնեց հայկական մեկ պետությունը և հանձնման է տանում երկրորդին: Այս անգամ հայ ժողովուրդն իր գոյատևումն ապահովելու համար հարկադրված է նախ հաղթել դավաճանության ուղին բռնած ներքին թշնամուն: 2024-ի մայիսը նույնպես եղավ պատմական դիմակայության ամիս: Ազգային ուժերի ու ժողովրդի ըմբոստացմանը դրածո իշխանությունը հակադրեց ոստիկանական անդեմ և կաշառված զանգվածին: Ազգային ուժերին չհաջողվեց 2024-ի մայիսին հասնելու արտաքին հովանավորություն վայելող դրածո իշխանության հեռացմանը, սակայն փաստեց.

ա) համաժողովրդական բնույթ ստացած շարժումը պատրաստ է համառ ու երկարատև ընթացքի,

բ) բարոյապես ու քաղաքականապես վարկաբեկված իշխանությունը կորցրել է ոտքի տակի հողը, և նրա միակ ներքին նեցուկը ուժային կառույցներն են,

գ) ազգային դավաճանության իշխանության արտաքին հովանավորները հասկացան, որ խամաճիկ իշխանությունը վարկաբեկված է, և ժողովուրդը մերժում է երկիրը կապիտուլյացիայի տանելու, ազգային արժեքային համակարգը փոխելու, ինքնությունը այլասերելու ծրագրերը,

դ) մերժված իշխանությունը չի կարող երկար գոյատևել, իսկ գոյատևման շրջանում լինելու է ինքնամեկուսացված, անարդյունավետ ու անկայուն,

ե) հայ ժողովուրդը հայտ է ներկայացնում՝ տարածաշրջանում վերականգնելու հայկական շահերը՝ որպես աշխարհաքաղաքական գործոն,

զ) ձախողելով հոչակած բոլոր ծրագրերը և հակադրվելով անօրինական կուրսը մերժող ժողովրդին՝ Հայաստանի իշխանությունը հայտնվել է ոչ լեգիտիմության դաշտում և նրա նկատմամբ հետագա հովանավորությունը վարկաբեկում է արտաքին ուժերին և միջազգային կառույցներին, բացահայտում է վերջիններիս հակաժողովրդավարական, կողմնակալ և գիշատիչ էությունը:

Գլոբալիստական գաղափարաքաղաքական վարդապետությունը մոտ կես դար մոլեգնում է աշխարհի վրա՝ պետություններ ցնցելով, դժբախտություններ բերելով միլիոնավոր մարդկանց: Աշխարհի գերհզոր պետություններն այսօր պայքարում են՝ դիմակայելու այդ ավերիչ հոսանքին:

Այո՛, հայ ժողովուրդը նույնպես դարձավ այդ հարձակման թիրախը, իր ներսի դավաճանների միջնորդությամբ ենթարկվեց նոր ցեղասպանության և կորցրեց Արցախի Հանրապետությունը: Հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը կրող մեծամասնությունը, սակայն, ոտքի է ելել՝ փաստելու, որ մեռած չէ, չի կորցրել արժանապատվությունը և ևս մեկ անգամ կարող է փրկել ինքն իրեն ու իր պետությունը: Մայիսյան օրերը կրկին հիշեցրին մեր հաղթանակների, անելանելի թվացող պայմաններում ելքը գտնելու մեր կարողության մասին: Հաղթողի տրամաբանությունը հայկական օվկիանոսի մեջ սկսում է խեղդել անարժանապատիվ և ծախու ստրուկին: ■

Մտորումներ ճանապարհի կեսին

Արտաշես Շահբազյան

«ՍՐԲԱԶԱՆ ՇԱՐԺՈՒՄ» անվամբ ազգային հերթական պոռթկումը կարճ ժամանակից մեծ ծավալ ընդունեց: Առաջին անգամ ոտքի կանգնեցին մարզերի բնակիչներն ու ուսանողությունը, նրանց միացան հասարակության ու մտավորականության ամենատարբեր շերտերը: Անհանգստանալով իշխանության հիմքերը սասանող շարժման հեռանկարից՝ իշխանությունը (բնականաբար իր ղեկավարի հստակ ուղղորդմամբ) դիմեց պայքարի սիրած մեթոդներին. ստին, կեղծիքին ու վարկաբեկումներին: Հատկապես շարժման՝ Երևան հասնելու առաջին օրերին ապատեղեկատվության շեշտը հիմնականում դրվում էր վերջինիս եկեղեցական բնույթ վերագրելու վրա: Մայիսի 28-ին Վեհափառ հայրապետի Սարդարապատ բարձրանալը խոչընդոտելու փաստը պատճառաբանելիս Նիկոլ ստախոսը նույնիսկ ակնարկեց, իբր շարժման առաջնորդը հենց Ամենայն Հայոց կաթողիկոսն է: Հստակորեն պետք է արձանագրել, որ այս շարժումը եկեղեցական կամ կրոնական բնույթ չունի, քանի որ չի հետապնդում ո՛չ եկեղեցական և ո՛չ էլ կրոնական խնդիրներ: Այս դեպքում շարժումը այդպիսին չէր կարող համարվել, եթե անգամ Բագրատ Սրբազանի կողքին կանգնեին բազմաթիվ հոգևորականներ: Որպեսզի իր գործունեությունը և հնչեցրած հայտարարությունները հոգևոր անձի կամ ինստիտուտի պաշտոնական տեսակետ չհամարվի, որպես հավելյալ քայլ, Սրբազանը նաև ժամանակավորապես սառեցրեց իր հոգևոր պաշտոնավարումը:

Ի դեպ, իշխանությունը փորձեց տարաբնույթ մեթոդներով հասնել Սրբազանի դեմ ճնշման, այդ թվում՝ հրապարակ նետելով եկեղեցուն հավելյալ հարկելու խախուտ սպառնալիքը:

Հաջորդ կեղծիքը, որն անդադար հնչում է Նիկոլի «նվագախմբի» կողմից, այն սուտն է, թե ազգային շարժման ետևում կանգնած են արտաքին ուժեր: Այս դեպքում թվում է, թե հարվածն անթերի է, որովհետև կարծես թե դժվար է ապացուցել, որ նման բան չկա, իսկ ապացուցելու փորձերն ավելի անհեթեթ վիճակի մեջ կարող են դնել դա անողին: Իրականում հակառակը փաստելու ոչ մի ճիգի կարիք էլ չկա: Ըստ ամերիկյան ասացվածքի՝ եթե առջևում երևացող ինչ-որ բան բադ է հիշեցնում, շատ հավանական է, որ դա հենց բադ է: Մարդկանց և հավաքականությունների գործունեությունը ամենաակնհայտ փաստարկն է, թե նրանք ովքեր են, որտեղից են, ինչ են անում և ինչ նպատակով են անում: Եթե որևէ արտաքին հովանավոր ուժ շահագրգռված է, որ հայ ժողովուրդը պայքարի Հայաստանի ինքնիշխանությունը խարխլող տարածքային զիջումները կանխելու, Արցախը ետ վերադարձնելու, բանակը վերականգնելու, ազգային արժեքների այլասերումը թույլ չտալու, Հայաստանը թուրք-ադրբեջանական թելադրանքից դուրս բերելու և, լայն առումով, երկիրը ամրացնելու ու զարգացման առողջ, բնականոն հուն տեղափոխելու հարցում, գուցե իսկապե՞ս ազգովի գնանք և ապավինենք այդ ուժին:

Ճիշտ է ասված, որ լավագույն պաշտպանությունը հարձակումն է, գուցե այս ձևով ամբողջովին արտաքին ուժերի կամակատար իշխանությունը փորձում է իրենից հեռացնել այն մեղադրանքը, որն իրեն ներկայացնում է ողջ ազգը: Այլևս բացահայտ է, թե ինչպես է Հայաստանի ներկայիս իշխանությունը քայլ-քայլ իրականացնում տասնամյակներ շարունակ թուրքերի առաջադրած պահանջները, նրանց կամքով սեփական պատմությունն է խեղաթյուրում, վախենում է անգամ Հայաստանի տարածքում հանդիպել Արցախի պաշտոնյաների հետ, և ավելին, բանտ է նստեցնում նրանց, պատրաստվում է թուրք-ադրբեջանական պահանջով սեփական երկրի սահմանադրությունը փոխել, էլ չխոսենք թշնամու վերջ չունեցող տարածքային պահանջներին տեղի տալու մասին: Արժանապատվություն ունեցող իշխանությունը ամոթից գետինն էր մտնելու՝ տեսնելով, թե ինչպես թշնամիները հրապարակայնորեն անհանգստանում և անգամ սպառնալիք են հնչեցնում

ազգային ուժերի հասցեին՝ դրանով պաշտպանելով Հայաստանի ձեռնածու իշխանությանը: Իշխող ուժն այնքան է ներարկված արտաքին ազդեցությամբ, որ առանց վարանումի՝ հայհոյում է սեփական եկեղեցին ու նրա սպասավորներին. բոլորովին վերջերս խորհրդարանում օրենքի փոփոխություն կատարեց, որով հեշտացնում է միասեռական ընտանիքներ կազմելու հնարավորությունը: Վտանգելով Հայաստանի վաղվա օրը՝ նա հայտարարում է Ուկրաինայի տարածքային ամբողջականությունը ճանաչելու մասին: Սա, ի դեպ, այն դեպքում, երբ Ուկրաինան մշտապես քաղաքական ու ռազմական աջակցություն է ցույց տվել Ադրբեջանին, ողջունել է Արցախի օկուպացումը, ավելի քան 30 տարի գործում է հակահայ բլոկների և դաշինքների մեջ, նրա դիպուկահարները 90-ականներին կովում էին Արցախի դեմ: Կասկած չկա, որ արտաքին ուժերի պահանջով է Հայաստանի այսօրվա ղեկավարությունը սրում հարաբերությունները Ռուսաստանի հետ և Հայաստանը ռազմադաշտ դարձնելու գնով պատրաստ է երկիրը վերածել Արևմուտքի ու Ռուսաստանի առճակատման գծի:

Ազգային ուժերի շարժման հաղթական ծավալումը կանխելու՝ Հայաստանի իշխանության որդեգրած միջոցներից են բանտարկությունները, հետապնդումներն ու բռնությունները: Այս անգամ այդ բռնությունները ավելի կոշտ բնույթ են ընդունել և նպատակ ունեն վախեցնելու շարժման մասնակիցներին: Կասկած չկա, որ որքան երերա Նիկոլ Փաշինյանի ոտքի տակի հողը, այնքան ենիչերիների բանակի վերածված ոստիկանության բռնություններն ավելի վայրագ ու անկանխատեսելի կդառնան: Սրանով հանդերձ, այսօր ազգային շարժման անհրաժեշտությունը այնպիսի ամուր համոզումի է վերածվել և ծավալներ է ընդունել, որ իշխանության սանձազերծած բռնություններն ավելի վճռական են դարձնում պայքարողների կամքը:

Փաշինյանը փորձում է անկոտրում պահել ոստիկանության պատժիչ ուժերին՝ անընդհատ խրախուսելով արձանագրվող և չարձանագրվող պարգևավճարներով, սակայն հոգու խորքում նա էլ է հասկանում, որ ամեն օր ժողովրդի անարգանքին արժանացող ոստիկանները չեն կարող երկար դիմանալ: Իհարկե բարոյապես ու քաղաքականորեն սպառված ղեկավարի փորձված և նախընտրելի զենքը մնում է ժողովրդին պատերազմով վախեցնելը: Նա դեռ փորձում է մոլորեցնել մարդկանց իր մանիպուլյատիվ ճառերով, բայց ֆիզիկապես ու հոգեբանորեն կոտրված լինելով՝ նրա խոսքն այլևս համոզիչ չէ և օրըստօրե դառնում է ավելի ու ավելի խամրած ու անհեթեթ: Ի տարբերություն 2018-19 թվականների, երբ նա գերում էր մարդկանց շռայլ խոստումներով, այսօր հանրությունը տեսնում է, որ կանգնած է բոլորովին այլ իրականության առջև. թավշյա շարժման երբեմնի առաջնորդը սկսել է հակասել ինքն իրեն, նրա որդեգրած «զիջումներ խաղաղության դիմաց» քաղաքականության հետևանքով զիջումները դառնում են անվերջանալի, իսկ պատերազմի վտանգը ոչ թե նվազում է, այլ ավելանում որպես գործիք, որի միջոցով թշնամիները վախկոտ ղեկավարին պարտադրում են նորանոր ու բազմատեսակ զիջումներ: Երբեմնի «թավշյա» առաջնորդը սպառում է ուռճացող ու ավելի վճռական դարձող շարժմանը դիմակայելու իր հնարավորությունները, նա այլևս վստահություն չունի ոչ մի կառույցի, անգամ իր քաղաքական համախոհների նկատմամբ՝ համոզվելով, որ թիմը ցանկացած օր կարող է փլուզվել: Նա դեռ փորձում է ինքնավստահ և իրավիճակին տիրապետողի կեցվածք ցուցադրել, սակայն ջղաձիգ քայլերը վկայում են հակառակի մասին: Կասկած չկա, որ ազգային բոլոր կառույցների ու հասարակության կողմից մերժված ղեկավարի համար առաջվա խաղաղ ու հաղթական օրերն այլևս ետ չեն գալու: Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ նա երբեք չի հաշտվելու կամավորապես իշխանությունը հանձնելու մտքի հետ՝ սարսափելով դրա հետևանքներից: Ուրեմն նա իշխանությունից կհեռանա, երբ այլևս փլուզված կլինի ոտքի տակի հողը, և այսօր դեռ ծառայամտորեն իր անբարո հրամանները կատարող ենթակաները կարող են շղթաներ անցկացնել ձեռքերին:

Սրբազան շարժումը պետք է հաղթանակի, քանի որ հակառակ պարագայում մենք կկորցնենք և՛ պետությունը, և՛ երկիրը: Շարժման հաջողության գլխավոր գրավականը նրա մասնակիցների տոկունությունն ու համառությունն է: 1988-1990 թթ. մենք ամեն օր գտնվել ենք Ազատության հրապարակում: Այսօրվա մարտահրավերները ոչ թե պակաս, այլ ավելին են, քան այն օրերին, հետևաբար պայքարը այլընտրանք չունի: Հակառակը, պայքարը պետք է ծավալվի, փողոց պետք է դուրս գան նրանք, ովքեր պայքարի հետ են, բայց բազմոցին թիկնած. հեռուստատեսային կամ համացանցային էկրանի առջև են: Ակնհայտ է, որ ժողովուրդ-ուժայիններ դիմակայությունը շատ երկար չի կարող ձգվել և մի օր անսպասելիորեն ավարտվելու է վերջինիս պարտությամբ: Պայքարի յուրաքանչյուր օրը, որը կերտում է ազգային շարժումը, մոտեցնում է համազգային հաղթանակի անխուսափելի պահը: ■

Հայաստանի իշխանությունների հարաբերությունները Ռուսաստանի հետ 1918-1920 եւ 2018-2024 թթ.

Անի Մելքոնյան
Պատմաբան

Վերջին տարիներին մի շարք «վերլուծաբաններ» ու իշխանական պատգամավորներ Հայաստանի ներկայիս կառավարության ապաշնորհ քաղաքականությանն ուղղված քննադատություններին ի պատասխան՝ հաճախակի նշում են, թե Հայաստանի առաջին հանրապետության անկման և տարածքային կորուստների պատճառը Առաջին հանրապետության կառավարության «արևմտամետ» և «հակառուսական» դիրքորոշումն էր:

Թեև ժամանակաշրջաններն ու իրադարձությունները տարբեր են, տարբեր են նաև Հայաստանի ներկա և առաջին հանրապետությունների կառավարությունների արժեհամակարգն ու քաղաքական նպատակները, և այսօր Հայաստանի հետ տեղի ունեցողը ամենևին էլ Առաջին հանրապետության կառավարության գործունեության արգասիքը չէ, այնուամենայնիվ կցանկանայինք մի փոքր խոսել Դաշնակցության՝ որպես իշխող կուսակցության, Ռուսաստանի հետ հարաբերությունների մասին՝ հիմնվելով փաստերի վրա:

Այսպես՝ 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո կտրուկ փոխվեց իրավիճակը Ռուսական կայսրության ողջ տարածքում, երկրում հաստատվեց երկիշխանություն՝ ի դեմս բանվորների ու զինվորների, պատգամավորների, Պետրոգրադի խորհրդի և ժամանակավոր կառավարության:

1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումը իր բացասական հետևանքները պետք է ունենար հայ ժողովրդի քաղաքական ճակատագրի վրա:

«Ռուսաստանի խորհրդայնացման փաստը ու այդ միջոցով վերջինիս հրաժարումը պատերազմի հաղթական արդյունքներից, գերմանական վերնախավի և բոլշևիզմի գաղտնի համաձայնությունը, սիոնիզմի գործոնը, բոլշևիկների ու երիտթուրքերի ձևավորվող դաշինքը… պայմանավորում էին հայ-թուրքական, հայ-վրացական և այդ բոլորի ու խորհրդային իշխանության բազամաշերտ փոխհարաբերությունները»[1]:

Ռուսաստանում իշխանությունը ձեռք գցած Լենինի կառավարությունը ուժերը դուրս բերեց պատերազմից և «Քառյակ միության» երկրներին հաշտության առաջարկություն արեց, ինչը ընդունվեց վերջիններիս կողմից:

Հաշտության բանակցությունները սկսվեցին Բրեստ-Լիտովսկում և ընթացան երեք փուլով. «Բրեստ-Լիտովսկի բանակցությունների երեք փուլում էլ արծարծվեց հայկական տարածքների հարցը: Բանակցությունների առաջին փուլում Խորհրդային Ռուսաստանի պատվիրակության ղեկավարը ներ-

կայացրեց իր կառավարության դիրքորոշումը և սկզբունքները: Ըստ այդ սկզբունքների՝ արգելվում էր պատերազմի ժամանակ գրավված տարածքների բռնակցումը: Ռուսաստանը պարտավորվում էր իր զորքերը դուրս բերել գրավված տարածքներից»[2]:

Սա, բնականաբար, չէր կարող չվերաբերել նաև Արևմտյան Հայաստանին:

«1918 թ. մարտի 3-ին Խորհրդային Ռուսաստանի կառավարությունն ընդունեց Քառյակ միության բոլոր պահանջները: Համաձայն պայմանագրի չորրորդ հոդվածի և ռուս-թուրքական լրացուցիչ պայմանագրի՝ Թուրքիային էին հանձնվում ամբողջ Արևմտյան Հայաստանը և Կարսի մարզը»[3]:

Թուրքերին հանձնվեցին նաև Արդահանի և Բաթումի շրջանները, այլ կերպ ասած՝ «բոլշևիկները ոչ միայն ամբողջ Թուրքահայաստանը հանձնում էին թուրքերին, այլև վերադիր Ռուսահայաստանի երեք կարևոր շրջանները:

Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը ավելի ևս արձակեց թուրքերի ձեռքերը: Նրանք չմնացին ռուս-թուրքական սահմանագծի վրա և շարժվեցին դեպի Կովկասի ներսը՝ իրենց հետ բերելով ավեր ու կոտորած»[4]:

Անտոն Դենիկին. Հարավային Ռուսաստանի կառավարության ղեկավարը

Գեորգի Չիչերին. հայ-ռուսական բանակցություններում ռուսական պատվիրակության ղեկավարը

Թուրքական զորքերի Այսրկովկաս արշավանքի ֆոնին Չիչերինն ու Կարախանը Անդրկովկասի կոմիսարիատին գրում են.

«Հայերի հետագա ճակատագրի պատասխանատվությունը ընկնում է Գերմանիայի վրա, որովհետև նրա պահանջով էր, որ ռուս զորքերը դուրս հանվեցին հայկական շրջաններից, և այժմ նրանից է կախված թուրքական զորքերի զսպումը սովորական բռնություններից»[5]:

Արձանագրենք՝ սա մինչև Հայաստանի Հանրապետության հիմնադրումն է, և, այսպես կոչված, «վերլուծաբանները» չեն կարող պնդել, որ սրա պատճառը դեռևս գոյություն չունեցող Հայաստանի Հանրապետության կառավարության «հակառուս» դիրքորոշումն էր: Ընդհակառակը՝ անկախության հռչակումից հետո Հայաստանը Այսրկովկասում միակն էր, որը հակառուսական դիրքորոշում չորդեգրեց.

«Անդրկովկասի հանրապետությունների անկախության հռչակումից հետո Հայաստանի Հանրապետությունը զերծ մնաց հակառուսական տրամադրություններից: Ավելին՝ հայությունը միակն էր Անդրկովկասում, որ մինչև վերջ դիմագրավեց հակառուսական դաշինք ստեղծելու առաջարկներին… և կողմնորոշվելով դեպի Եվրոպա՝ Հայաստանի Հանրապետությունը դրանով հանդերձ շարունակում էր կապեր պահպանել Ռուսաստանի տարածքում ստեղծված զանազան կառավարությունների և գրեթե բոլոր քաղաքական ուժերի հետ»[6]:

Նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը հարևանների և Անտանտի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց զատ՝ փորձում էր կապեր հաստատել այդ շրջանում Ռուսաստանում գոյություն ունեցող բազմաթիվ իշխանությունների հետ:

«Հայաստանն ի սկզբանե իր ներկայացուցիչներն ուներ նաև Ռուսաստանի նախկին կայսրության տարածքում գործող կառավարությունների մոտ (Դենիկինի՝ Հարավային Ռուսաստանի, Կոլչակի՝ Սիբիրի, Կուբանի և Դոնի կառավարություններ, Ուկրաինա և այլն): 1918 թ. դիվանագիտական շփումներ հաստատելու առաջին փորձերն արվեցին նաև Խորհրդային Ռուսաստանի հետ, բայց այս ուղղությամբ լուրջ քայլերն արվեցին միայն 1920 թ.»[7]:

1918-1919 թթ. Ռուսաստանում դեռևս անորոշ էր քաղաքացիական կռիվների ելքը, այդ կռիվներում առավելությունը կարծես թե Անտոն Դենիկինի կողմն էր, որի հետ էլ Հայաստանը լավ հարաբերություններ էր հաստատել:

«1920 թ. սկզբներին, սակայն, ակնհայտ դարձավ Խորհրդային Ռուսաստանի առավելությունը: Կարմիր բանակը հայտնվեց Անդրկովկասի մատույցներում՝ ազդարարելով Ռուսաստանի վերադարձը տարածաշրջան»[8]:

Հայաստանի կառավարությունը քայլեր ձեռնարկեց Խորհրդային Ռուսաստանի հետ լավ հարաբերություններ հաստատելու ուղղությամբ, այդ նպատակով. «դեռևս ապրիլի վերջին Երևանում Լևոն Շանթի գլխավորությամբ կազմվեց պատվիրակություն, որը մայիսի 20-ին ժամանեց Մոսկվա»[9]: Բանակցությունները սկզբում հաջող էին Հայաստանի համար, «ռուսական կողմը պատրաստակամություն էր հայտնում ճանաչել Հայաստանի անկախությունը և չմիջամտել նրա ներքին գործերին, ընդունում էր նաև հայկական պահանջների արդարացի լինելը Զանգեզուրի և Ղարաբաղի հարցում:

Լևոն Շանթ. հայ-ռուսական բանակցություններում ՀՀ պատվիրակության ղեկավարը

Ցանկություն էր հայտնվում իրավարարի դեր խաղալ հայ-թուրքական վեճում և հանդես գալ Հայաստանի ու Մուստաֆա Քեմալի միջև միջնորդի դերում»[10]:

Իրավիճակը և Խորհրդային Ռուսաստանի վերաբերմունքը դեպի Հայաստանը կարճ ժամանակ անց կտրուկ փոխվեցին, մի կողմից՝ խորհրդայնացված Ադրբեջանի կառավարության, մյուս կողմից՝ հայ բոլշևիկների ջանքերով.

«Մոսկվայի բանակցությունները տեղի ունեցան հայ բոլշևիկների մայիսյան ապստամբության ճնշումից հետո՝ Անդրկովկասում կոմունիստների շրջանում սկսված հակահայաստանյան հիստերիայի պայմաններում: Վրեժխնդրության մոլուցքով տարված հայ բոլշևիկները Հայաստանին տրված գնահատականներում հետ չէին մնում ադրբեջանցիներից»[11]:

Հայաստանում կատարված դեպքերը բոլշևիկները ծայրաստիճան չափազանցված էին ներկայացնում և ադրբեջանցի կոմունիստների հետ միավորված պահանջում էին «դաշինք չկնքել Հայաստանում «բանվորների ու գյուղացիների կոմունիստական հեղափոխությունը» խեղդող և «կոմունիստներին անխնա կոտորող» կառավարության հետ»[12]: Հայ բոլշևիկների նման հակապետական հիստերիան ու զրպարտությունը հասցրին նրան, որ «Չիչերինը հունիսի 4-ին «մեծ վրդովմունքով» հեռագիր-բողոք է ուղարկում Երևան Հայաստանում իբր թե կատարվող գնդակահարությունների դեմ: Եվ, իմիջիայլոց, ասում է, թե «գնդակահարված է ընկ. Միկոյանը»[13]. այս «գնդակահարված» Միկոյանը, ի դեպ, Անաստաս Միկոյանն էր, որը մահացավ միայն 1978 թ.: Այս ամենը, իհարկե, չէր կարող իր բացասական հետևանքը չունենալ հայ-ռուսական հարաբերությունների վրա:

Բացի այդ՝ «Լենինի համար Հայկական հարցը միայն մեկ արժեք ուներ՝ պայքարի զենք՝ հակառակորդների դեմ: Եվ նա մեկից ավելի անգամներ իր ճառերում ու հոդվածների մեջ օգտագործեց այդ զենքը»[14]:

Այս ամենի հետ մեկտեղ Հայաստանի Հանրապետության հետագա ճակատագիրը որոշեց բոլշևիկ-քեմալական դաշինքը, որը ձևավորվեց Անտանտի դեմ պայքարում՝ շահերի համադրմամբ:

Այս առումով հետաքրքիր են դեռևս 1920 թ. ապրիլի 26-ին Լենինին ուղղված նամակում Մուստաֆա Քեմալի առաջ քաշած թեզերը: Այդ նամակում «Մուստաֆա Քեմալը շոշափել էր «իմպերիալիստական» Հայաստանի դեմ ռազմական գործողություններ սկսելու հարցը»[15]:

1920 թ. հուլիսին Բեքիր Սամի գլխավորած պատվիրակությունը ժամանեց Մոսկվա, որտեղ օգոստոսի 24-ին համաձայնեցվեց ռուս-թուրքական «սրտագին և անկեղծ բարեկամության» պայմանագրի նախագիծը, որով «Ռուսաստանը ճանաչում էր 1920 թ. հունվարին ընդունված «Ազգային ուխտը», որով Թուրքիա ասելով՝ հասկանում էին թուրքաբնակ բոլոր տարածքները: Այդ փաստաթղթով, ըստ էության, կանխորոշվում էր Արևմտյան Հայաստանի և Կարսի մարզի ճակատագիրը»[16]:

Այսպիսով՝ Խորհրդային Ադրբեջանի կառավարության բողոքները, բոլշևիկ-քեմալական դաշինքը և նրանց հետ գործակցող հայ բոլշևիկների հակապետական գործունեությունը դարձան հայ-ռուսական բանակցությունների ձախողման և Հայաստան-Խորհրդային Ռուսաստան դաշինքի տապալման գլխավոր գործոնները, ինչը Հայաստանի համար անկախության ու տարածքային կորուստներ և բազմաթիվ մարդկային կյանքեր արժեցավ:

Ինչևէ, հայ և ռուս բոլշևիկներին իրենց հակահայկական գործունեությամբ թողնենք իրենց տեղում և գանք մեր օրեր, մասնավորապես՝ «հեռհեղափոխական» Հայաստան: Այսպիսով՝ ակնհայտ է, որ Հայաստանը զոհաբերվեց արտաքին ուժերի շահերին, և հայկական կորուստները պայմանավորված չէին Հայաստանի իշխանությունների, այսպես կոչված, հակառուսական քաղաքականությամբ: Մի բան, ինչի մասին վերջին շրջանում տարբեր տեսակետներ են հնչում՝ անհիմն կերպով իրար նմանեցնելով այն ժամանակի և մեր օրերի Հայաստանի իշխանությունների որդեգրած քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ:

2018 թ. «թավշյա հեղափոխությունից» հետո Հայաստանի կառավարությունը ակնհայտ հակառուսական քաղաքականություն որդեգրեց: Այս դիրքորոշման «առաջին ծիծեռնակները», ինչպես ասում են, հայտնվեցին 2019-ին, երբ Նիկոլ Փաշինյանը չգնաց դիմավորելու ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին: Սա «ինքնիշխանություն» փաթեթավորմամբ հանրությանը ներկայացված առաջին ակն-

Բորիս Լեգրան. 1920 թ. Հայաստանում Ռուսաստանի ներկայացուցչության ղեկավարը

Ալեքսանդր Կոլչակ. Սիբիրի, Կուբանի և Դոնի կառավարությունների ղեկավարը

հայտ անհարգալից վերաբերմունքն էր ռազմավարական դաշնակից երկրի ղեկավարի նկատմամբ: Հաջորդը Հայաստանի պատվիրակության ղեկավար ՔՊ-ական Ռուբեն Ռուբինյանի կողմից ԵԽԽՎ-ում Ռուսաստանի ձայնի իրավունքը վերականգնելուն «դեմ» քվերակելն[17] էր, իհարկե, հետո դա ներկայացվեց «պատահականության» փաթեթավորմամբ, բայց Հայաստանի՝ որպես դաշնակցի ու վստահելի գործընկերոջ նկատմամբ վստահության խնդիր պետք է առաջացներ Ռուսաստանում:

Այնուհետև՝ պատերազմում պարտությունը Ռուսաստանի վզին փաթաթելու փաշինյանական համառ ջղաձգումները, որոնց հաջորդեցին Արցախից հայկական զորքի դուրս բերումը, հետո՝ պայմանավորված շրջափակումը: Այնուհետև Արցախի հայաթափումն էր, որի համար փաշինյանական վարչակազմը մեղադրեց բացառապես Ռուսաստանին, մինչդեռ Ադրբեջանին նույնիսկ մեկ դատապարտող խոսք չասվեց: Ավելին, սեպտեմբերի 19-ին Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Լեռնային Ղարաբաղի քաղաքացիական բնակչությանն ուղիղ սպառնալիք չկա»[18]՝ դրանով հզոր խաղաքարտ տալով Ադրբեջանին՝ պաշտպանվելու համար Արցախի դեմ նոր պատերազմ սանձազերծելու և հայաթափման մեղադրանքից:

Պատերազմից ու Արցախի հայաթափումից հետո Հայաստանում ռուսական զորամիավորումների ավելացման հետ միաժամանակ փաշինյանական ռեժիմը շարունակում է հակառուսական վտանգավոր քաղաքականությունը:

2023 թ. մայիսին Հայաստանը ՄԱԿ-ում կողմ քվեարկեց հակառուսական բանաձևին, «որով դատապարտվում է Ռուսաստանի ագրեսիան Ուկրաինայի և Վրաստանի դեմ: Բանաձևին կողմ են քվեարկել Հայաստանը, ինչպես նաև Ռուսաստանի դաշնակից մի շարք երկրներ:

Բանաձևը կոչ է անում փոխհատուցել ռուսական ագրեսիայի հետևանքով հասցված վնասը և պատասխանատվության ենթարկել նրանց, ովքեր մեղավոր են միջազգային իրավունքի նորմերի խախտման մեջ»[19]:

Սա մեզ համար Արցախ արժեցավ, սակայն դրանից էլ դասեր չքաղելով կամ հակառուսականությունը էլ ավելի ընդգծելու համար՝ Հայաստանի խորհրդարանը 2023-ի հոկտեմբերին վավերացրեց Հռոմի ստատուտը, որի վավերացումը ՌԴ-ում մտահոգություններ առաջացրեց և այդ առիթով ՌԴ ԱԳՆ-ն հայտարարեց.

«Հայ գործընկերներին ի սկզբանե հասցվել է Հայաստանի կողմից Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտի վավերացման անընդունելիության մասին դիրքորոշումն այն պայմաններում, երբ այդ կառույցի կողմից Ռուսաստանի բարձրագույն ղեկավարության ձերբակալման օրդերներ են տրվել: Քննարկվել է երկկողմ համաձայնագիր կնքելու՝ Երևանի նախաձեռնությունը, Մոսկվան առաջարկել է փոխզիջումային տարբերակ, որը կարող էր ձեռնտու լինել երկու կողմերին: Ցավոք, այն հաշվի չի առնվել, փոխարենը Հայաստանում քաղաքական որոշում են կայացրել հօգուտ Հռոմի ստատուտի վա-

վերացման: Դա ամենաբացասական հետևանքներն է ունենալու երկկողմ հարաբերությունների վրա»[20]:

Իսկ 2024 թ. մայիսի 7-ին տեղի ունեցած Վլադիմիր Պուտինի երդման արարողությանը Նիկոլ Փաշինյանը հրավիրված չէր:

Այս ամենը խոսում է հայ-ռուսական հարաբերությունների իրական պատկերի մասին, որոնք փչացնելու նախաձեռնությունը Հայաստանի ղեկավարությանն էր, որն ամեն ինչ արեց դրա համար, և ամբողջապես անհիմն ու ավելորդ են փաշինյանական վարչախմբին Հայաստանի առաջին հանրապետության կառավարության հետ համեմատելու ջանքերը, քանզի չլինելով հակառուս և չմիանալով հակառուսական դաշինքին՝ Հայաստանի առաջին հանրապետության կառավարությունը թիկունքից հարված ստացավ հայ բոլշևիկների և Ռուսաստանում անօրինական ճանապարհով իշխանությունը զավթած Լենինի կառավարության կողմից: Լենինը կիսով չափ թաթար (այսօրվա եզրույթով՝ ադրբեջանցի) լինելով՝ նախապատվությունը տվեց թուրքական շահերին, իսկ նրա մերձավոր շրջապատում գտնվող և խորհրդային պետության մեջ բավականին ազդեցիկ դեր ունեցող հայ բոլշևիկները մատը մատին չտվեցին հօգուտ Հայաստանի որևէ որոշում «պոկելու» համար:

Իսկ Փաշինյանն ինքը փչացրեց հարաբերությունները Հայաստան-Թուրքիա սահմանը պաշտպանող և Հայաստանի անվտանգության երաշխավոր հանդիսացող Ռուսաստանի հետ, ինչի ողբերգական հետևանքները զգում ենք մեր մաշկի վրա:

Հայ հասարակական-քաղաքական շրջանակները Հայաստանը ծայրագավառ հայտարարած Փաշինյանին հնարավորինս արագ պետք է հեռացնեն Հայաստանի ղեկից և վերականգնեն հարաբերությունները Ռուսաստանի ու Իրանի հետ, հակառակ դեպքում հետևանքները կարող են անդառնալիորեն ողբերգական լինել:

Ծանոթագրություններ

1. Մելիքյան Վ., Հայ Յեղափոխական Դաշնակցության դերը հայոց պետականության վերականգնման գործում., Հայ Յեղափոխական Դաշնակցության հիմնադրման 115 և 120-ամյակներին նվիրված գիտաժողովի նյութեր., Եր., 2011., էջ 44-45:
2. Սիմոնյան Հր., Հայոց պատմության հիմնահարցեր., Եր., 2000., էջ 328-329:
3. Նույնը, էջ 329:
4. Վրացյան Ս., Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի միջև., Եր., 2022., էջ 23:
5. Նույնը, էջ 24:
6. Սիմոնյան Հր., նշվ., աշխ., էջ 386:
7. Նույնը, էջ 348-349:
8. Նույնը, էջ 386:
9. Նույն տեղում:
10. Նույնը, էջ 387:
11. Նույն տեղում:
12. Նույնը, էջ 388:
13. Վրացյան Ս., նշվ., աշխ., էջ 71:
14. Նույնը, էջ 14:
15. Նույնը, էջ 189:
16. Նույն տեղում:
17. https://armlur.am/911112/ (վերջին դիտումը՝ 19.05.2024)
18. https://www.aravot.am/2023/09/21/1370963/ (վերջին դիտումը՝ 19.05.2024)
19. https://generalnews.am/hy/article/b046c4b9eafc56519618d60e87e2ea66 (վերջին դիտումը՝ 19.05.2024)
20. https://hetq.am/hy/article/160834 (վերջին դիտումը՝ 19.05.2024)

Օգտագործված գրականություն

ա) Գրականություն

1. Հայ Յեղափոխական Դաշնակցության հիմնադրման 115 և 120-ամյակներին նվիրված գիտաժողովի նյութեր., Եր., 2011
2. Սիմոնյան Հր., Հայոց պատմության հիմնահարցեր., Եր., 2000
3. Վրացյան Ս., Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի միջև., Եր., 2022

բ) Համացանցի նյութեր

1. https://armlur.am
2. https://www.aravot.am
3. https://generalnews.am
4. https://hetq.am

Բավ է, որքան ժամանակ վատնեցինք

Դոկտ. Մարի Ռոզ Աբուսեֆյան
Բանաստեղծ, բեմադրիչ, դերասանուհի, հրապարակագիր, անկախ հետազոտող:
Ուսումնասիրությունների շրջանակն ընդգրկում է Հայոց ցեղասպանության, Ազգային Ինքնության անհրաժեշտությունը, թեմաները, ինչպես և հայ ու օտար գրական մեծությունները:
Աբուսեֆյանը բարձրագույն կրթություն ստացել է Երևանում, այժմ բնակվում է Ամերիկայում:

Մարի Ռոզ Աբուսեֆյանին «Դրոշակի» խմբագրությունն առաջարկեց հոդված գրել նվիրված Սփյուռքի հիմնահարցերին:

Տիկին Աբուսեֆյանը, ի մտի ունենալով համազգային խնդիրները, քննության նյութ դարձրեց Հայաստանի ներկա տագնապալի կացությունը՝ հատկապես դրանով պայմանավորելով հայությանը հուզող մնացած բոլոր հարցերի լուծումը:

Շնորհակալ եմ «Դրոշակի» խմբագրությանը ինձ նույնպես ներառելու համար հայության առաջ ծառացած խնդիրների շուրջ մտքերի փոխանակում կազմակերպելու մեջ, թեև խնդիրները գնալով ավելի բարդանում, լեռնանում են մեր առջև, հատկապես վերջին տարիներին՝ առանց լուծումների հանգելու, և մենք դեռ քննարկումներով ենք ժամանակ վատնում:

Որքան էլ սառը դատողությամբ քննարկվող, առաջարկվող հարցերը տարիներ շարունակ թարմացնում ենք նոր միջոցներով ու անվանումներով կլոր սեղանների շուրջ կամ էլեկտրոնային հեռակա ցանցերի վրա, սակայն, ինչպես ցույց է տալիս մեր վիճակը, դրանք մնում են միայն քննարկվող, անփոփոխ, չլուծված, առավել բարդացած վիճակում:

Հարցերի հարցն այն է, թե ներկա աշխարհաքաղաքական, տնտեսական, ներքաղաքական, հասարակական, փոթորկալից, արագընթաց փոփոխությունների մեջ, ուր փոքր ազգերի իրավունքների ոչնչացումը, բացահայտ է, և որին մենք ազգովին ինքնակամորեն մատնվեցինք, ինչպե՞ս ենք կարողանալու փրկվել ընկղմումից միայն քննարկումներով, այն էլ այսօրվա մեր ազգային նեղ տեսլականով:

Մենք ընթանում ենք ոչ միայն ժամանակի և աշխարհաքաղաքական փոփոխությունների հետ ոչ համընթաց, հետադեմ, այլև մեր ձեռնպահությամբ առավել ևս օժանդակում ենք մեր քայքայմանն ու ոչնչացմանը:

Բավ է, որքան իզուր ժամանակ վատնեցինք, հատկապես՝ անցած վեց տարիներին: Մեզ այսօր անհրաժեշտ է տեղաշարժել, ծրագրավորված ոտքի հանել ժողովրդին, նախ՝ մեկընդմիշտ ազատվելու հայրենիքը կործանող ներկա իշխանությունից, որ կարողանանք փրկվել աստիճանական կործանումից և ապա՝ ազգովին կենտրոնանալ մեր վերականգնման, վերամիավորման, առաջընթացի միջոցների վրա:

Նայեք ձեր շուրջը. աշխարհը դարձել է եռացող կաթսա, ուր այլևս բացահայտորեն այրվող, հալչող ժողովուրդները ամենակալ հզորների նույնիսկ ողորմածությանը չեն արժանանում: Բացահայտ ցեղասպանությունը չի կասեցվում, այլ արդարացվում է նույն հզորների կողմից, որոնք ոչնչացման, ավերի, իրենց գործողությունները կոծկելու, ժողովրդին սիրաշահելու, ընտրություններում հաղթելու համար մարդասիրական օգնություններ են ուղարկում իրենց կողմից ոչնչացվողներին, ծայրագույն դեպքում մակերեսայնորեն քննադատելով:

Այս դժոխային ճանապարհը արդեն որերորդ անգամ անցած մեր ժողովուրդը, թվում էր, իր դասը ստացած պիտի լիներ և իր իսկ ոչնչացման գործիքը չդառնար հզորների ձեռքին: Սակայն վերջին տարիների փորձառությունը եկավ՝ հաստատելու, որ մենք ազգովին ոչ միայն քաղաքական մտածողությունից զուրկ ենք ու կույր, այլև մեր ազգային մտածողությունը կենտրոնացած է միանձնյա պաշտամունքի վրա, թեկուզ այդ պաշտվողը հայրենադավ է, նախկին նվաճումները վարկաբեկելով՝ մինչև իսկ երկրի տարածքային կորուստները արդարացնելով, փորձում է պառակտել հայության հարյուրամյա ողնաշարը կազմած կուսակցությունը, բացահայտ կեղծիքը հրամցվում է

որպես իրականություն, մեր այս ողորմելի վիճակին շատ հանգիստ հարմարվելու համար:

Հարմարվելու այնպես, որ այսօր հանգիստ շարունակում ենք հետևել, թե ինչպես է քայքայվում մեր երկիրը մեկ անձի և նրա համախոհների մասնակցությամբ, թե ինչպիսի պատրաստակամությամբ է մեր երկրի ղեկավարի աթոռը զբաղեցնողը կատարում մեզ իսպառ ոչնչացնելու՝ թշնամու հրամանները:

Այսքան տարածքային, մարդկային, մշակութային, բարոյական, մտային, հոգևոր կորուստներից հետո անգամ դեռ չենք սթափվում, չենք միավորվում, ոտքի չենք կանգնում, այլ հանգիստ նստած՝ «Սփյուռքի վերակազմավորման» կամ «պարտությունների հետևանքի» կամ «Հայ դատի» մասին քննարկում ենք կազմակերպում:

Քննարկումներն, անշուշտ, հրաշալի են և օգտակար, երբ հայրենիքիդ կառավարումը հուսալի ձեռքերում է, երբ ծաղկուն տարածքներ նենգաբար չես հանձնել թշնամուն, հազարավոր անհայտ ճակատագրի մատնված տեղահանվածներ չունես, երբ դեռ երկրիդ իշխանությունը թշնամուն ծառայող մի վարձկան բռնապետի ձեռքում չէ, այլ հայրենանվեր մեկի, որը պայքարում է իր երկրի յուրաքանչյուր թիզ հողի համար, որը ոչ թե ոչնչացնում, այլ պահպանում, զարգացնում է ազգային հարստությունները, որի գերագույն նպատակը ոչ թե իր աթոռն է՝ թեկուզ ողջ երկրի ոչնչացման գնով, այլ իր երկրի և հայության ապագան:

Մեր ներազգային կյանքում տիրող այս ապազգային, պառակտված միջավայրում ինչպե՞ս ենք բարելավելու Սփյուռքի վիճակը՝ առանց հայրենիքի ամրության: Չէ՞ որ այսօրվա իրականության մեջ Սփյուռքի առողջ հարատևումը կապված է հայրենիքի ամրության հետ:

Երբ 1918 թ. մեր առաջին անկախ հանրապետությունը ստեղծեցինք, ամբողջովին միայնակ էինք՝ առանց դրսի միջամտության և օգնության: Դեռ անգամ ժամանակակից Սփյուռք գոյություն չուներ, և հյուծված վիճակում ազգովին կարողացանք հաղթանակներ կերտել, երկիր ստեղծել ու առաջադիմել և մեծ շուքով այն հանձնեցինք այսօրվա ցնցոտի իշխանությանը:

1988-ին, երբ ազգովին ոտքի ելանք՝ Արցախը ազատագրելու, կրկին միայնակ էինք և ազատագրեցինք մեր ուժերով՝ մեր առջև կանգնած բոլոր արգելքները հաղթահարելով, մինչև իսկ զանց առնելով մեր անկախացած երկրի մեծագույն չարիք, թրքամետ «լտպ»-ի Արցախն ազատագրելու արգելքները:

30 տարի հետո թրքամետ Արևմուտքը մեզ պարտադրեց այսօրվա ցնցոտուն, մենք կորցրինք ամեն ինչ և մեղադրեցինք բոլորին՝ ռուսներին, աշխարհին, հատկապես՝ նախկիններին ու մինչ այսօր շարունակում ենք մեր մեղադրանքները, մեր կերուխումը՝ չխանգարելով, միայն դրսից, օտարներից սպասելով մեր փրկությունը:



Դեռ քանի՞ անգամ կարելի է հուսախաբվել, կոտորվել, կորցնել ու փրկության հույսը կապել օտարների հետ:

Այս հոգեբանությամբ, մտայնությամբ ինչի՞ մասին խոսենք:

Առաջադրվող հարցերից որ մեկի մասին էլ խոսելիս լինենք, պիտի սկսել հայրենիքից, քանզի նա է մեր գոյության առանցքը, առանց նրա անիմաստ է մեր գոյությունը, և նրա հզորացման հետ են կապված մեր գոյությունն ու հարատևությունը թե՛ ներսում, թե՛ դրսում:

Այսօր աշխարհով մեկ սփռված հայության թիվն է ավելանում և էլ ավելի է ավելանալու, սակայն իրենց ապրած երկրներում հայերն ամենևին էլ տանտեր չեն լինելու:

Երկարամյա փորձառություն ունեցող կազմակերպությունների կողմից ամեն ինչ արվում է՝ միայն եկեղեցին և դպրոցը պահպանելու, նյութապես դրանց կանգունությունն ու երկարակեցությունը ապահովելու, այլ ոչ թե առաջընթացի, ազգային գիտակցության բարձրացման, ազգովին միավորվելու համար:

Սփյուռքի ազգային գիտակցությունը դեռ այսօր էլ միայն եկեղեցիով և դպրոցով է սահմանափակվում այնպես, ինչպես 1897 թ. Պոլսո հայ կյանքի մասին «Մասիս»-ում է ներկայացված. *«Մեր հանրային կեանքը եկեղեցւոյ ու դպրոցին շուրջ կը դառնայ»:*

Մի՞թե այսօր տարբեր է:

Պոլսո հայ կյանքը ներկայացնող ժամանակաշրջանում դեռ ցեղասպանության հետևանք Սփյուռքը գոյություն չուներ, հայությունը, լավ, թե վատ, իր պապենական հողերի վրա էր ապրում նույն մտահոգություններով, ճնշված էր ապրում, բայց օտար չէր զգում իրեն: Հակառակը, իրեն առավել էր դասում հալածողներից և փորձում էր առաջընթաց ապրել, որովհետև շփում ուներ Եվրոպայի հետ, ուներ այնտեղ ուսում առած առաջադեմ մտավորականներ, որոնք երկիր էին վերադառնում, ամեն կերպ աշխատում ձևավորել, առաջադեմ դարձնել և՛ ազգին, և՛ ազգային կյանքը: Դպրոց ավարտողները ոչ միայն տիրապետում էին հայերենին, այլև դարձան հայ գրականությունն ու հայ լեզուն գա-

գաթնակետին հասցնող գրականության, արվեստի հսկաներ: Իսկ այսօր… Այդքան դժվարությամբ պահվող հայ դպրոցն ավարտողը հազիվ է տիրապետում հայերենին: Հայ գիրն ու գրականությունը դարձել են ավելորդ բեռ:

Երկու տարի հետո, 1899 թ. նույն «Մասիս»-ում հայտնի մտավորական Մ. Շամտանճեանը էլ ավելի մեծ մտահոգություն է հայտնել. *«Մեր ազգը բաժան-բաժան է, պառակտում կայ հանրային կեանքին մէջ»:*

Կարծես այս օրերի մասին է խոսքը, այնպես չէ՞:

Եթե պատկերավոր այդ վիճակը փոխադրենք մեր այս օրեր, կտեսնենք, որ 19-րդ դարավերջից մինչև 21-րդ դար անհերևակայելի կորուստներից, փոթորկումներից անցնելով, գազանաբար ոչնչանալով, ազգովին, հողատարածքով, լեզվով, մտածելակերպով բաժան-բաժան լինելով, ազգային հատկանիշները պահելու, զարգացնելու բնազդային և գիտակցական ձգտումով ոտքի կանգնելով, վերստին անկախ երկիր ստեղծելով հանդերձ՝ այսօր էլ դեռ կքում ենք նույն բեռան տակ՝ այս ամենին ավելացրած այսօրվա մեր հայրենիքի մասնատման հարցում մեր ցուցաբերած անտարբերությունը:

Այսօր էլ նույն ոգևորությամբ մեր ազգը բաժան-բաժան է եղած, մասնատված թե՛ ըստ կուսակցությունների և թե՛ կուսակցություններից դուրս:

Այսօր էլ որոշ կուսակցություններ իրենց դիմագիծը թաքցնում են՝ հավատարմորեն ծառայելով ներկա հայադավ իշխանությանը, միշտ արդարանալով «Հայրենիքին ենք ծառայում, անձը կարևոր չէ» կարգախոսով: Իսկ երբ այդ անձը հայրենիքդ է կործանում… Միևնույն է, այդ դեպքում էլ կարևոր չէ:

Այսպես՝ Սփյուռքը իր գոյության սկզբից մասնատեցին. հետևանքը եղավ այսօրվա պատկերը:

Սփյուռքի անգիջում մամուլն անգամ զիջեց իր սկզբունքը, չարթնացրեց ժողովրդին, մինչ օրս էլ իրականությունը պարզաբանող, կեղծիքը բացահայտող գրությունները տպվում են կամ որպես տեսակետներ, կամ չեն տպվում: Երբ էր կուսակցական մամուլը այսքան կողմնապահ եղել, ինչպես այս անցնող ցավալի տարիների ընթացքում եղավ:

Այսօր թշնամին ինքն է բացահայտում իր կնքած գործարքը մեր երկրի ղեկավարի հետ, իսկ մեր մամուլը դեռ լռում է, վստահաբար նա էլ ժողովրդի նման և՛ դրսի, և՛ ներսի ճնշման տակ է: Թշնամու մամուլից ավելի շատ տեղեկություն ենք ստանում մեր երկրի և մեր ճակատագրի մասին, քան մեր կողմնապահ մամուլից: Մինչդեռ կուսակցական մամուլի մեծագույն առաքելությունը եղել և մնում է ժողովրդին արթնացնելը, նրա հետ անկեղծ լինելը:

Եվ այսպես՝ հայության պառակտվածությունն այսօր անժխտելի իրականություն է, որը մեզ կանգնեցրեց ոչ միայն մարդկային, այլև տարածքային հսկայական կորուստների, տեղահանության, նոր արտագաղթի առջև:

Անժխտելի իրականություն է նաև, որ մենք *«բանիւ կեցցէ»* -ից համատարած դարձել ենք *«հացիւ կեցցէ»-ի* ազգ և անձայն հաշտվում ենք այն ամենին, ինչը մեզ մատուցում են, նույնիսկ մեր կործանմանը, միայն թե հաց ունենանք: Այսօրվա մեր ժողովրդի պատկերավոր արտահայտությունն են Ա. Խնկոյանի առակի տողերը՝ «միայն կաղին ունենամ, ուտեմ-պառկեմ, գիրանամ»: Տարածքը կարևոր չէ, երկրիդ ղեկավարը թշնամիդ է, կարևոր չէ:

109 տարի է անցել մեր ազգի դեմ գործված առաջին մեծ ցեղասպանությունից, և մենք Հայ դատ ունենալով հանդերձ՝ չկարողացանք հատուցում պահանջել թշնամուց, չկարողացանք դատել ցեղասպանին և բոլոր այն երկրներին, որոնք մաս կազմեցին մեր ոչնչացման ծրագրին: Հակառակը, բավարարվեցինք տասնյակ երկրների կողմից ցեղասպանության փաստի ընդունմամբ և լռեցինք, երբ նույն թշնամին մեր հայրենի երկրում համախոհներ գտնելով՝ երկրորդ ցեղասպանության ենթարկեց մեզ նույն սկզբունքով, ինչ 109 տարի առաջ էր՝ տեղահանմամբ, տարածքների բռնագրավմամբ, վայրագ կոտորածով:

Այսօր աշխարհը փոթորկված հետևում է հրեաների կողմից պաղեստինցիների բացահայտ ցեղասպանությանը, որն արդարացնում են երկրորդ անգամ ցեղասպանության չենթարկվելու պատճառաբանությամբ:

Հրեաները իրենց դատը շահելու համար օտար երկրների հավաստիացումը ստանալու, մասնավոր կազմակերպության կարիք չունեն, նրանք ազգովին են մասնակցում իրենց դատին և ամենուրեք մեկ կլարգախոսով են գործում. թույլ չտալ որևէ հրեայի քիթը արյունի, որքան կարելի է հողատարածք գրավել, բազմանալ, հզորանալ, տիրել: Որովհետև տիրելով է երկիրը հզորանում, այլ ոչ թե տարածքներ հանձնելով:

Ո՞ւր էինք մենք, երբ նույն հրեական զենքերն էին օգտագործում մեր երկրորդ ցեղասպանությունը իրագործելիս: Բոլոր վկայությունները ունենալով հանդերձ՝ ինչո՞ւ չկարողացանք աշխարհը ոտքի հանել, ահազանգել, որ ցեղասպանության ենթարկված մի ազգ ինքն է օգնում թշնամուն՝ ոչնչացնելու ցեղասպանության ենթարկվող մեկ այլ ազգի:

Որ հայության դեմ երկրորդ ցեղասպանությունն է գործում թուրքը:

Որ արցախահայությունը ենթարկվեց նույն գազանություններին, տեղահանություններին, ծերեր ու երիտասարդներ մորթվեցին, շարունակվում է տարածքների բռնագրավումը…

Դեռ մեկ տարի առաջ պաղեստինցիները իրենց կործանման հարցում արհամարհված, մոռացված էին աշխարհի կողմից: Այսօր կարողացան աշխարհի ուշադրությունը շահել, բոլոր ազգերին ոտքի հանել ի պաշտպանություն իրենց: Աշխարհը ականատես է, թե ինչպես են կոտորվում, փոշիանում, սակայն իրենց հողը չեն զիջում:

Մենք պաղեստինցիների չափ էլ չեղանք: Բոլոր առավելությունները ունենալով հանդերձ՝ լռեցինք ու առանց ծպտունի, մեր համաձայնությամբ հսկայական տարածքները նվիրեցինք թշնամուն, մեկ օրվա մեջ էլ տեղահանվեցինք:

Ինչո՞ւ լռեցինք…

Որովհետև մեր ժողովուրդը մի թրքածին ճիվաղի էր վստահել և մինչև հիմա վստահում է իր ճակատագիրը:

Ինչո՞ւ պարտվեցինք…

Հիշեցնեմ՝ մեր բանակի հրամանատարությունը գտնվում էր հայադավ ղեկավարների ձեռքին, որոնք հրամանատարական կենտրոնը դարձրել էին փողոցային անցուդարձի կենտրոն, ուր մուտք էին գործում երկրի գլխավոր «հրամանատարի» կողմից ուղարկված հատուկ ոչնչություններ՝ պարտադրելով իրենց հրամանները: Ուր արգելվում էր օգտագործել մեր զենքերը, որպեսզի նախկիններին մեղադրեին զենք չունենալու համար: Այնինչ թշնամին իր հեշտ հաղթանակը պանծացնելու համար հպարտորեն ցուցադրում էր նախկինների կուտակած և իր բռնագրաված 6 միլիարդ արժողությամբ զենքը:

Մենք ժպտադեմ սուրճ էինք խմում ու հաղթելու ստով սքողում պատերազմը սկսելուց 2 օր առաջ թշնամու հետ պայմանավորված Շուշիի հանձնումը: Դուշամբեում կայացած այդ դավադիր համաձայնությունը Ալիևը հայության համար վերջերս բարձրաձայնեց:

Մենք ճանապարհներից, ճահիճներից, անտառներից մեր վերջին 5 հազարից ավելի հերոս զավակների անգթորեն լքված մարմիններն էինք հավաքում Եռաբլուրը մեծացնելով և առանց ծպտունի՝ ճանապարհ հարթում հայադավ ղեկավարի առաջ՝ մեր զավակների ինքնազոհաբերումով ազատագրված մեր երկիրը թշնամուն նվիրելու՝ այն էլ հայտարարելով որպես ադրբեջանական տարածք:

Այսքանից հետո դեռ մեղադրում ենք աշխարհին իր լռության համար: Աշխարհը հո մեզ նման հիմար չէ, բոլորը տեղյակ են, թե ինչ է կատարվում մեր երկրում: Եթե մենք ենք հանձնում, ինքը ինչո՞ւ պիտի միջամտի:

Մենք առ այսօր լռում ենք, որովհետև ազգովին մեղավոր, պատասխանատու ենք այս թրքամետ իշխանությանը հլու-հնազանդ ենթարկվելու, երկրորդ անգամ իրենց աթոռ տրամադրելու համար:

Այսքանից հետո որպես ազգ, արդյո՞ք իրավունք ունենք մեր բարելավումների մասին քննարկումներ անելու, երբ թշնամին մեր երկրի ղեկավարի աթոռին է բազմած, երբ դեռ մեր անտարբերությամբ երկարակեցություն ենք շնորհում այդ խեղկատակին, նպաստում մեր կործանմանը:

Թող ներեն հարցադրողները, սակայն ինձ համար անկարելի է քննարկել որևէ հարց, երբ հայրենիքդ է ահավոր վտանգված, երբ այն գտնվում է բացահայտ դավաճանների ձեռքում:

Մենք չենք կարող այլևս այսպես գոյատևել. կամ պիտի սթափվենք, համախմբվենք ազգովին, կազմակերպված ոտքի հանենք ոչ միայն երկրում ապրող ժողովրդին, այլև համայն հայությանը, կամ պիտի շարունակենք հեզորեն ընդունել մեր կործանումը:

Բավ է, որքան Սփյուռքի հայությունը պառակտված, ձայնազուրկ և իրավազուրկ մնաց՝ միայն որպես անվերջանալի դրամական օգնության հաստատություն դառնալով երկրի ղեկավարների և ժողովրդի համար:

Մենք՝ սփյուռքահայերս, նույնքան իրավունքի տեր ենք մեր երկրում, որքան տեղի ժողովուրդը, որովհետև մեր երկիրը համայն հայությանն է պատկանում, և ավելի շատ հայություն ունենք դրսում, քան հայադավ իշխանության ներքո հնազանդորեն ապրող մեր երկրում:

Ուստի ժամանակն է, որ ոտքի կանգնի սփյուռքահայությունն ու ամբողջապես միանա հայրենիքը ազգադավ իշխանությունից ազատագրելու գործին: Կարևոր չեն այլևս մեր սուտ գաղափարական բաժանումները, քանզի փաստվեց, որ մենք այլևս գաղափարի համար պայքարողներ չենք, այլապես երբեք թույլ չէինք տա, որ մի ծախու ոչնչություն իր գրպանի մանրադրամը դարձնի մեր հայրենիքը:

Բավ է սադրանքներով, պատերազմով ժողովրդին վախեցնելով՝ փոքրացնի մեր երկիրը: Երեկ Արցախն էր, հերթը հասել է Տավուշին, Տիգրանակերտին, Արծվաշենին, Վերին Ոսկեպարին, շուտով կլսեք նաև այս ամենի մասին: Թշնամու պատվերը հեզորեն կատարելով, աստիճանաբար ճանապարհներ, գազատարներ հանձնելով, ատոմային էլեկտրակայաններ փակելով՝ խեղդելու, ոչնչացնելու է հայությանը:

Մենք մեր անտարբերությամբ վեց ցավալի, անուղղելի տարիներ ենք արդեն կորցրել, և անընդունելին, ամենավիրավորականը այս ոչնչությանը, թուրքին հնազանդորեն ծառայող այս անուղեղ թշվառականին դեռ որպես երկրի ղեկավար ընդունելն է:

Հանգիստ նստելու բոլոր արդարացումներն այլևս աղբաման են նետված:

Քանի որ «Դրօշակի» հետ է այս քննարկումը, հիշեցնեմ, որ մեր ազգի ամենահուսահատ, ծանր պահին այն եղել է մեր ժողովրդի ազատության զարթոնքի իրական դրոշակակիրը և ինչպես 1890-ի մանիֆեստով արթնացրեց, համախմբեց հայությանը՝ իր իրավունքներին, իր ունեցվածքին, իր հողին, հայ-

րենիքին տեր կանգնելու, այնպես էլ այսօր պարտավոր է նույն հավատով համախմբել ողջ հայությանը՝ առանց կուսակցական պատկանելության, առանց իրար դեմ ոխակալության, միավորելով բոլորին լրջորեն կազմակերպված ծրագրով՝ առանց օտար երկրների միջամտության, ազդեցության, օգնության, իմացության, թեկուզ ուշացումով փրկելու այն, ինչը դեռ մեր ձեռքում է:

Միանանք և փրկենք դեռ մեր ոտքերի տակ մնացած փոքրիկ հողակտորը, որը մեր դարավոր պատմության անմար հերոսների և մեր մեծությունների շաղախով է պարուրված:

Փրկենք, որ հետագա սերունդների անարգանքին չարժանանանք:

Փրկենք, որ մեր զավակները, իրենց տանտեր զգալով, ապրեն ու բազմանան:

Փրկենք մեր երկիրը այս ազգադավ իշխանությունից և նրա ամենավերջին թափթփուկներից, որ կրկին ամուր, վստահելի, անընկճելի բանակ ստեղծենք:

Փրկենք, քանի դեռ չեն ոչնչացվել մեր ստեղծած, տաժանակիր զրկանքներով ձեռք բերված ազգային, գիտական, հետազոտական, երաժշտական, գեղարվեստի, ուսումնական հաստատությունները, պատմամշակութային արժեքները, մեր պատմությունը, մեր գիրն ու գրականությունը, մեր երգն ու երաժշտությունը, մեր հայկական ուսումնական հաստատություններն ու դասագրքերը, մեր դրոշն ու մեր օրհներգը, մեր ազգային ինքնությունը:

Ինչպե՞ս ենք լռում ու հանդուրժում այս ամենի ոչնչացումը:

Չէ՞ որ հայերի ցեղասպանությունը իրագործողներին 1920 թ. սկսած, հետագայում մինչև անգամ ժխտողների դատաստանը՝ 1975-1985 թթ. Բեռլինից, Իտալիայից, Հարավսլավիայից մինչև Ֆրանսիա, Ավստրիա, Շվեյցարիա, Իսպանիա, Վատիկան, Նյու Յորք, Դանիա, մինչև Լիսաբոն, մինչև Կանադա, Լոս Անջելես, մեր ազատատենչ մարտիկները իրենց ձեռքերով իրագործեցին, ինքնակամ իրենց զոհաբերեցին, բանտեր ընկան, մինչև իսկ իրենք իրենց պայթեցրին հանուն մեր մեծագույն դատի: Իսկ այսօր մեր երկրի աթոռին է բազմել մեր հայրենիքի մեծագույն թշնամին, թուրքը:

Մի՞թե չենք դատելու նրան: Ինչի՞ն ենք սպասում:

Միասնաբար ոտքի ելնենք, ինչպես ինքնակամ ոտքի ելան մեր հերոսները, փրկենք մեր հողը այս թրքածին իշխանության յուրաքանչյուր անդամից:

Փրկենք այն ամենը, որը ժողովուրդները դարերի ընթացքում ստեղծում, հավաքագրում ու պահպանում են իրենց կյանք տված հողում, որը հայրենի հող, հայրենիք է կոչվում: ■

Որտեղ են ապրում հակազգային և հակապետական մանրէները

Մանվել Մկրտչյան
Հրապարակախոս

Կենսաբաններն ասում են, որ ցանկացած կենդանի օրգանիզմում ամեն ակնթարթ տեղի է ունենում «դրական և բացասական» մանրէների պատերազմ: Այս երկու տիպի մանրէներն էլ խիստ անհրաժեշտ են օրգանիզմին, ունեն իրենց հույժ կենսական գործառույթները: Դա օրգանիզմի ապրելու կերպն է: Մանրէաբանները, ինչպես ցույց տվեց «կորոնավիրուսի մղձավանջային դարաշրջանը», ցավալիորեն շատ հարցերի պատասխաններ չունեն: Բնությունը գիտի՝ ինչպես հավասարակշռել և ապա օգտագործել դրական և ոչ դրական մանրէները ի շահ օրգանիզմի: Հասարակության և ազգի կյանքում այդպես չէ, դրանց դրսևորվելու, զարգանալու օրինաչափությունները այլ են: Միամտություն է կարծել, թե մեր ու մեր շրջապատի մարդկանց վարքագծերը պատահական կամ տարերային բաներ են: Ո՛չ, ամենևին էլ՝ ոչ: Այդ վարքագծերը ունեն իրենց ծագումը, ինչպես նաև տարբեր ձևերով ներդրված, այսպես կոչված, «մտածողության և վարքային անտեսանելի ծրագրերը»: Միջավայրը, ընտանիքը, հանրությունը, դպրոցը, համալսարանը, աշխատավայրը այս կամ այն կերպ ստեղծում ու զարգացնում են այդ լավ կամ վատ «ծրագիրը»: Օրինակ՝ ընտանիքում երեխաներից մեկը նրբանկատ, հասկացող, հոգատար զավակ է, մյուսը՝ էգոիստ, քմահաճ ու դաժան երեխա: Ծնողները ուզում են հասկանալ, թե դա ինչպե՞ս է տեղի ունեցել: Խնամքը նույնն է եղել, դաստիարակությունը՝ ևս, բայց ինչո՞ւ են արդյունքները այդքան տարբեր: Սա դժվար վերծանելի բան է: Իզուր չէր գերմանացի փիլիսոփա Արթուր Շոպենհաուերն ասում. «**Գտնվելով նույնանման հանգամանքներում՝ մարդիկ միևնույն է, ապրում են տարբեր աշխարհներում»:** Մեր միտքը ևս, ասես, խցանվում է, երբ տեսնում ենք, թե ինչպես հասարակության մի ստվար զանգված, ազգի, պետության համար այսքան օրհասական պահի դրսևորում է անպատասխանատու և ողորմելի վարքագիծ, քաղաքական կուրություն: Գանք փոքր-ինչ հեռվից. դավաճանների ու դավաճանության նկարագրությունների հարցում մարդիկ սովորաբար ունեն գրքերից ու ֆիլմերից փոխանցված կաղապարված պատկերացումներ: «Տվյալ սրիկան վախից կամ անձնական շահից ելնելով՝ վաճառեց իրեն, իր խիղճը և սկսեց ծառայել թշնամուն կամ էլ մի շատ վատ նպատակի»: Իրական կյանքում դավաճանության և ուրացումի ձևերը անասելի շատ են, բազմազան: Դրանք երբեմն տեսանելի են, երբեմն էլ արտահայտվում են խիստ խաբուսիկ ձևերով: Առանձնապես հարկ չկա խոսելու այն մասին, թե ինչ հոգեբանական ծանր ցնցում ապրեց մեր հանրությունը պատերազմում

պարտվելուց հետո: Եվ անձի, և՛ հասարակության կյանքում այդ ցնցումը բերեց բարոյահոգեբանական խոր տեղատվությունների. բոլոր առումներով: Անկարելի բան է, որ անհատի հոգեկերտվածքում ոչնչից կամ, ինչպես ասում են, ոչ մի տեղից ժամերի և օրերի ընթացքում արմատական փոփոխություններ ի հայտ գան, ուղղակի սա այն դեպքն է, երբ ակտիվանում են հատկապես այն որակները, այն մանրէները, որոնց սաղմերը արդեն կային մարդու ներաշխարհում: Բժիշկները կվկայեն՝ հիվանդության մանրէները մինչև դրսևորվելը արդեն ապրում են օրգանիզմում, դրանց արտահայտման միջավայրը բավարար չափով պարարտ չէ: Դրա վառ օրինակը քաղցկեղն է: Հասարակության կյանքում սրանք նույնիսկ կարող են պատմական արմատներ ունենալ: Մեր դեպքում, երբ 44-օրյա պատերազմից հետո համազգային նիհիլիզմը լայն ճակատով սկսեց իր գրոհը, սոցիալական ու մարդկային այն խմբերը, որոնք թույլ ու վախկոտ էին, արագ ընկրկեցին պարտության դեմ: Պարտված ու նոր աղետներին դեմ առած առողջ և նորմալ անհատը սովորաբար սկսում է հասկանալ ու գիտակցել կատարվածի պատճառները, իր և այլոց մեղքի բաժինը և փորձում է նախանշել իր առաջիկա քայլերն արդեն նոր իրադրության պայմաններում: Իսկ թույլ և վախկոտ տեսակը անում է ճիշտ սրա հակառակը: Նա մեղադրում է ուրիշներն, նույնիսկ «վեհացնում» իր

թշնամուն: Սա այն է, ինչ անում են մեր երկրի գլխավոր խամաճիկը և ՔՊ-ի պնակալեզվները: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է սկսել ոգով և ազգային ինքնության զգացողությամբ տկար մարդկային խմբերի զորաշարժ: Այս խմբերը ակամայից դառնում են «բարիկադներ» սեփական ստորությունները քողարկելու, վերաբաշխելու համար: Ուշադիր լինելու դեպքում կնկատենք այն ընդհանրությունը, որն առկա է պարտվողականության և դավաճանության հակում ունեցող մարդկանց մոտ: Դրանց միանգամից դավաճանություն չենք անվանում, բայց հենց դրանք են երևույթի մանրէները: Նախ՝ այս տեսակը առանձնանում է ցածր ինտելեկտով, վախկոտությամբ և ծախվելու բացահայտ և քողարկված ձգտումներով: Գերմանացի մեծ հոգեբան Էրիխ Ֆրոմը առանձնացրեց «բացասական կողմնորոշում» ունեցող մի քանի տեսակ և տվեց դրանց ճշգրիտ նկարագիրը: Առաջին տեսակը խնամակալություն և ուժեղ ձեռքի կարոտ տեսակն է: Սա ասում է. «**Ես ոչինչ որոշող չեմ, տվեք իմ կերը և ինձ տիրություն արեք...**»: Մեզանում սրա հետևորդը շատ ստվար զանգված է: Հաջորդը «շահագործողների» բավականին ուժեղ և ցինիկ տեսակն է: Սա ինքնուրույն ոչինչ չի ստեղծում, առանձնանում է ուրիշներին շահագործելու, նրանց հաշվին հարստանալու և բարգավաճելու գիշատչական հմտությամբ, կարողանում է ջրի երեսին մնալ բոլոր իշխանությունների օրոք: Թվով սրանք շատ չեն, բայց ազդեցիկ են իրենց գործնական ու ֆինանսական հնարավորություններով: Բացասական կողմնորոշմամբ մարդկանց երրորդ խումբը, ըստ Ֆրոմի, «շուկայական» տեսակն է: Սրա փիլիսոփայությունն էլ այն է, որ «**Աշխարհում ամեն բան ենթակա է վաճառքի: Ես կգնեմ ամեն ինչ և կվաճառվեմ ինքս, եթե լավ գին տան...**»: Վերջինն էլ «կուտակող» տեսակն է: Մեծ տարածում ունեցող այս տեսակն էլ ասում է. «**Քոնը՝ քեզ, իմը՝ ինձ**», ինչպես ասում են ռուսները. **«Моя хата с краю» (Իմ խրճիթը կողք է ընկած):** Մարդկային այս խումբը սևեռված է զուտ իր անձնական շահի վրա: Նրա անձից առանձնահատուկ ստորություններ չպետք է սպասել, բայց և նա պատրաստ չէ որևէ զոհաբերության: Կրկնում ենք, սրանք «բացասական կողմնորոշում» ունեցող տեսակներն էին, որոնք Է. Ֆրոմի դիտարկումներով՝ կազմում են հասարակության մոտ 70-75 %: Իհարկե, նշված տեսակները առաջին հերթին արտացոլում են հասարակության հատկապես սոցիալական վարքագծի պատկերը: Այս վարքագծերը ազգային և պետական մտածողության ներկապնակի մեջ կարող են որոշակի պահերի ճակատագրական դեր խաղալ, ինչի ականատեսը եղանք վերջին տարիների իրադարձությունների ժամանակ: Եթե «շուկայական կամ խնամակալության կարոտ» տեսակին, օրինակ, ասես, որ քո պահվածքից դավաճանության հոտ է փչում, նա դա չի հասկանա, չի ընդունի: Նույնն է նաև մյուս երկու տեսակի դեպքում: Այս բոլոր վարքային կոնֆիգուրացիաները բազմապիսի նրբերանգներ ունեն և կարող են արտաքուստ հեռու թվալ ազգուրացությունից և պետական դավաճանությունից: Օրինակ՝ ինչպիսի՞ն է հայրենիքը լքող մարդու վարքագիծը: Վերջինս իր հեռանալը կամ փախուստը արդարացնելու համար սկսում է աջ ու ձախ փնովել ու ծաղրել պետությունն ու հայրենիքը, անգամ ամենասուրբ բաները, որպեսզի շրջապատի աչքին իբրև թե հասկանալի դարձնի իր հեռանալու պատճառները: Նրա ընկալումներում շահամոլությունը, ծախվածությունը կամ մորթապաշտությունը մերժելի բաներ չեն, այլ հակառակը, ապրելու ճիշտ կերպ: Այդ իրեն հարգող, երկրի հարցում պատասխանատու մարդուն է թվում, թե դրանք վտանգավոր և նողկալի

արարքներ են: Նման դեպքերում արարքի սոցիալական մոտիվացիան մի կողմ է հրում մարդու պետական և իրավական պատասխանատվության զգացումը և դառնում է գերիշխող: Մարդու ակնհայտ հակաիրավական արարքը կարող է դառնալ միագամայն ճիշտ և ընդունելի տարբերակ, իսկ շրջապատն էլ նեղություն չի տա իրեն՝ հասկանալու, որ դա հասարակական և պետական կյանքը քայքայելու ճանապարհ է: Այդպես էլ ծայրահեղ կոմֆորմիզմը, ընտրակեղծարարությունը, կաշառակերությունը և էլի շատ խայտառակ բաներ չեն գիտակցվում իբրև մերժելի արարքներ: Մեր «պետականազուրկ» պատմությունը այդպիսի օրինակներ շատ գիտի: Պատմում են, որ 16-րդ դարում մի ֆրանսիացի ճանապարհորդ մահմեդական Մերձավոր Արևելքում շրջելուց հետո եկել է Հայաստան: Նրան հիացրել է մեր երկիրը: Իր հուշերում ճանապարհորդը հետագայում գովասանքի խոսքեր է գրել մարդասեր ու աշխատասեր մեր ժողովրդի, նրա առատ մառանների և էլի շատ լավ բաների մասին: Նրան նաև զարմացրել է հարգանքն ու պատկառանքը տան մեծերի, հատկապես՝ կանանց հանդեպ: Սակայն ճանապարհորդին տարակուսելի է թվացել մեկ ուրիշ բան. «**Այն, ինչ արգահատելի ու մերժելի է ֆրանսիական իրականության մեջ, այստեղ շրջված է: Անօրեն, գող, ավազակ ու թալանչի մարդկանց այստեղ համարում են հնարամիտ, իրենց ընտանիքը լավ պահող շնորհքով մարդ և նրանց ակնածանքով են վերաբերվում...»**,- գրել է նա: Ո՞վ կարող է ասել, թե սա դավաճանության տեսակ չէ: Անարդարություն սփռելով շուրջդ՝ ցավ ես պատճառում քո ազգակիցներին և պառակտում ազգային ու հասարակական համերաշխությունը, ինչը որ հավասարազոր է թշնամու ջրաղացին ջուր լցնելուն: Պատահական չէ, որ 2018 թ. իշխանազավթումից հետո թրքահպատակ խամաճիկները կարողացան այդքան լավ խաղարկել հակակոռուպցիոն խաղաքարտը, որովհետև մեզանում սոցիալական և ազգուրացության կշեռքը, որպես կանոն, կշռում է հօգուտ սոցիալականի: Տարիներ առաջ նկարահանում էինք մեր տաղանդավոր պատմաբան, Խորհրդային Հայաստանի արտգործնախարար Ջոն Կիրակոսյանի մասին վավերագրական մի ֆիլմ, որտեղ իր հուշերն էր պատմելու Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Ալեքսան Մատվեյիչ Կիրակոսյանը, որը Ջոնի մտերիմ ընկերն էր եղել: Նկարահանումը ավարտեցինք, անցանք մտերմիկ զրույցի: Անչափ հետաքրքիր և բանիմաց մարդ էր, հիանալի զրուցակից, փայլուն գիտեր Հայաստանը: Խիստ դառնացած էր մեր բարձրաստիճան չինովնիկների ագահ ու անգրագետ վարքից: Սկսեց ցավով խոսել. «**Ինչ է, մենք չգիտեինք, որ Դիլիջանում շատ անտառներ կան, Սևանում՝ սիգ ու իշխան, ինչքան հարուստ ընդերք ունենք... Գիտեինք, էն էլ ոնց գիտեինք, բայց մենք մեր երկրի տերն էինք, նրա պահապանը: Իսկ տերը չի կարող իր տունը թալանել, եթե թալանեց, նա թշնամի է կամ դավաճան»:** Այնս զարմանալու բան

չի մնացել, որովհետև ականատեսն ենք շահամոլ ստրուկներով շրջապատված խամաճիկի խելագար արարքներին: Այսքան պիղծ ու դավաճանական քայլերից հետո զարմանալի է, որ «քաղպայմանագիր» անունով հոտը, այդուհանդերձ, ցաքուցրիվ չի լինում: Հետաքրքիր է՝ ինչու: 80-ական թվականների կեսերին Գիտությունների ազգային ակադեմիայի արվեստի ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ռուբեն Զարյանը, հիրավի, մի խորագիտակ մտավորական, ինստիտուտի տարեժողովից հետո այլայլված՝ մտերիմների ներկայությամբ անկեղծացել է. «**Սուտ է, թե մարդիկ գաղափարներին ու սկզբունքներին են ծառայում, Հայաստանում մարդիկ մարդկանց են ծառայում....»:** Ու քանի որ խոսեցինք գիտնականների ու մտավորականների մասին, ինչպես կարող ենք շրջանցել օրը ցերեկով հայագիտությունը ոչնչացնելուն ուղղված ՀՀ կառավարության որոշումները և մտավորականության լռությունը: Տգետ ու սրիկա մարդկանց մի խումբ ձեռքը բարձրացրել է մեր մեծ արժեքներից մեկի՝ հայագիտության վրա: Հիմա ո՞վ կասի՝ դավաճանը միայն կեղտոտ որոշումներ կայացնողն է, թե՞ նաև նրանք են, ովքեր իրենց լռությամբ դարձել են այս այլանդակության անուղղակի մասնակիցները: Հայոց երկրում աղետը չոքել է բոլորի դռանը, ազգի լինելիության հարց է լուծվում, իսկ մտավորականն ասում է. «**Ես քաղաքականությամբ չեմ զբաղվում, ես գիտնական եմ, արվեստագետ....»:** Սա նույնն է, եթե մեկի տունը հրդեհվում է, կրակի լեզուները մոլեգնած տուն են մտնում և ուր որ է կայրեն զավակներին, իսկ տան տերն ասում է. «**Ինչ կարող եմ անել, սա հրշեջների գործն է...»:** Սա նշանակում է, որ նա տան տերը չէ, հայտնի չէ՝ ո՞վ է, բայց տերը չէ: Սա նույն «քաղաքականությամբ չզբաղվողի» ճամար-

տակությունն է: Դպրոցի տնօրենը 7-րդ դասարանի պատմության դասագիրքը դնում է ուսուցչի թևի տակ ու նրան տառացիորեն «քշում» դասարան՝ աշակերտների հայեցի մտածողությունը խեղելու համար: Ուսուցիչը դասագիրքը չի շպրտում տվողի դեմքին ու ասում. **«Ես հայ կրթող ուսուցիչ եմ, այլ ոչ թե կեղծիքի և թուրքի սպասավոր...»:** Ոստիկանը չի ասում. **«Ձեր կեղտոտ և հակաօրինական հրամանները ձեզ պահեք, ես իմ հասարակության կարգ ու կանոնի պատասխանատուն եմ»:** Ստանում է բարձր աշխատավարձը, հետո՝ ճոխ պարգևավճարը ու սկսում ընդդիմադիրներին և նորմալ մարդկանց հալածելու իր սև գործը: Համաձայնեք, սա միայն առաջին հայացքից է շահամոլություն: Իսկ հայ բարձրաստիճան զինվորականության այսօրվա վարքագիծը ուղղակի տարակուսանք է առաջացնում: Ո՞վ գիտի, ինչո՞ւ է այդքան «խորիմաստ» կերպով լռում ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբը: Քաղաքապետարանի, թաղապետարանների, մարզպետարանների ողորմելի չինովնիկներն այլևս հարցեր չեն տալիս՝ ինչ են անում և ինչու: Մի նեղացրեք նրանց, նրանք բոլորը «տուն են պահում», հետո ի՞նչ, որ այլևս քարտեզի վրա Արցախ չկա: «Դե հիմա, այդպես ստացվեց», — ցինիկաբար զառանցում են նրանք: Իրենց «տուն պահողի» ճարպկությունը չէ՞ր նաև Արցախը կորցնելու պատճառներից մեկը: Ի՞նչ անուն տանք այս ամենին՝ վախկոտությո՞ւն, զգուշությո՞ւն, լոյալությո՞ւն, թե՞ մեկ այլ բան, դրանից իմաստը չի փոխվում: Բայց փաստ է, որ թրքահպատակ խամաճիկներն իրենց կեղտոտ գործերն առաջ են տանում և արդեն հասել են Հայոց ցեղասպանության ուրացմանը: Հիմա ո՞վ կարող է ասել, թե այդ վախկոտությունն ու լոյալությունը մաքուր դավաճանություն չեն: Անցած դարի սկզբներին, երբ ՀՅ Դաշնակցության բյուրոն որոշում կայացրեց սկսել արևմտահայությանը արթնացնելու, լուսավորելու, կազմակերպելու և զինական պայքարի տանելու ծանր գործը, գործիչներից շատերը բախվեցին ազգի այս որակներին: Արամն ու Ռուբենը սրա մասին խոսել են բազմիցս: Ռուբեն Տեր-Մինասյանն իր հուշերում մոտավորապես այսպես է գրում. **«Խոհեմությունը ու զգուշավորությունն, ասես, մի դիմակ լինեին, որի տակ գյուղացիները թաքցնում էին իրենց ողորմելիությունը ու վախկոտությունը և դրանով վարակում մյուսներին»:** Պատկերացնո՞ւմ եք, թե ազգուրացության ի՞նչ ծավալներ կարող էին լինել Ռուսաստանում, եթե հենց մեր օրերում պետական իշխանությունը և հասարակությունը ըմբռնող, ներողամիտ և լոյալ գտնվեին այլախոհների, արտիստների և զանազան ուլտրա-լիբերալների հանդեպ: Ռուսաստանում լավ գիտեն, թե ինչի կարող են հանգեցնել այդ լոյալությունը և ներողամտությունը: Նրանք լավ են հիշում Ելցին-չուբայսական ամոթալի տարիները, երբ տնտեսապես և քաղաքականապես հզոր գերտերությունը դարձել էր լիակատար փալաս Արևմուտքի ոտքերի տակ: Ռուսները այևս մտադիր չեն կրկնել նույն սխալները: Ո՞րն է մեր հետևությունը: Երբ աշխարհում այլևս չկան խաղի կանոններ, երբ ազգերն ու պետությունները միմյանց նայում են իբրև «ռեսուրս-կերակուրի», ինչպե՞ս կարելի է ներողամտության անվան տակ հանդուրժել ազգուրացներին ու բուծել տարատեսակ դավաճանների: Ինքնահարգանքը և արժանապատվության զգացումը լոկ բառեր չեն, դրանք ցանկացած ազգի ոտքերի տակի հողն են: Ինքնահարգանքն ու արժանապատվությունը հայրենիքի և պետության ողնաշարն են: Չկան այդ հողն ու ողնաշարը, չկա և ազգը: Եթե սա չգիտակցվի, ապա ազգովին համալրելու ենք տկարամիտ ցեղերի ցանկը: Եվ այդ հարցում առաջինը մեզ զարհուրելի ծառայություն կմատուցեն հատկապես ազգուրացների ու դավաճանների օրեցօր նոսրացող, բայց դեռ կենսունակ, հանրային խմբերը: ■

Սփյուռքի ներուժը եւ Հայաստանը

Սարգիս Մահսէրէճեան
Հրապարակախոս

«Դրօշակի» խմբագրութեան կողմէ առանձնացուած 6 հարցումներն ու անոնց ենթաբաժանումները նորագոյն փորձ մըն են՝ քննարկման սեղանին դնելու բաւական բարդ եւ ծաւալուն հարց մը (գլխագիր հարց մը), որ մերթ աշխուժ, յաճախ նաեւ հարկադրաբար լուսանցքայնացուած նիւթ մըն է:

Կիզակէտը Սփիւռքն է, իսկ առաջադրանքներուն ծիրը կ'ընդգրկէ երկու էական ոլորտ.

1. Սփիւռքը՝ ինքն իրեն համար,
2. Սփիւռքը՝ ի սպաս հայրենիքին եւ փոխադարձաբար:

Երկու ոլորտներուն մէջ ալ իր տեղը ունի Հայ դատը՝ մեր ազգի ու ժողովուրդի իրաւունքները՝ բոլոր երեսներով:

Քննարկումէն եւ կարծիքներ ձեւաւորելու սկսելէ առաջ ցանկալի է կատարել քանի մը հաստատում, որոնք առաջին ակնարկով կրնան ուղղակի պատասխանները չըլլալ հարցումներուն, սակայն կը կարծենք, որ նման հաստատումներ կը նպաստեն նիւթը դիտելու կարելի լայնագոյն ծիրին մէջ ժամանակի եւ աշխարհագրական վայրերու առումով, նաեւ քննարկման տալու համապատասխան տարողութիւն: Պիտի տեսնուի, որ հարցումներուն կ'անդրադառնանք նաեւ անուղղակի այդ նշումներով:

Կարեւոր կէտ մը. այս հարցին քննարկումը կատարելու պահուն անհրաժեշտ է ձերբազատիլ ներկային, ըսել կ'ուզենք՝ վերջին քանի մը տարիներու դէպքերուն այլապէս սահմանափակող ազդեցութենէն:

ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ

1. Ի՞նչ ծաւալի ալ ըլլայ քննարկումը, մեր կարկինը որքա՛ն ալ լայն բանանք ժամանակի եւ վայրի տարածքներուն մէջ, որեւէ քննարկում չի կրնար սպառիչ ըլլալ:

2. Սփիւռքը առանձնակի, մեկուսի էութիւն մը չէ, իր իմաստէն՝ գոյութեա՛ն իմաստէն, շատ բան կը կորսնցնէ, եթէ զայն դիտենք մայր հայրենիքէն բոլորովին անկախ՝ իբրեւ անջատ միաւոր կամ միաւորներու խճանկար: Կարելի է տարուիլ այն մտածումով, որ հայրենիքը կրնայ գոյատեւել առանց Սփիւռքի (մեր հասկցած ձեւով Սփիւռքի), սակայն Սփիւռքը չի կրնար գոյատեւել առանց հայրենիքի տրամադրած խարիսխին: Բազմաթիւ սփիւռքներ եղած են ու այսօր չկան, իսկ հայրենիքը կայ, պէտք է մնայ յաւերժ:

3. Վերի հաստատումը չի նշանակեր, որ Սփիւռքի բոլոր հարցերը բացարձակապէս առնչուած են հայրենիքին հետ, որովհետեւ ծանօթ է, որ Սփիւռքը ունի այնպիսի հարցեր, մարտահրաւէրներ, որոնք այլապէս իրենց բնական լուծումը գտած են (կրնան գտնել) մայր հողին վրայ. պէտք է ընդունիլ նաեւ, որ հայրենիքն ալ ունի ի՛ր իւրայատուկ հարցերը. Սփիւռքը աղերսակից ըլլալով հանդերձ՝ զանոնք չ'ապրիր իր առօրեային մէջ: Պէտք չենք զգար օրինակներ թուարկելու:

4. Հայկական Սփիւռքը ունի շատ երկար ու «խայտաբղէտ» պատմութիւն: Այդ պատմութիւնն այնքան երկար է, որքան Հայաստանի եւ մեր ազգի պատմութիւնը, թէեւ տարբեր դարաշրջաններու սփիւռքացումը ունեցած է տարբեր ծաւալ, մայր հողէն աշխարհագրական հեռաւորութիւն եւ կազմաւորած իւրայատկութիւններ:

5. Սփիւռք(ներ)ը ո՛չ մէկ ատեն կազմաւորուած են ՈՐՈՇՈՒՄՈՎ, ո՛չ ալ այս կամ այն գաղութը. Սփիւռքին բաղկացուցիչ միաւորները նօսրացած ու պատմութեան անցած են ՈՐՈՇՈՒՄՈՎ: Հայաստանէն արտագաղթն ու մօտակայ կամ հեռաւոր երկիրներու մէջ ստեղծուած հայկական օճախները առհասարակ ունեցած են ԱՐՏԱՔԻՆ գործօններ, որոնց ազդեցութեան տակ ծնած են ներքին վիճակներ եւ պատճառ դարձած բնակիչներու այլուր մեկնումին: Հիմա ալ կը պատահի նոյնը: Չենք ուզեր երթալ մինչեւ մեր ազգի ու հայրենիքի ակունքները, սակայն կ'արժէ հպանցիկ ակնարկ մը նետել մէկ քանի ալիքի վրայ:

Ա. Մեր այսօրը առաւել կամ նուազ չափով շարունակութիւնն է վերջին հազարամեակի իրադարձութիւններուն: Հայաստանի մէջ ինքնիշխան պետականութեան կորուստէն ետք՝ շուրջ հազար տարի առաջ, զանգուածային գաղթեր տեղի ունեցած են առաւելաբար դէպի արեւմուտք (Բագրատունիներու, Սիւնիներու եւ Արծրունիներու իշխանապետութեանց մայրամուտին): Մինչեւ իսկ հայ իշխանա-

տրներ առաջնորդած են նման ալիքներ (սա կարելի է նկատել մասնակի որոշումի օրինակ), երբ իրենց հպատակները իրենց հետը առած՝ գաղթած են դէպի Բիւզանդական կայսրութեան արեւելեան գօտիները (եւ մեծ մասամբ անհետացած են քանի մը դար ետք): Նման ալիքի մը արդիւնքներէն է եղած Կիլիկիոյ հայկական իշխանութեան, ապա թագաւորութեան ծնունդը, Եգիպտոսի մէջ հայկական գաղութի ստեղծումն ու ներգրաւումը այդ երկրի իշխանաւորներու, զինուորականներու դասուն մէջ:

Բ. Կարելի է ՈՐՈՇՈՒՄՈՎ արտագաղթի (հաւանաբար միակ) պարագան նկատել Շահ Աբբասի կողմէ հայերու պարտադրուած գաղթը դէպի Պարսկաստան: Ի դէպ, պէտք չէ տարուիլ այն տեսութեամբ, որ հայերու Պարսկաստան ներկայութիւնը սկսած է Շահ Աբբասի օրով: Պարսկահայ գաղութի կազմաւորման 400-ամեակը, որ նշուեցաւ քանի մը տարի առաջ, ունի այլ իմաստ: Մինչդեռ Պարսկաստանի մէջ հայկական օճախներու (հոգ չէ, թէ փոքր եւ շատ չյիշատակուած) ներկայութիւնը կը հասնի մինչեւ այն փուլերը, երբ հայկական եւ պարսկական իշխանութիւնները ունեցած են հակամարտութիւններ եւ դաշնութիւններ (չմոռնանք, որ հայկական թագաւորական ընտանիք մը ունէր պարսկական ծագում):

Գ. Գաղթի տարբեր ալիքներու պատճառով այսօրուան՝ յետ-ցեղասպանութեան Սփիւռքէն շատ առաջ, ունեցած ենք բազմաթիւ սփիւռքներ: Հայկական պետականութեան կորուստէն ետք գաղթի ալիքներ եղած են դէպի արեւելեան ու կեդրոնական, մինչեւ իսկ հիւսիսային Եւրոպա, զուգահեռաբար նաեւ դէպի արեւելք, մինչեւ Ծայրագոյն Արեւելք: Եւրոպայի մէջ յատուկ յիշատակութեան արժանի է Լվովի գաղութը, որ ստեղծած է մշակոյթ եւ ինքնուրոյն դիմագիծ: Իւրայատուկ են Վենետիկը եւ Վիեննան (Մխիթարեաններ): Դէպի արեւելք ալիքները հասած են նախ՝ Հնդկաստան, ապա՝ նաեւ մինչեւ հարաւարեւելեան ասիական երկիրներ ու Ճափոն:

Դ. Նորագոյն եւ մեծագոյն ալիքները ստեղծուած են 19-րդ դարուն, մասնաւորաբար համիտեան բռնատիրութեան տարիներէն սկսեալ՝ հասնելով մինչեւ ցեղասպանութեան ու յաջորդած տարիները՝ ներառեալ Հայկական Կիլիկիոյ պարպումը: Հոս արդէն աչքի առջեւ ունինք թրքական պետութեան կողմէ տրուած ՈՐՈՇՈՒՄԸ՝ բռնագրաւելու նախ Արեւմտեան Հայաստանն ու Կիլիկիան, ջարդելու եւ հեռացնելու անոնց հայ բնակիչները: Այս ալիքներուն հետեւանքով առաջացած գաղութներուն ամբողջութիւնն է, որ այսօր հաշուի կ՚առնենք իբրեւ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓԻՒՌՔ, ոչ միայն անոր համար, որ այդ գաղութները ապրող հայաշխարհին մաս կը կազմեն, այլ նաեւ այն մօտեցումով, որ անոնց դիմագրաւած տաք-պաղ օրերը, հարցերն ու նուաճումները մասնիկներն են հայ կեանքին: Մինչդեռ նախացեղասպանութեան տարիներու բազմաթիւ գաղութներ, կրկնենք, ընդհանրապէս առանց որոշումի, տնտեսական, քաղաքական ու նմանօրինակ վիճակներու ստեղծման հետեւանքով նօսրացած են տակաւ ու չքացած: Անոնցմէ շատերէն մնացած են հսկայական ժառանգութիւն, աւանդ:

Ե. Կարելի է այս ցանկին մէջ առնել նաեւ այն ալիքները, որոնք ստեղծուեցան Բ. աշխարհամարտի օրերուն ու անկէ ետք՝ անցեալ դարու 70-ականներէն սկսեալ: Հոս ալ կան ուշագրաւ «հատուածներ», ինչպէս՝ Բ. աշխարհամարտին մասնակից հայերու գերեվարումը դէպի Գերմանիա, ապա անոնց (տեղափոխուած-տեղահանուածներու) գաղթը դէպի Ամերիկա եւ այլուր (այլ ժողովուրդներ ալ ունին նմանակները), աւելի ուշ՝ արեւելեան եւրոպական երկիրներէ «արտագաղթը», նմանապէս դէպի արեւմտեան երկիրներ ու Աւստրալիա...: Զուգահեռաբար եւ «երկաթեայ վարագոյրին» վրայ բացուած պատուհաններուն ընդմէջէն Հայաստանէն հեռացածներու ալիքները Խորհրդային Միութեան փլուզումէն իսկ առաջ: Շարունակելով այս գիծը՝ կը հասնինք մինչեւ Հայաստանի անկախութեան վերականգնումի տարիները եւ մինչեւ մեր օրերը, երբ Հայաստանէն արտագաղթը նոր ալիքներ ստեղծեց մասնաւորաբար տնտեսական-ընկերային եւ երկրին ձախող յանձնանձումին հետեւանքով: Այս ալիքը նման չէ ցունամիի, որ աղէտի մը հետեւանքով կը սկսի ու վերջ կը գտնէ, այլ դարձած է անվերջանալի շղթայ, որուն նորագոյն օղակները կազմուեցան Արցախի հայաթափումով եւ արցախցիներու՝ մէկ մասին աչքերը Հայաստանէն դուրս՝ դէպի այլ երկիրներ, սեւեռումով:

6. Սփիւռք(ներ)ը կազմողները եղած են անոնք, որոնք հարկադրաբար կամ սեփական որոշումով հեռացած են հայրենիքէն, սեփական տունէն: Այս ոլորտին մէջ անհրաժեշտ կը նկատենք կանգ առնել երկու կարեւոր եզրի առջեւ: ԳԱՂԹԱԿԱՆ եւ ՊԱՆԴՈՒԽՏ: Պանդուխտը ան է(ր), որ հիմնականին մէջ տնտեսական ծանր վիճակի մատնուելով՝ կը հեռանայ սեփական օճախէն, որոշ ժամանակ մը աշխատանք կը գտնէ մօտակայ կամ հեռաւոր երկինքներու տակ, ձեռք կը բերէ նիւթական որոշ բարօրութիւն ու տուն դառնալով՝ կ՚աշխատի բարելաւել ընտանիքին վիճակը: Յաջողութիւն չգտնող պանդուխտը յաճախ... կը մեռնի պանդխտութեան մէջ: Ի դէպ, կ՚արժէ հոս փոքր փակագիծ մը բանալ՝ արձանագրելու

համար, որ պանդուխտի տրամաբանութեամբ էր, որ որոշ թիւով հայեր ցեղասպանութենէն առաջ գացած էին եւրոպական երկիրներ ու Ամերիկա, շատեր վերադարձած էին եւ... զոհ գացին ցեղասպանութեան, ուրիշներ չվերադարձան եւ գումարուեցան գաղթականներու ցանկին, եղան հեռաւոր գաղութներու թթխմորները: Ի դէպ, պանդխտութեան եւ գաղթի նման ալիքներ ստեղծուեցան նաեւ միջին արեւելեան հայկական գաղութներու մէջ անցեալ դարու 50-60-ական տասնամեակներուն, երբ ոմանք գացին Գերմանիա ու (քանդուած Եւրոպայի) այլ երկիրներ, իսկ այլ հոսանք մը գնաց դէպի Արաբական ծոցի երկիրներ: Առաջիններէն մեծ մասը, որոշ բարօրութիւն ձեռք բերած, վերադարձաւ տուն, իսկ արաբական երկիրներ գացողներէն եղան չվերադարձողներ, եւ այսօր Քուէյթի ու դրացի երկիրներու մէջ ունինք կայուն (գաղթ) օճախներ: Այդ փուլին եւրոպական երկիրներ (նաեւ Հարաւային Ամերիկա) գաղթողներու թիւն ալ արհամարհելի չէ: Ասդին Սուրիոյ եւ Լիբանանի պէս աշխոյժ գաղութներ, գիտե՛նք, թէ ի՛նչ վիճակի եւ հարկադրանքներու դէմ յանդիման են վերջին տասնամեակներուն:

7. Որպէսզի քիչ մը աւելի ամբողջական կերպով պատկերենք հայկական Սփիւռքի ներկան, պէտք է մեր կարկինը հասցնենք նաեւ դէպի Ռուսիա եւ նախկին խորհրդային երկիրներ: Առանց մանրամասնութիւններ յիշատակելու՝ պէտք է արձանագրել, որ Ռուսիան վաղուց եղած է Հայաստանէն (կամ Հայաստանի վրայով) դուրս հոսող ալիքներու հասցէն. ոմանք՝ ուսանելու հեռանկարով (ինչպէս պատահած է Եւրոպա գացող հայ ուսանողներու պարագային), ուրիշներ առեւտուրի եւ գործարարութեան, մինչեւ իսկ բանակին ծառայելու (եւ բարձր աստիճաններ նուաճելու) մտասեւեռումով գացած են Ռուսիա (այդ օրերուն դրացի Վրաստանը՝ իր Թիֆլիսով եւ ջաւախքեան տարածքներով կը նկատուէր Հայաստանի մէկ երկարաձգումը): Այդ օրերուն է, որ ստեղծուած են Ռուսիոյ բազմաթիւ հայկական օճախները հիմնականին մէջ Սեւ ծովու ափերուն (հոս ալ Աբխազիան իւրայատուկ էջ մըն է. համշէնահայեր...) եւ մշակոյթի եւ գիտութեան կեդրոններու մէջ: Խորհրդային տարիներուն «ներքին սփիւռքը» տարածում գտաւ երկու մեծ պատճառով: Ստալինեան տարիներուն բռնի կերպով պարտադիր աշխատանքի տարուածներ (որոնցմէ մաս մը ինքիզինք պանդուխտ զգաց եւ Ստալինի մահէն ետք վերադարձաւ, իսկ ուրիշներ դարձան գաղթական, ամուսնացան օտարներու հետ եւ շատերու հետքը կորսուեցաւ), իսկ աւելի ուշ եւ մինչեւ մեր օրերը աշխատանքի, աւելի բարեկեցիկ ապրուստի ապահովման հեռանկարով դէպի կեդրոնական ասիական երկիրներ գացողները: Պէտք է արձանագրել, որ 40-ականներու երկրորդ կիսուն Հայաստան ներգաղթը ուսումնասիրութեան արժանի ընթացք է, ցուցանիշ է սփիւռքացած հայուն ուղղութեամբ մայր հայրենիքին մագնիսականութեան, իսկ աւելի ուշ ներգաղթողներու արտահոսքն ալ շատ մը այլ բաներու ցուցանիշ է. այս բոլորը կը դիտենք իբրեւ սփիւռքեան վիճակներ:

8. Երբէք ալ կարելի չէ կազմել (կամ յաւակնիլ, թէ կրնանք կազմել) Սփիւռքի անցեալի, թէ այժմու ամբողջական խճանկարը, սակայն այս ուրուագծային պատկերին մէջ կարելի չէ անտեսել հեռաւոր երկինքներու տակ կազմաւորուած հայկական օճախները, որոնք ինքնաբերաբար նոր տարածք կու տան ծանօթ Սփիւռքին: Ի մտի ունինք Աւստրալիոյ, Նոր Զելանտայի, մինչեւ իսկ Չինաստանի եւ կողքի երկիրներուն մէջ վերջին տասնամեակներուն աչքի ինկող գաղթօճախները (շատեր կազմուած Հնդկաստանի ու այլ երկիրներու նախատիպին հետեւողութեամբ, այսինքն՝ տնտեսական-առեւտրական գործերու ճամբով), իսկ Եւրոպայի մէջ կարգ մը հին գաղութներու (Յունաստանէն մինչեւ Արեւելեան Եւրոպա, Ֆրանսա ու Անգլիա...) թիւերուն յաւելումը, զուգահեռաբար նախապէս անսնշան նկատուող գաղութներու (Գերմանիա, Հոլանտա, Շուէտ, Նորվեկիա եւ այլն) նկատառելի ուռճացումը: Մասնաւորաբար Հայաստանէն տարածուող արտագաղթին պատճառով տեղի ունեցած այս ուռճացումները կը հասնին նաեւ ամերիկեան ցամաքամաս՝ առաւելաբար Միացեալ Նահանգներ, Քանատա, մինչեւ իսկ Մեքսիքա, ապա նաեւ՝ հարաւամերիկեան երկիրներ, ուր արդէն ունինք մեծ մասամբ ծնած յետ-ցեղասպանութեան տարիներուն, ապա նոր ալիքներ ընդունած անցեալ դարու 50-60-ական տարիներէն ետք: Հեռակայ այդ գաղութները հասցէ են նաեւ Իրանէն ու Թուրքիայէն հեռացող հայորդիներու: Պատճառները ծանօթ են: Մեր հաշուարկներէն ընդհանրապէս դուրս կը մնան ափրիկեան երկիրներ, ուր հասած են փոքր ալիքներ:

9. Վերջին հաստատում մըն ալ, որ հաւանաբար աւելորդ է, սակայն չանտեսենք զայն: Սփիւռք կազմաւորուած ու նուիրականացած-բիւրեղացած ամբողջութիւն մը չէ, այլ յարափոփոխ խճանկար մը՝ հասարակացէն աւելի տեղական ուժականութիւն(ներ)ով (dynamism): Սա կը հարկադրէ, որ անոր շուրջ որեւէ քննարկում ինքզինք պատանդ չդարձնէ նախասահմանեալ կաղապարներու եւ տրամաբանութիւններու, այլ անհրաժեշտ է յարափոփոխութեան համապատասխան ճկունութիւն (որ յամենայն դէպս յարմարողականութիւն չի նշանակեր):

Այս ու նման հաստատումներ կարեւորութիւն կը ստանան անոր համար, որ այսօրուան Սփիւռքն ու անոր դիմագրաւած մարտահրաւէրները ունին խորքային տարածութիւններ, որոնք այլապէս նորութիւն չեն, հետազօտութեան հորիզոններ կը բանան մեր քննարկումներուն դիմաց: Անցեալի, թէ ժամանակակից մեր գաղութները՝ Սփիւռքի մասնիկները կը ներկայանան հասարակաց եւ առանձնակի հարցերով, փորձառութեան վաւերագիրներ կը կազմեն մեզի համար:

Ծանօթ եւ անծանօթ Սփիւռք(ներ)

Սփիւռքեան հարցերու քննարկումը հարկադրաբար (մեծ մասամբ նաեւ անզգալաբար) կը կատարուի՝ ի մտի ունենալով ԾԱՆՕԹ ՍՓԻՒՌՔԸ, որ խորքին մէջ ամբողջական Սփիւռքին միայն մէկ փոքր հատուածն է:

Ի՞նչ կը հասկնանք ծանօթ Սփիւռք եզրաբանութեամբ:

Երբ կը խօսինք հայկական գաղթօճախներու մասին, իսկ Սփիւռքը այդ գաղթօճախներուն ՀԱՄԱԼԻՐՆ է, բնականաբար աչքի առջեւ կ՚ունենանք նախ՝ որոշ թիւ ու կազմակերպ դրութիւն ունեցող օճախները: Այսինքն՝ անոնք, ուր, օրինակի համար, ունինք եկեղեցի, դպրոց, քաղաքական եւ այլ կազմակերպութիւններ, միութիւններ եւ առաւել կամ նուազ չափով ազգային կեանք: Այդ միաւորները բնական մագնիսներ են, որոնք իրենց կը քաշեն տուեալ երկիրի մը մէջ բնակութիւն հաստատած՝ իբրեւ հայ ապրողները, հայութեան կեանքին հաղորդ մնալ ուզողները: Երբ գաղութներուն ու զայն կազմողներուն թիւը փոքր էր, մագնիսը աւելի հզօր կը բանէր, թիւի յաւելումն ու նոր տարածքները պատճառ դարձած են, որ մագնիսը նախկին ազդեցութեամբ չգործէ:

Կրկնենք. այս փաղանգներն են, որ կը կազմեն կորիզն ու խարիսխը Սփիւռքի հարցերուն շուրջ քննարկումներուն: Այս ծանօթ-սփիւռքները կը ստեղծեն իւրայատուկ մարտահրաւէրներ եւ մտահոգութիւններ, որոնց շարքին՝ հայ մնալու, հայկական կեանքը զարգացնելու եւ անկորուստ սերնդափոխութեան հրամայականները: Չենք ուզեր աւելի երկարել այս գիծը:

Հիմա հարց տանք, թէ ո՞րն է «անծանօթը», որ երկրորդ հիմնական առանցքն է մտահոգութիւններուն: Երբ գաղութ մը փոքրաթիւ է (անկախ իր իւրայատուկ հարցերու կալուածէն և դիմագրաւած տաղտուկներէն), անոր անդամները կը կազմեն նեղ շրջանակ մը, ուր մարդիկ մեծ մասամբ ծանօթ կ՚ըլլան իրարու, մագնիսականութիւն մը զանոնք կը կապէ հասարակութեան և իրարու: Նման գաղութներու բնական աճը արգելք չ՚ըլլար, որ իրարու յաջորդող սերունդներ ալ առաւել կամ նուազ չափով պահպանեն ծանօթներու օղակը: Հարցը այլ տարողութիւն կը ստանայ, երբ փոքր գաղութ մը կարճ ժամանակի մէջ «պատուաստուի» նորեկներով և սակայն պատուաստը չըլլայ յաջող ու արդիւնաբեր: Հոն արդէն կը ստեղծուի «ծանօթին» շուրջ ստեղծուած «անծանօթներու» առաջին օղակը:

Մեծ թիւով բնակիչ ունեցող գաղութներու պարագան, ըստ էութեան, տարբեր չէ, սակայն հոն ալ կան ծանօթի-անծանօթի խայտաբղէտ հարցեր: Այս մօտեցումով կարելի է (և կարելի չէ) իրարու համեմատել մէկ կողմէ՝ Լիբանանի, Սուրիոյ ու նման պատմութիւն կերտած և դիմագիծ յստակացուցած գաղութները Միացեալ Նահանգներու (և նման տարածուն երկիրներու) գաղութներուն հետ:

Միջինարևելեան գաղութները անցեալին «միատարր» էին ո՛չ միայն այն իմաստով, որ բաղադրիչները, տարբերակումները ունէին հայրենակցական, յարանուանական, մինչև իսկ կուսակցական դիմագիծ, այլ նաև այդ երկիրներուն ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ձևով մը կը հարկադրէր, որ գաղութին ներքին ճանաչողութիւնը ըլլար մատչելի, դիւրին: Ներկայիս այդ գաղութներուն մէջ ալ ստեղծուած են «անծանօթներու» օղակներ: Պատճառները հայկական թաղամասերու վերափոխութիւնն ու նոր տարածքներու «նուաճումն» է, խառն ամուսնութիւնները և տեսակ մը... ներքին տարբաղադրութիւն: Այլ խօսքով, բազմաթիւ հայորդիներ, առաւել կամ նուազ չափով, կտրած են «օրկանական կապը» հայկական հաւաքականութենէն, ստեղծուած են «անծանօթ» շրջաններ. բնական հետևանքներէն մէկն ալ «մեկուսացած» միաւորներու անդամներուն՝ հաւաքականին անհաղորդ ըլլալն է, անտարբերութիւնը, առնչակից ըլլալէ խուսափումը (առաւելաբար ընտրովի): Հետևանքը կ՚ըլլայ այն, որ գաղութին «ծանօթ» օղակը մինչև իսկ եթէ որոշ չափով կը մնայ անփոփոխ (նկատի չունինք թիւի նուազումը), անդին տարածք կը ստանայ «անծանօթներու» օղակը: Հարց է, թէ այդ անծանօթները ինչպէ՞ս կարելի է (կամ արդեօք կարելի՞ է) ներգրաւել «ծանօթին» մէջ, երբ միջոցներէն աւելի կամեցողութիւն ու հաղորդ ըլլալու տրամադրութիւնը կը նօսրանայ (հազար ու մէկ պատճառով):

Մեծաթիւ գաղութներու մէջ կան իրարմէ բոլորովին տարբեր գործօններ և իրավիճակներ: Օրինակի համար, եթէ վեր առնենք Միացեալ Նահանգներու օրինակը (և սա հաւանաբար ամէնէն դիւրին դիտարկուող շրջանն է), մեր դիմաց կը պարզուի հետևեալ պատկեր(ներ)ը: Նախ և առաջ գաղութը, Սփիւռքի ամէնէն բազմամարդ օճախը (Ռուսիան կը դասուի «ներքին սփիւռքի» գօտիին մէջ) ունի շատ ընդարձակ տարածութիւն՝ իր արևելեան և արևմտեան մեծ ընտանիքներով, իւրաքանչիւրը՝ ի՛ր հսկայական ծաւալով: Արևելքը կ՚ընդգրկէ Պոսթըն-Նիւ Եորքէն-Ուաշինկթընէն մինչև Մայէմին ու հարաւային նահանգներ (մերթ փոքր, նաև վերջերս ծաւալ ստացող գաղութներով), իսկ արևմտեանը հիմնականին մէջ «կեդրոնացած» է Քալիֆորնիոյ մեծ քաղաքներուն մէջ (Լոս Անճելըս, Սան Ֆրանսիսքօ, Ֆրեզնօ, Սան Տիեկօ և այլն), սակայն կ՚ընդգրկէ Քալիֆորնիոյ դրացի նահանգները՝ Արիզոնան, Նևատան (իր Լաս Վեկասով), Քոլորատոն, Օրեկընը, Եութան և այլն:

Երկու գօտիներուն մէջ ալ կան ծանօթի և անծանօթներու հսկայական փաղանգներ, որոնք ունին իրենց գլխագիր հարցերը: Ծանօթները բոլորուած են եկեղեցիներու, դպրոցի, մշակութային, մարզական, մասնագիտական միութիւններու և միաւորներու շուրջ: Անմիջապէս արձանագրենք, որ, օրինակի համար, Լոս Անճելըսի (և անմիջական շրջակայքի) գաղութը ունի ներքին «մասնիկներ», որոնք ո՛չ միայն տարբերակումներ կը ստեղծեն, այլ մինչև իսկ... աներևոյթ պատուարներ՝ «ծանօթ» կոչուածի՛ն միաւորներուն միջև: Կան տարբեր շրջաններէ (Միջին Արևելք, Պոլիս, Պարսկաստան, Հայաստան...) եկածներ, տարբեր տասնամեակներու՝ տարբեր ալիքներով, որոնք ստեղծած են որոշ չափով «ինքնամփոփ» գաղութիկներ, ունին իրենց ներքին շարժունակութիւնը, երբեմն կապի մէջ են իրարու հետ, սակայն չեն զարմանար, եթէ մէկուն մէկ ձեռնարկէն ուրիշներ տեղեակ չըլլան...:

Անոնցմէ անդին կան անծանօթներու բանակներ՝ հարուստ տեսականիով: Ուրուագծենք ոչ ամբողջական պատկեր մը (չէ՞ որ կը խօսինք «անծանօթի» մա-

սին, և սա հանրահաշիւի հաւասարումներու անծանօթը չէ):

«Ծանօթին» նեղ օղակէն անդին մեծ ու փոքր քաղաքներու մէջ կան անծանօթ թիւով հայորդիներ, որոնք այս կամ այն պատճառով կապի մէջ չեն «ծանօթ» օղակին հետ: Բնակավայրի հեռաւորութիւնը, գործի պայմաններ, օտար շրջանակներու հետ գործակցութիւն և հաղորդակցութիւն (յաճախ մասնագիտական աշխատանքի, հետևաբար նաև շահադիտական պատճառներով) մէկ քանին են այս վիճակին պատճառներուն: Փաստօրէն, ինչպէ՞ս կարելի է սպասել, որ հայաշատ շրջանէ մը (Կլենտէյլ, Հոլիվուտ, Պոսթըն, Նիւ Եորք և այլն) տասնեակներով, հարիւրաւոր, մինչև իսկ հազարաւոր քիլոմեթր հեռու ապրող-գործող մէկը, որքան ալ ցանկութիւն ունենայ, միջոցները ստեղծէ հաղորդակից ըլլալու «ծանօթին» հետ: Ո՛չ ոք կրնայ գիտնալ թիւը հայութենէ կամովին, թէ ակամայ հեռու ինկած հայերուն: Մարդահամարներն իսկ չեն կրնար լիովին նպաստել նման աշխատանք տանողի, որովհետև կայ... անուանափոխութեան, խառն ամուսնութիւններու և նման իրականութիւններ: Հարցը աւելի՛ կը դժուարանայ, երբ խօսինք իբրև հայաշատ ճանչցուած նահանգներէ և քաղաքներէ անդին ապրողներու մասին: Փաստօրէն, Միացեալ Նահանգներու «ներքին» նահանգներու մէջ ալ կան անծանօթ թիւով զանգուածներ: Արհամարհելի չէ թիւը անոնց, որոնք վաղուց, տասնամեակներ առաջ, ամերիկեան ցամաքամաս ոտք դնելու օրերէն ի վեր հաստատուած են այս կամ այն հեռաւոր նահանգին, քաղաքին մէջ, իրարու յաջորդած սերունդները բնականաբար «ժառանգած» են անծանօթներու օղակին մէջ մնալու մենաշնորհը:

Ծանօթ-անծանօթի այս իրողութիւնը, առաւել կամ նուազ չափով, ի զօրու է նաև փոքր ու մեծ այլ գաղութներու մէջ՝ Աւստրալիայէն մինչև Ծայրագոյն Արևելք, Կեդրոնական Ասիա, Ռուսիա, արաբական աշխարհ, Եւրոպա և ամերիկեան երկիրներ: Թուարկումը կը նկատենք աւելորդ:

Բոլորովին այլ հարց մըն է, ընդհանրապէս հազիւ թէ տեսողութեան դաշտի մէջ ինկող, նոյնինքն Հայաստանի՛ մէջ «ծանօթներու» և անծանօթներու օղակները, բոլորովին տարբեր՝ սփիւռքեան յիշեալ երեսներէն: Մեր քննարկումը պիտի չտարածուի հոն, այլ կը բաւականանանք՝ նշելով, որ հայրենիքի մէջ ալ սա հաշուի առնուելիք կէտ է՝ իր ստեղծած այլազան մարտահրաւէրներով: Յիշատակեցինք, որովհետև, ինչպէս նշեցինք նախապէս, հայրենիքն ու Սփիւռքը իրարմով ամբողջացող թեւեր են:

Առաջին բանալին՝ ճանաչողութիւնը

Վերի բաժիններուն մէջ մեր կարկինը բաւական լայն բացինք ո՛չ միայն տեղեկութիւններ ու տուեալներ մէկտեղելու դիտաւորութեամբ, այլև ցոյց տալու, թէ ինչպիսի՛ հսկայածաւալ գործ է Սփիւռքը ճանչնալը, անոր դիմագրաւած հարցերն ու մարտահրաւէրները պատկերացնելը, իսկ անկէ ետք՝ լուծումներու որոնումը: Նշանաւոր «Ծանի՛ր զքեզ» պատգամը յատուկ նշանակութիւն ունի մեր այս օրակարգին հետ:

Այս ուրուագծային համայնապատկերին դիմաց առաջին հարցումը, որ կը ծագի, հետևեալն է. մենք՝ սփիւռքեան հարցերը քննարկողներս, արդեօք ի՞նչ չափով ծանօթ ենք Սփիւռքին. կը կարծեն, թէ բաւական բան գիտենք (և սա հիմնաւորում ունի) «ծանօթին» դիմագրաւած հարցերուն մասին (լեզուի, արմատներու հետ կապի պահպանում, տնտեսական-ընկերային խնդիրներ և այլն):

Պատասխանը և անկէ բխող առաջին հարկադրանքը պարզ է. Սփիւռքի ՃԱՆԱՉՈՂՈՒԹԻՒՆԸ կը հանդիսանայ առաջին բանալին՝ այլապէս խճանկարի մը երևոյթով պատկերուող սփիւռքեան հարցերուն դիմագրաւման և լուծումներու որոնման:

Ճանաչողութիւնը ունի ի՛ր ծալքերն ու օղակները: Անհրաժեշտ է ՀԱՅՈՒ ՄՕՏԵՑՈՒՄՈՎ և հայկական մտասևեռումներով քննարկման դնել նախ ծանօթ ոլորտներուն հարցերը, մանաւանդ առանձնակի քննարկումներն ու գիտաժողովներէ բխած գաղափարները տանիլ համակարգումի, իրականացման դաշտ: Մենք սովորութիւն ունինք լաւ քննարկումներ կատարելու, լաւ թղթածրարներ պատրաստելու և անոնցմով հարստացնելու... արխիւերու դարանները, այդ բոլորը բանտարկելու դարակներու մէջ...

Երբ կ՚ըսենք «հայու մօտեցումով», ի մտի ունինք գոնէ այն, որ հարցերը սեղանի վրայ դնենք օտարամուտ մտածողութիւններէ և տեսութիւններէ՝ ըստ կարելւոյն զերծ մնալով: Այլ ժողովուրդներու սփիւռքներու օրինակները օգտակար են, սակայն անոնցմով պայմանաւորուիլը ձևով մը կը նշանակէ անտեսել հայ Սփիւռքին իւրայատկութիւնները: Ի մտի ունինք այն քննարկումները, որոնք ընդհանրապէս կը կատարուին «ծանօթ» սփիւռքներուն մասին:

Մեր ծանօթ որակած սփիւռքները մեզ կը դնեն գոնէ երկու հարկադրանքի տակ. առաջին՝ իւրաքանչիւր գաղութ աշխատանք տանի՝ իսկապէս ճանչնալու ինքզինք՝ զինք բաղկացնող մասնիկները, զանոնք ներկայի թոյլ հաղորդակցութենէն շատ աւելի ուժեղ կապերու մէջ դնել իրարու հետ, ապա՝ խորացնել տարբեր գաղութներու փոխադարձ ճանաչողութիւնը: Ասոր համար կենաց-մահու չափ կարևոր է, որ գաղութներու էական հարցերուն տնօրինումը կատարեն

ՀԱՍԿՑՈՂ և ԲԱՆԻՄԱՑ, մարդիկ և ո՛չ թէ այս կամ այն հաշիւով ու կապերով դիրքեր գրաւողներ: Մենք յաճախ կը խօսինք կաղապարուած տագնապներու մասին (հայապահպանում, մշակոյթի փոխանցում ու զարգացում), սակայն նման ոլորտներու աշխատանքը կը մնայ առաւելաբար... անհաղորդներու փաղանգներու ձեռքը: Չենք ուզեր թողուլ այն տպաւորութիւնը, թէ ամէն բան տժգոյն է, այլ կ'ուզենք շեշտել, որ իսկական հարցերու յստակեցումն ու դիմագրաւումի միջոցները հազիւ թէ սիրողական են, կը մնան ապարդիւն կամ հազիւ նշմարելի արդիւնքով, հեռու ՏԱԳՆԱՊԻՆ տարողութենէն:

Մեր մամուլն ալ ճանաչողութեան իմաստով կը կատարէ շատ մասնակի գործ (սա մամուլը քննադատելու մօտեցումով չենք արձանագրեր): Որոշ թերթեր և կայքէջային հրատարակութիւններ ԼՈՒՐԵՐ կը հաղորդեն տարբեր գաղութներէ, երբեմն ծաւալուն թղթակցութիւններ լոյս կը տեսնեն ձեռնարկներու մասին՝ ներառեալ արտասանուած խօսքեր, բանախօսութեանց մանրամասնութիւններ, սակայն ատիկա միայն մասնակիօրէն կը նպաստէ գաղութներու փոխադարձ ճանաչման: Խոստովանինք, որ հակառակ արդի արհեստագիտութեան ընձեռած հնարաւորութիւններուն՝ ինքնաճանաչման և փոխադարձ ճանաչման գործը առայժմ ունի շատ սահմանափակ տարողութիւն, մեծ յառաջդիմութիւն չէ արձանագրուած տասնամեակներ առաջ կատարուածէն: Մինչև իսկ կրնանք ըսել, որ նահանջ ալ արձանագրուած է: Բացատրենք մէկ օրինակով: 50-ական և 60-ական տարիներուն կար Կարօ Գէորգեան անունով «խենթ» մը, որ ունէր «Ամէնուն Տարեգիրքը» կոչուած հրատարակութիւն մը: Իր բազմաթիւ արժանիքներուն կողքին, այդ «Տարեգիրքին» մէջ տեղ կը գտնէին հայկական տարբեր գաղութներու մասին թղթածրարներ, ուր տարրական տեղեկութիւններէ անդին գացող տեղեկութիւններ կը վաւերագրուէին: Նման տեղեկագրում նոր ժամանակներուն ալ կը կատարուի, բայց միշտ կը մնայ մասնակիի սահմաններուն մէջ (քանի մը տարի առաջ Երևանի պատկերասփիւռի մէկ կայանը ունէր «Օտար, ամայի ճամբէքի վրայ» հաղորդաշարը, որուն կիզակէտը տարբեր երկիրներ էին ու անոնց սահմաններուն մէջ ապրող հայկական օճախներ): Իսկ այսօր, երբ ճանաչում, ինքնաճանաչում կ'ըսենք, նկատի չունինք միայն տեղեկութեանս հաւաքագրում, այլ անկէ շատ աւելին:

Խօսինք քանի մը մանրամասնութեամբ:

Ճանաչողութեան առաջին օղակը կը կազմէ ունեցեալ գաղութային գործող միաւոր մը (կարգ մը շրջաններու մէջ կան համագաղութային մարմիններ, որոնք կը տանին երախտաշատ աշխատանք, սակայն չունին սպասուած տարողութիւնը և մեր առաջարկած առաքելութիւնը), որ առաջին հերթին ցանկագրէ և դասակարգէ տուեալ գաղութին ՆԵՐՔԻՆ հարցերն ու պահանջները, կարողականութիւնները ու ամէնէն կարեւորը՝ ճշդէ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ: Օրինակի համար՝ քիչ մը ամէն տեղ ունինք արհեստավարժներու միութիւններ ու ընկերակցութիւններ (բժիշկներ, հիւանդապահներ, իրաւաբաններ, ճարտարապետներ և այլն), որոնց գործունէութիւնը կը մնայ տուեալ կալուածին սահմաններուն մէջ, չի հասնիր գաղութին (և հոս ալ կայ քիչ թէ շատ իրարու անհաղորդ մնալու իրականութիւն մը):

Օտարներու մօտ ընդհանրացած է «ուղեղներու տակառ» (Think tank) գաղափարը, իսկ մեր մօտ միայն նախնական քայլեր առնուած են այս մօտեցումով: Նման միաւորներու աշխատանքի ծիրը շատ ընդարձակ է, ինչպէս, օրինակ, դպրոցներու և ազգային այլ հաստատութեանց, միութիւններու իրավիճակին մասնագիտական քննարկումը՝ հարց դնելով, թէ անոնք ի՞նչ համեմատութեամբ կ'իրականացնեն իրենց առաքելութիւնը, ո՞ւր և ինչո՞ւ կը թերանան (կամայ թէ ակամայ): Ինչպիսի՞ նիւթական կարողութիւններ ունի գաղութը, որքանո՞վ կրնայ ինքնաբաւ ըլլալ, ինչպիսի՞ միջոցներ և «մեքենաներ» կարելի է ստեղծել, որպէսզի սահմանափակ կարողութիւնները դառնան աւելի տարողունակ (հոս շատ կարևոր կէտ է վստահելիութեան հարցը): Դպրոցին ու հաստատութեանց կողքին կան երիտասարդական միաւորներ ու մասնագիտական ընկերակցութիւններ, որոնք յաճախ կը բանին ինքնակեդրոն կերպով (Ապրիլ 24-ին տեղի ունեցած միաւորումը ժամանակաւոր է և կը ծառայէ յստակ նպատակի, յետոյ... կը մարի): Նման մօտեցումով աշխատանքի յաջողութեան համար աւելի քան կենսական է, որ գաղութը ճշդէ, կրկնենք, իր ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ճամբայ չհանէ ծրագիր մը և նիւթական միջոցներ չմսխէ, երբ անդին աւելի՛ առաջնահերթ և կենսական ոլորտ մը նոյնքան հոգածութեան չ'արժանանար:

Յաջորդ օղակը կը կազմէ ճանաչումը գաղութին մէջ գործող հայ (ինչո՞ւ չէ նաև օտար) ակնաւոր անհատներու, որոնց կարելի է ներգրաւել առաջադրուած հարցերուն և մարտահրաւէրներուն դիմագրաւումի դաշտերուն մէջ: Կայ լաւ նախընթաց մը՝ Հայ դատի դաշտը, ուր տարբեր ազդեցիկ, թէ նուազ ազդեցիկ երկիրներու մէջ կապեր հաստատուած են պետական-կառավարական և քաղաքական-դիւանագիտական շրջանակներու հետ, արդիւնքներն ալ շօշափած ենք տասնամեակներ շարունակ: Իսկ եթէ գաղութ մը յաջողի իր հայկականութեան-մշակութային, տնտեսական և յարաբերական (նաև այլ) կարիքները բաւական յստակ կերպով սահմանել, դուռ կը բանայ այդ հարցերուն լուծումն ալ հայ, թէ ոչ-հայ հեղինակաւոր ու անուանի անձերու հետ գործակցութեամբ դրական ճամբու մէջ դնելու: Պէտք է ընդունինք, որ այս ծիրին մէջ մասնակի քայլեր առնուած են, իսկ երբեմն որոշ քայլերն ալ... իրենք իրենց եկած են մեր դաշտը: Անհրաժեշտ է այս կալուածը արժանացնել հետևողական հոգածութեան: Օրինակի համար՝ հաւաքագրել գիտութեանց, ակադեմական, արուեստներու (գրողներ, երգիչ, դերասան...), մամուլի և արհեստավարժական տարբեր կալուածներու մէջ ծանօթ դէմքեր, որոնք այս կամ այն ձևով կրնան նպաստել մեր սահմանելի առաջադրանքներուն իրականացման: Ասիկա կը կոչուի «տուեալներու դրամատուն» (Data bank), որ ինքնանպատակ չէ, այլ օգտագործելի, շահարկելի

դրամագլուխ: Իսկ եթէ ուզենք քայլ մը ալ անդին անցնիլ, կարելի է մտածել և ըստ այնմ գործի անցնիլ՝ նորածիլ դէմքեր քաջալերելու և անոնց նպաստելու, որ տեղ հասնին (ինչպէս կ՚ընեն այլ ժողովուրդներ, ի մասնաւորի՝ արուեստի որոշ կալուածներու մէջ): Դարձեալ խօսինք մէկ-երկու օրինակով. Շարլ Ազնաւուր մը ստեղծեց այնպիսի վաստակ և հռչակ, որ օր մը զինք դարձուց Հայաստանի դեսպան: Կրնանք յիշատակել հռչակ շահած այլ անհատներ ալ. կարևորը այն է, որ անոնց հետ հետևողական կապեր պահուին (չկրկնենք, որ գաղութային յիշեալ միաւորին կողմէ), իսկ նոյնքան կարևորը՝ զանոնք համոզել ու բերել մեր ծրագիրներուն համապատասխան մօտեցումով գործի դաշտեր ու չթողուլ, որ անոնք մնան իրարմէ անկախաբար գործող առանձնութիւններ: Եթէ հարց տանք, թէ արդեօք իւրաքանչիւր գաղութ ինչ համեմատութեամբ ծանօթ է իր երկինքին տակ գործող հայ և հայութեամբ հետաքրքրուած ականաւոր դէմքերուն, ՄԱՐԴՈՒԺԻՆ, պատասխանը հազիւ թէ գոհացուցիչ պիտի ըլլայ: Այս նշումը չենք ըներ միայն մեր քաղաքականդատին դիտանկիւնէն, այլ մեր մատնանշած բազմակողմանի հարցերուն համայնապատկերին մէջ:

Ճանաչողութեան բաժնեկցութիւն և տարածում

Երբ իւրաքանչիւր գաղութ՝ սփիւռքեան միաւոր, աւելի բարձր մակարդակի բարձրացնէ իր ինքնաճանաչողութիւնը, այսինքն՝ իր կարողութիւնները, կարիքներն ու տարբեր կալուածներու մէջ մարդուժը, յաջորդ օղակին պատրաստութիւնը պատրաստ կ՚ըլլայ: Այդ օղակը կը հանդիսանայ իւրաքանչիւր գաղութի հարցերն ու կարողականութիւնները բաժնեկցիլ, միաժամանակ անցիլ գործի այլ փուլի մը, այսինքն՝ տեսնել, թէ ինչպիսի՞ հասարակաց գիծեր և էական տարբերութիւններ կան տարբեր գաղութներու միջև: Օրինակի համար՝ հայութեան թիւի պահպանումը, օտարումի հոսանքներուն դէմ դնելը, անկասկած, որ հասարակ յայտարար են բոլորին համար՝ անկախ անկէ, թէ հայկական օճախը կը գտնուի Միջին Արևելքի՞ մէջ, թէ հեռաւոր ափերու վրայ: Իսկ տարբերակող գիծ մըն է, անկասկած, տուեալ երկիրն մէջ գաղութին կրած տեղական ազդեցութիւնները (լեզու, մշակոյթ, քաղաքակրթական-«քաղաքակրթական»): Փաստօրէն, մինչև իսկ Միացեալ Նահանգներու արևելեան և արևմտեան գօտիներու գաղութները կը դիմագրաւեն բաւականին տարբեր հարցեր (բոլորն ալ լրջօրէն ուսումնասիրելի և ոչ միայն պարագայական համագումարներու նիւթ դարձնելով), ալ ո՞ւր մնաց Ֆրանսայի, Գերմանիոյ, Ռուսիոյ կամ որևէ այլ երկրի մէջ ապրող գաղութներու միջև նմանութեան ու տարբերութեան ուրուագծումը: Չի բաւեր ըսել, որ բոլորն ալ Սփիւռքին մաս կը կազմեն, որովհետև, ինչպէս նշեցինք սկիզբը, Սփիւռքը համալիրն է իրարու նման, բայց նաև իրարմէ բաւական տարբեր գաղութներու: Զայն իբրև միատարր ամբողջութիւն դիտելը քննարկողը կը դնէ մասնակի, հապճեպ գործ ընողի աթոռին:

Ինքնաճանաչումի օղակներուն ընդարձակումը և բաժնեկցութիւնը մեզ կը հասցնէն ցաւոտ դաշտ մը: Քիչ առաջ խօսեցանք «անծանօթներու» փաղանգներու մասին: Հիմա, երբ կը խօսինք «տարածուելու» մասին, պէտք է մտածել, թէ ինչպէ՞ս կարելի է «ծանօթին» օղակը ընդարձակել և ներգրաւել հեռու ինկած, անտարբեր և անհաղորդ (կամայ, թէ ակամայ) հաւաքականութիւնները, անոնք ըլլան երիտասարդներ, հայ հաւաքականութենէն հեռու ինկած բնակիչներ և այլն: Հոս ալ ինքնաճանաչումը և տեղեկութեանց, փորձառութեանց բաժնեկցութիւնը կրնայ նպաստաւոր դեր ունենալ:

Խօսինք օրինակով:

Մեզի համար լուրջ մարտահրաւէր է ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ՆԵՐԳՐԱՒՈՒՄԸ հայութեան դաշտին մէջ: Տասնամեակներ շարունակ կեդրոնացած ենք ախտաճանաչումներ կատարելու վրայ (սխալ չենք ըրած), սակայն անհրաժեշտ խորութեամբ չենք քննարկած հասանելի և աւելի դժուար միջոցները: Հոս ալ գործածենք ԲԱՆԱԼԻ բառ մը՝ ԳՈՐԾԸ: Երիտասարդին կարելի է հազար քարոզ ու պատգամ ուղղել ամէնէն բարի նպատակով, սակայն զայն ՆԵՐԳՐԱՒԵԼԸ ունի իր գաղտնիքները: Ունինք մարզական և կուսակցական երիտասարդական միաւորներ: Անոնց դաստիարակութեան և զանոնք հայկական մթնոլորտի մէջ պահելու համար նիւթական միջոցներ և ճիգ չենք խնայեր: Լաւ կ՚ընենք, բայց տեղ մը կը մնանք չբաւարարուած: Հազուադէպօրէն կը դիմենք յիշեալ բանալիին: Ձև մըն է, օրինակի համար, մեր հասողութեան մէջ եղող երիտասարդները բերել այս հարցերուն քննարկման դաշտ, հարց տալ եկողներուն, թէ ինչպէ՞ս և ինչո՞ւ եկած են տուեալ դաշտերը (միշտ սահմանափակ մնացող), ինչն է լաւն ու չբաւարարողը: Երկրորդ ու աւելի կարևոր հարցումը. եկողները՝ իրենք, ինչպէ՞ս կրնան ընդարձակել ծանօթներու օղակը և քայլ առ քայլ հասնիլ անծանօթներուն, հեռու ինկած-մնացածներուն: Այլ խօսքով, երիտասարդը մղել, որ ի՞նք ստեղծէ պահանջուած ԳՈՐԾԸ և յանձն առնէ աշխատիլ իր բանալիք դաշտերուն մէջ: Չմոռնանք, որ երիտասարդները շատ աւելի դիւրութեամբ կը հասկնան իրարու լեզուն, քան երէցները, որքան ալ որ հոգա-

ծու, սիրող ու նախանձախնդիր ըլլան երիտասարդին նկատմամբ: Նման մօտեցում ինքնաբերաբար ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ ԻՍԿ ՁԵՌՔՈՎ պիտի ստեղծէ գործի դաշտ: Պէտք կայ արձանագրելու, որ երիտասարդը շատ աւելի վարպետ է արդի արհեստագիտութիւնը նման աշխատանքի լծելու իմաստով: Կը մնայ, որ գործի կոչուող կորիզը, այսինքն՝ ծանօթներու օղակը օժտուի այն դրամագլուխով, այսինքն՝ հայութեան և հայկականութեան պահպանման տուեալներով, որոնք, իբրև կամուրջ, ինք պիտի հասցնէ անծանօթին ու զայն ներգրաւէ հայութեան կեանքի տարբեր ոլորտներուն մէջ: Այս ծիրին մէջ արձանագրենք, որ երիտասարդները կրնան գտնել ձևերը՝ համացանցի վրայ վերջին տարիներուն ստեղծուած փոքր ու մեծ խմբակներու հաւաքագրման և մեզ յուզող հարցերու «ներարկման», աւելի կազմակերպ տարածման: Սա բոլորովին նոր աշխատանք չէ. կան անհատական և միութենական նախընթացներ:

Պէտք չէ անտեսել երիտասարդներու և առհասարակ հասարակութիւնը կազմող անհատներու հետաքրքրութեանց տարբերութիւնները: Սա կը նշանակէ, որ պէտք է գործել պրիսմակի տրամաբանութեամբ: Կան երգով, արուեստի այս կամ այն կալուածով, գրականութեամբ, գիտական և այլ ոլորտներով հետաքրքրուողներ, ուրեմն, ներգրաւումի դաշտ ալ պէտք է տարածուի նման հորիզոններու վրայ: Մենք անցեալ տասնամեակներուն որոշ, բայց սահմանափակ, հետզհետէ նեղցող սահմաններով յաջողութիւններ արձանագրած ենք կուսակցական (պատանեկան, երիտասարդական, ուսանողական) և մարզական միաւորներու դաշտին մէջ: Նկատած ենք, որ երբեմն անհատ արուեստագէտներ՝ երաժիշտներ, բեմի մարդիկ անձնական նախաձեռնութիւններով որոշ յաջողութիւն արձանագրած են երիտասարդներու ներգրաւման մէջ, սակայն անհատական նախաձեռնութիւնները ընդհանրապէս մնացած են ժամանակաւոր փայլատակումներու սահմաններուն մէջ: Ճանաչողութեան տարածումը կրնայ նկատի ունենալ նաև այս մանր գիծերը, և սկիզբ առած նախաձեռնութիւնները կրնան ստանալ մնայուն ընթացք:

Ճանաչողութեան և մեր մատնանշած «նեղ օղակներու» տարածման առաջադրանքը իր դիմաց ունի լուրջ մարտահրաւէր մը, որ միայն հայկական կեանքին չի վերաբերիր, այլ համաշխարհային տարածք ունի: Սա ընթերցումի վարժութեան այլափոխումն է: Հաղորդակցութեան, ծանօթութիւններու և գիտելիքի ընդարձակման համար հիմնական գործօն է ընթերցումը, մինչդեռ ի՞նչ տեղի կ՚ունենայ մեր այսօրուան աշխարհին մէջ: Ընթերցումի վարժութիւնը զգալիօրէն կրճատուած է, «դիմատետրեան» ու նման գրառումներ դարձած են տիրապետող, անխուսափելիօրէն նաև հորիզոններ նեղցնող: Եւ ահա հոս ալ կարևոր դեր կը վերապահուի մեր երիտասարդութեան, հայկականութեան պահպանումին ու զարգացման համար պատրաստուելու կոչուած երիտասարդութեան, որպէսզի ի՞նք գտնէ արհեստագիտութեան այս «չարիքները» բարիքի վերածելու ձևերը: Հոս ալ կայ նախընթացը, և որոշ աշխատանք կը տարուի այս գետնի վրայ, ըսել կ՚ուզենք՝ որոշ նիւթերու թուայնացումն ու տարածումը: Այս կալուածը կը կարօտի յաւելեալ խթանումի, մասնաւորաբար՝ երիտասարդներու ձեռքերուն և գաղափարներուն ներգրաւման:

Լայնածիր աշխատանքի շարժակը

Խօսեցանք իրավիճակներու և գաղութային ու համագաղութային աշխատանքի կարելիութիւններու մասին (մեր նշումները սպառիչ չէին կրնար ըլլալ): Կ՚ուզենք եզրակացնել առաջարկով մը, որ կը կարօտի յատուկ շեշտադրումի:

Սփիւռքի հարցերուն ցանկագրումը (հոգ չէ, թէ մասնակի, յարափոփոխ և մի՛շտ ամբողջականացումի ձգտող), լուծումներու որոնումն ու աւելի կարևորը՝ այդ ուղղութեամբ ԳՈՐԾԸ կը կարօտի արհեստավարժի մօտեցման: Արհեստավարժ ըսելով՝ ի մտի չունինք միայն վճարովի մասնագէտներու և բանգէտներու գործի լծումը, այլ նաև այդ աշխատանքը շարժման մէջ դնող, շարժման մէջ պահող ՇԱՐԺԱԿԻ մը (dynamo):

Քիչ առաջ խօսեցանք իւրաքանչիւր գաղութի մէջ յատուկ և լայնածիր առաքելութեամբ աշխատանքի միաւորներու կազմութեան մասին: Գիտենք, որ Հայ դատի յանձնախումբերը ունին յատուկ առաքելութեամբ աշխատանք, սակայն անոնց աշխատանքի ծիրը ի բնէ ճշդուած է և սահմանուած է ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ դաշտերուն մէջ:

Սփիւռքեան մարտահրաւէրները մեզ հասցուցած են այնպիսի հանգրուանի մը, որ կը հարկադրէ նման մօտեցումով, սակայն շատ աւելի լայն հորիզոններով գործ: Այլ խօսքով, եթէ իւրաքանչիւր գաղութ պիտի ունենայ իր տեղական շարժակը, անոնց միջև հաղորդակցութիւնը պէտք է անցնի պարագայականի կամ հազուադէպի (համագումարներ, հանդիպումներ և այլ) ծիրէն անդին, դառնայ յարատև ու զարգացող, կամրջող:

Արդէն կը խօսինք ՀԱՄԱՍՓԻՒՌՔԵԱՆ ՄԻԱՒՈՐԻ մը մասին, որ պիտի ունենայ հիմնական երկու առաքելութիւն:

Առաջին գիծը պիտի ըլլայ համակարգել գաղութներու ԳՈՐԾԵՐԸ. նկատի ունենալ մարտահրաւէրներն ու տագնապները, կարողականութիւնները (մարդուժ և նիւթական): Այս մասին յաճախ խօսուած է, չուզեցինք այս սիւնակին մէջ կրկնութիւններ ընել, մանաւանդ, որ «Դրօշակի» այս «կլոր սեղանի» առաջին փուլին այդ հարցերը բաւականին արծարծուած էին:

Երկրորդ գիծը պիտի ըլլայ Սփիւռքը յարատև կապի մէջ պահելը մայր հայրենիքին հետ, օգտուիլ անոր կարողականութիւններէն, փոխադարձաբար Սփիւռքի կարողականութիւնները ի սպաս դնել հայրենիքին: Սկիզբը շեշտեցինք, որ Սփիւռքը ինքնանպատակ չէ ու թէև ունի ինքզինք ըլլալու, ինքզինք ապրեցնելու ու զարգացնելու մարտահրաւէրները, սակայն նոյնքան ալ կարևոր առաքելութիւն մը ունի՝ գործել ի նպաստ հայրենիքին: Պէ՞տք է յիշենք Հայ դատի յանձնախումբին ու նման միաւորներու նպաստը տուեալ ոլորտներուն մէջ:

Հայրենիք-Սփիւռք փոխօգնութեան հանգրուաններ կտրած ենք վերջին տասնամեակներուն՝ մերթ ժամանակաւոր, մերթ երկարաշունչ: Ժամանակաւորներէն

յիշենք Լիբանանի և Սուրիոյ տագնապալի օրերուն հայրենիքէն հասած օգնութիւնները, Սպիտակի երկրաշարժին, բայց մանաւանդ Արցախի երկարաշունչ պատերազմի օրերուն սփիւռքեան օճախներէ հայրենիք հասած նպաստները, նոյնինքն «Հայաստան համահայկական հիմնադրամի» գործունէութիւնը: Չենք մոռնար նաև խորհրդային վերջին տասնամեակներուն հայրենիքէն դէպի Սփիւռք հասնող ուղղակի և անուղղակի լումաները (գիրք, դասագիրք, երգ և այլն):

Այսօրուան աշխարհին ու ստեղծուած հին-նոր մարտահրաւէրները հրամայական կը դարձնեն նոյնինքն հայրենիքին կողմէ Սփիւռքի շարժակին ստեղծման նպաստող ենթահողի ամրագրումը: Ի մտի չունինք միայն խորհրդային տարիներու՝ «Սփիւռքի հետ կապի կոմիտէին, վերանկախացումէն ետք՝ Սփիւռքի նախարարութեան, ապա նաև՝ վերջին տարիներուն ստեղծուած Սփիւռքի յանձնակատարի նախընթացները, այլ շատ աւելի ընդարձակ և տարողունակ աշխատանք: (Չենք ուզեր մտնել խորհրդային տարիներուն ու յաջորդած տասնամեակներուն միականի կամ կիսկատար գործին, իսկ ներկայի՝ վնասարար «քաղաքականութեան» մանրամասնութիւններուն մէջ):

Առաջադրուած ՀԱՄԱՍՓԻՒՌՔԵԱՆ ՄԻԱՒՈՐԸ, շարժակը, եթէ առաւելաբար պիտի կազմուի սփիւռքեան ուժերով (որովհետև սփիւռքցիները, ընդունինք կամ ոչ, շատ աւելի լաւ իրազեկ են հարցերուն), անիկա չի կրնար տարողունակ գործ տեսնել՝ առանց հայրենիքի յենարանին: Անոր տրամադրութեան պիտի յանձնուին այս ու նմանօրինակ քննարկումներու, գիտաշխատութիւններու թղթածրարները՝ իբրև մեկնակէտ ու շօշափելի (ոչ մսխելի) դրամագլուխ՝ տարողունակ գործին: Եւ քանի կը խօսինք յենարաններու մասին, արձանագրենք նաև սփիւռքեան յենարաններ: Այս աշխատանքին մէջ պիտի ներգրաւուին քաղաքական կուսակցութիւնները (եթէ ոչ ուղղակի ներկայացուցիչներով, որովհետև, ըսինք, աշխատանքը մասնագիտական ոլորտ պէտք է փոխադրել՝ գոնէ անոնց ամբողջական զօրակցութեամբ ու կարողականութիւններու տրամադրումով), եկեղեցիները (բոլոր յարանուանութիւնները), մշակութային և արհեստավարժներու միութիւններն ու ընկերակցութիւնները, մէկ խօսքով՝ Սփիւռքը կազմաւորող բոլոր միաւորները, որոնց կորիզն ալ ԸՆՏԱՆԻՔՆ է:

Սփիւռքն՝ ինք իրեն համար և Սփիւռքն՝ ի սպաս հայրենիքին մտածողութիւնները համադրող այս «շարժակն» է, որ յիշեալ նախադրեալներու ըստ կարելոյն ամբողջացումով պիտի ըլլայ հայութեան երկու մեծ հիմերուն միջև կամուրջը, պիտի խափանէ խզումի որևէ շարժում ու գործօն:

Յաջորդ փուլին, այսինքն՝ երկու թեներուն պահպանման գործէն ետք ու անոր զուգահեռ նոյն յղացքով ու հորիզոններով կարելի է անցնիլ յաջորդ փուլին, այսինքն՝ Սփիւռքի զարգացման և կարողականութեանց աճին: Անիկա պիտի ըլլայ հեղինակն ու գործադիրը Սփիւռքի յանձնանձումի ընդհանուր ռազմավարութեան և յարափոփոխ վիճակներու լոյսին տակ պիտի ճշդէ համապատասխան մարտավարութիւն, ինչպէս՝ գտնել դպրոցի և ազգային այլ միաւորներու ամրագրման և խրախուսման միջոցները (նիւթական և բարոյական) և այդ բոլորը ծառայեցնել զոյգ թեներուն՝ նոյնինք Սփիւռքին և հայրենիքին:

Այս համապարփակ շրջագիծը առաջադրելով՝ չենք ուզեր մտնել մասնագիտական գործի ոլորտներուն մէջ, որովհետև կը հաւատանք, որ Սփիւռքի մէջ ունինք նման առաքելութիւն իր ուսերուն վերցնելու ատակ սերունդ մը: Աւելորդ չենք նկատեր շեշտել, որ գործի լծուողը ոչ միայն լաւապէս իրազեկ պիտի ըլլայ տագնապներուն ծալքերուն, այլ նաև ատակ պիտի ըլլայ իրական լուծումներու որոնման (ցարդ ասիկա մասնակի, կիսկատար, իրականութեանց անյարիր, հետևաբար՝ ոչ արդիւնաբեր կը մնայ): Առաջադրուած շարժակին կազմութիւնը առաջին գործնական քայլը պիտի ըլլայ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ գործին, և նոյն այդ շարժակն է, որ պիտի ձեռնարկէ «ճամբու քարտէսի» մը ուրուագծման՝ ի սկզբանէ գիտնալով, որ որևէ ծրագիր մի՛շտ ալ ենթակայ պիտի մնայ սպասելի կամ անակնկալ նորութիւններու (1975-էն առաջ Լիբանանի տագնապը նախատեսելի չէր, նմանապէս «արաբական գարունի» ահաւոր հետևանքները, հապա՞ «թաւշեայ յեղափոխութիւնը»՝ իր հետևանքներով, Արցախի բռնագրաւումն ու հայաթափումը...):

Աւարտելու համար նշենք: Մեր այս տողերը չարձանագրեցինք երազային և անհասանելի, իտէալական բաներու մասին խօսելու համար (որևէ գործի համար իտէալն ու երազը կարևոր նախադրեալներ են): Նման մտածումներ արձանագրելու մէջ ոչ առաջինն ենք, ոչ ալ պիտի ըլլանք վերջինը: Որևէ սայլ տեղէն շարժելու համար կայ կարևոր նախադրեալ մը. ըստ կարելոյն դիտել գործի ամբողջական դաշտը, աչքի առջև ունենալ մարտահրաւէրները և ճամբայ ելլել յստակ ուղեգիծով, քալել յարատևելու կամքով (բազմաթիւ երախտաշատ նախաձեռնութիւններ ունեցած են կարճատև կեանք ու մնացած անվաղորդայն) և ազգին բոլոր կարելիութիւնները ի մի բերելու «իմս-քուկդ»ի տրամաբանութենէն անդին ու վեր՝ «մերը» հետապնդելու կամքով:

Կազմուելիք «ճամբու քարտէսը» պիտի ըլլայ փուլային, իրագործումները պիտի չըլլան կարճ ժամանակի մէջ, այլ պիտի ըլլան երկարաշունչ՝ առանց շնչասպառութեան: Ճամբայ ելլողը, խորքին մէջ շատ բաներ շարունակողը պիտի գիտնայ, որ ժամանակը ի նպաստ մեզի չի բանիր, հետևաբար պիտի լուծէ նաև այս բարդ հանելուկը:

Սոնա Զէյթլեանի կեանքի գործը

Հրազդան Զէյթլեան
Սթրուէր Ճարտարապետական գրասենեակի հիմնադիր, (Լոս Անճելէս), հրապարակագիր և բանաստեղծ

Սույն թվականի ապրիլի 8-ին Լոս Անժելեսում հանդիսավորապես նշվել է սփյուռքահայ հայտնի մտավորական Սոնա Զէյթլեանի հոբելյանն ու ծանրակշիռ գիտական վաստակը: «Դրօշակը» ներկայացնում է հիշյալ հանդիսության ժամանակ արժանավոր մտավորականի ու մարդու մասին հնչած նրա զավակի՝ Հրազդան Զեյթլյանի հակիրճ խոսքը: Միաժամանակ «Դրօշակի» այս համարում զետեղված է Հրազդան Զեյթլյանի գրությունը որում, մանրամասնորեն ներկայացվում է Սոնա Զեյթլյանի ապրած կյանքն ու ստեղծագործական վաստակը:

ՍՈՆԱ ԶԷՅԹԼԵԱՆԻ կեանքի գործը եղաւ եւ է հայ կնոջ ինքնուրոյն, հպարտ տիպարի ուսումնասիրութիւնը: Կարեւորաբար, դաստիարակչական աշխատանքներու ընդմէջէն՝ հայ կանանց ղեկավար գործունէութեան քարոզչութիւնը:

Իր գրութիւնները հարց ունին հայ կնոջ, այսպէս կոչուած, աւանդական կերպարին հետ՝ իբրեւ լոկ այր մարդուն ընկերակիցը կամ նեցուկը:

Քանդելով այս սխալ, նուազեցնող ըմբռնումը՝ Սոնա կը ներկայացնէ հայ կինը՝ իբրեւ իր ուրոյն գաղափարներով եւ անկախ մօտեցումներով ու կազմակերպական կարողութիւններով համահաւասար այր մարդուն:

Աւելի՛ն, Սոնայի գործը ցոյց կու տայ, որ հայ կինը՝ իր ազգային գործունէութեամբ, յառաջատար դերակատարութիւն ունեցած է կիներու ազատագրութեան միջազգային շարժման մէջ եւս:

Ես չորս հիմնական գաղափարներ կը տեսնեմ Սոնայի գործին մէջ:

1. Առաջին գաղափարը՝ նպատակային պատմաբանութիւն (history with a progressive agenda)

Սոնա Զէյթլեան պատմաբանն է հայ կնոջ ղեկավար դերին:

Սոնայի գործը կը վերաբերէ կնոջ կեդրոնական դերին հայոց պատմութեան մէջ, բա՛ն մը, որ իրմէ առաջ չէր կատարուած:

Իր գործը կարելի է կոչել «նպատակային պատմաբանութիւն», որովհետեւ Սոնա կը պատմէ, որպէսզի ցոյց տայ, թէ ինչպէ՞ս հայ կինը եղած է (եւ է՛) հիմնական դերակատար եւ մղիչ գործօն Հայոց պատմութեան մէջ:

Կիլիկիոյ Զապէլ թագուհիէն մինչեւ Զապէլ Եսայեան և մինչեւ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Տիանա Աբգար, հայ կիները կը ներկայացուին իբրեւ պատմական գործիչներ, որոնք հիմնական ազդեցութիւն ունեցած են հայոց պատմութեան հոլովոյթին վրայ:

Յատկապէս 19-րդ դարու վերջաւորութեան եւ 20-րդի սկիզբը արդիական յառաջդիմական շարժումին զուգահեռ հայ կնոջ կարևոր դերակատարութիւնը հայ յեղափոխական շարժման մէջ կը հանդիսանար կիներու ղեկավարութեան կարեւոր իրագործում մը ո՛չ միայն մեր, այլ նաեւ միջազգայի՛ն պատմութեան մէջ:

2. Երկրորդ գաղափարը՝ հայ կիներու ուսումնասիրութեան մարզի ստեղծում

Սոնա հայ կիներու ուսումնասիրութեան մարզի («Armenian women studies»-ի) հիմնադիր ռահվիրան է:

Իր նորատեսակ եւ յեղաշրջական «Հայ կնոջ դերը հայ յեղափոխական շարժման մէջ» գիրքը՝ տպուած 1968-ին, կը համարուի առաջնորդող գործ մը (pioneering work մը), որ ստեղծեց եւ հաստատեց հայ կիներու ուսումնասիրութեան նոր դաշտը ինքնի՛ն:

Լայնօրէն ուսումնասիրած է, գրած է եւ դասախօսած է հայ կնոջ ընկերային, քաղաքական եւ մշակութային դերին մասին հայոց պատմութեան լման ընթացքին՝ կիները ներկայացնելով իբր յառաջդիմութեան ու փոփոխութեան գործակալներ (Armenian women as agents of change):

Սոնա Զէյթլեան հայկական կնոջագիտութեան «Armenian Feminism»-ի կարեւոր դէմքերէն մէկն է:

Ան արձանագրած է հայ կնոջ նպաստը սեռերու հաւասարութեան եւ կենտերային արդարութեան («equity»-ի եւ «gender equality»-ի) միջազգային հաստատման մէջ:

Իր հրատարակուած գիրքերէն անդին Սոնան գրած է բազմաթիւ յօդուածներ ու գիտաժողովի ներկա-

Աշխատանքի պահուն

Սոնա և Հրազդան Ջէյթլեաններ

յացումներ, որոնք կը կեդրոնանան հայ կնոջագիտութեան («Armenian feminism»-ի) յղացքին շուրջ:

Սոնայի գործերը կը քննարկեն կնոջագիտութեան միջհատումը կամ խաչմերուկը, «intersection»-ը, եթէ կ՚ուզէք՝ մշակոյթի, ազգային ինքնութեան, քաղաքացիական ընկերութեան (այսինքն՝ «civil society»-ի) հետ:

Հայրս՝ Սարգիս Ջէյթլեան կը սահմանէր հայկական արեւելումը՝ իբրեւ հայութեան ինքնուրոյն մասնակցութիւնը համաշխարհային պատմութեան յառաջընթացին մէջ: Իր կարգին Սոնայի գործը կը բիւրեղացնէ հայ կնոջ դերակատարութիւնը հայկական արեւելումի կերտման մէջ:

Գաղութէ գաղութ իր դասախօսութիւններուն մէջ Սոնա յատկապէս վերբերած է հայ կինը՝ իբրեւ խարիսխը հայկական ընտանիքին: Ան կայուն ընտանիքը գնահատած է իբր անհատի մտաւորական աճման ու զարգացման բնական օրրանը և ազգի տոկունութեան ու գոյատեւման հիմնական ազդակը:

3. Երրորդ գաղափարը՝ մատչելի ազգագրութիւն (ethnology with a social and political purpose)

1979-ին կը հրատարակուի Սոնայի «Մուսա լերան ժողովրդական հեքիաթներ» ընդարձակ ազգագրական աշխատանքը:

Հոս միտումը զուտ գիտական ուսումնասիրութիւն կատարելը չէր միայն, այլ նպատակն էր այդ հեքիաթները մատչելի՛ դարձնել ընթերցողներու լայն շրջանակի մը, ճի՛շդ ինչպէս Կոմիտաս Վարդապետը ատենին հաւաքած էր մեր գաւառական երգերը եւ մատչելի դարձուցած զանոնք արդի հայութեան համար:

Սոնա կը գործածէ «մշակո՛ւմ» բառը՝ սահմանելու համար մատչելիացման իր գործը:

Իրենց կարեւոր ազգագրական արժէքէն անկախ՝ հայ հեքիաթներու արդի՛ հայերէնով մշակումը ո՛չ միայն մտաւորական հարստութիւն ստեղծող գործ էր, այլ նաեւ, ներկայացնելով իւրայատուկ մեր ազգագրական երանգները, մեր ազգային նկարագրի կերտում:

Այս իմաստով հեքիաթներու մշակումը կարեւոր քաղաքական տարողութիւն մը ունէր:

4. Չորրորդ գաղափարը՝ Սփիւռքի գաղութներու ինքնակազմակերպում (diasporan self-organization)

2004-ին լոյս տեսաւ Սոնայի կոթողական ուսումնասիրութիւնը՝ «Հայութեան ներդրումը Եգիպտոսի միջնադարեան եւ արդի պատմութեան մէջ» խորագրով:

Կարեւորագոյն միտքը այս ուսումնասիրութեան մէջ հայ գաղութներու ինքնակազմակերպումի գաղափարն է՝ ի նպաստ գաղութի հայեցի նկարագրի վերապրումին:

Նաև ու միաժամանակ պատմական արձանագրումն է հայ կիներու ուրոյն ղեկավարութեան մեր գաղութներու ինքնակազմակերպման մէջ եւ միաժամանակ հիւրընկալ երկիրներու վերելքին մէջ, ինչպէս, օրինակ՝ Այյուպեան Եգիպտոսի սուլթան դարձած Շակարաթ էլ-Տուրր հայազգի կնոջ պարագային:

Եզրակացնելու համար՝ հ**այ կիներու ղեկավարութեան՝ իր նպատակային պատմաբանութեամբ, հայկական կնոջագիտութեան մարզի՝ իր ստեղծումով,**

դաստիարակչական ազգագրութեան՝ իր կիրարկմամբ, Սփիւռքի գաղութներու ինքնակազմակերպման մէջ կիներու նկարագրութեամբ Սոնայի գործի գաղափարական ենթահողը հայ կնոջ ղեկավարութեան պատմական տարերքի վերբերումն է:

Եւ առ այդ Սոնա Ջէյթլեանի գործին պատգամը մարտահրաւէր մըն է հայ կին ղեկավարներու նո՛ր սերունդի մը, որ անո՛նք ալ իրենց կարգին ըլլան արժանի՛ ժառանգորդներ մեր պատմութեան կին տիտաններուն ու ստանձնեն՝ ջահակրութիւնը հայ կիներու ղեկավարութեան՝ մեր ազգային ներկան ու ապագան կնոջավարօրէ՛ն կերտելու համար: ■

Սոնա Զէյթլեան
Կենսագրութիւնը և ստեղծագործական ուղին

Հրազդան Զէյթլեան
Սթրուէր Ճարտարապետական գրասենեակի հիմնադիր, (Լոս Անճելէս), հրապարակագիր և բանաստեղծ

Սոնա Զէյթլեան մրցանակակիր հեղինակ է, ազգագիր, մշակութային գործիչ, հրապարակագիր և դաստիարակ: Հայ կիներու ուսումնասիրութեան մարզի հիմնադիր ռահվիրաներէն է: Լայնօրէն գրած և դասախօսած է հայ կնոջ ընկերային, քաղաքական և մշակութային դերին մասին հայոց պատմութեան լման ընթացքին և յատկապէս 19-րդ դարէն սկսեալ՝ հայոց պատմութեան և հայ ազգի վերանորոգման ընթացքին մէջ՝ զանոնք ներկայացնելով իբր յեղաշրջումի գործօն դերակատարներ, յառաջդիմութեան ու փոփոխութեան գործակալներ: Արձանագրած է հայ կնոջ մտաւորական և քաղաքական ազդեցութիւնը սեռերու հաւասարութեան հաստատման և կենտերային արդարութեան յառաջացման ծիրէն ներս:

Իբր վաստակաւոր մշակութային գործիչ և հասարակական ղեկավար՝ Զէյթլեան իր երկարատև ասպարէզի ընթացքին գործած է Գահիրէի (Եգիպտոս), Այնճարի և Պէյրութի (Լիբանան), Պուենոս Այրեսի (Արժանթին), Մոնդեվիտէոյի (Ուրուկուայ), Մոնդրէալի և Թորոնթոյի (Քանատա), Լոս Անճելըսի, Սան Տիէկոյի, Սան Ֆրանսիսքոյի, Հիւսթոնի, Տալասի, Շիքակոյի, Տիթրոյթի և ԱՄՆ-ի այլ հայկական համայնքներէն ներս:

Զէյթլեանի գրութիւնները կը կեդրոնանան հայ կնոջականութեան (ֆեմինիզմի) յղացքին շուրջ և կը քննարկեն անոր միջահատումը մշակոյթի, ազգային ինքնութեան, քաղաքացիական ընկերութեան և ընտանիքի կառոյցին հետ, զոր կը գնահատէ իբր հայ ազգի տոկունութեան ու գոյատևման հիմնական ազդակը:

Ան խորապէս ուսումնասիրած, գրած և դասախօսած է հայ կնոջ ունեցած առանցքային դերին մասին 19-րդ դարու կէսէն սկսած Արևելեան Հայաստանի և Արևմտեան Հայաստանի մէջ զարգացած ազգային զարթօնքի շարժման մէջ՝ ներառեալ անգրագիտութեան դէմ իրենց արշաւը՝ մշակութային վերածնունդ ապահովելու համար Արևմտահայաստանի ներքին տարածքէն ներս, իրենց մասնակցութիւնը հայ ազատագրական պայքարին, իրենց տոկունութիւնը և տևականացնումը ցեղասպանութեան և անոր յաջորդող տարիներուն ընթացքին, իրենց լայնածաւալ քաղաքացիական և մարդասիրական գործունէութիւնը Հայաստանի առաջին հանրապետութեան մէջ, որ կ՚ընդգրկէ Կարմիր խաչի հիմնադրութիւնը և քուէարկելու իրաւունքի ապահովութիւնը, իրենց դերը Հայաստանի կառավարութեան առողջապահութեան, կրթութեան և ընկերային ծառայութեան նախարարութիւններուն և դիւանագիտական մարզին մէջ (աշխարհի առաջին կին դիւանագէտը հայ եղած է), իրենց



նշանակելի գործունէութիւնը Միջին Արևելքի տարածքին վերապրող կիներն ու աղջիկները թիւրք, քիւրտ և արաբ գերութենէ փրկելու, հազարաւոր որբեր խնամելու և անոնց ուսումն ու ապրուստը ապահովելու, փախստական, գաղթական ժողովուրդը հայաստանամերձ Սփիւռքի մէջ տեղաւորելու և հայկական համայնքներու հաստատարկութեան և հայակերտման աշխատանքներուն մէջ, աւելի ուշ՝ Խորհրդային Միութեան անկումէն ետք, իրենց երևելի ներդրումը իբր փոփոխութեան և ինքնակազմակերպման գործակալներ, որոնք կը զօրացնեն քաղաքացիական ընկերութեան հասկացողութիւնը, կը յառաջացնեն ընկերային և տնտեսական հզօրացում և կը ստանձնեն առաջնորդող դերակատարութիւն ընկերային, քաղաքական, մշակութային և առողջապահական ոլորտներուն մէջ այսօրուայ Հայաստանի Հանրապետութենէն մինչև համատարած Սփիւռք:

60-ական թուականներուն սկիզբը՝ ընտանեօք Այնճար, Լիբանան բնակութեան ընթացքին, Սոնա Զէյթլեան ազգագրական հետազօտութիւններ կը կատարէ՝ նախաձեռնելով Մուսա լերան բանաւոր աւանդութեան մաս կազմող գիւղացիներուն կողմէ իրենց բնօրինակ բարբառով պատմուած հեքիաթներու արձանագրումը: Այնուհետև հեքիաթները մատչելի դարձնելու միտումով կը հրատարակէ անոնց արևմտահայերէնով մշակումը: Իրենց կարևոր ազգագրական արժէքէն անկախ՝ այս ժողովրդական հեքիաթները կը յատկանշուին իրենց իւրայատուկ ազգային երանգներով,

ինչպէս նաև հարուստ դաստիարակչական և բարոյական բովանդակութեամբ:

Ան նաև գրած է հայ առասպելական պատմութեան հերոսներու և հերոսուհիներու մասին՝ զանոնք ներկայացնելով պատանի ընթերցողներուն մատչելի պատմողական ոճով:

Աւելին, մղուած Միջին Արևելքի հայկական համայնքներու հանդէպ ունեցած իր հետաքրքրութենէն՝ պատրաստած և ապա հրատարակած է լայնածաւալ ուսումնասիրութիւն մը հայերու ունեցած կարևոր նպաստին մասին Եգիպտոսի միջնադարեան և արդի պատմութեան մէջ:

Սոնա ծնած է Սիմոնեան, Եգիպտոս, Գահիրէի պատմական արուարձաններէն Մաթարեայի մէջ, որ քսաներորդ դարու սկզբին ունէր մեծ թուով հայ բնակիչներ: Իր հօր՝ Հրանդ Սիմոնեանի ընտանիքը ծագումով Կալիբոլիէն էր (այսօր թուրքերը կը կոչեն Չանաքքալէ) և հիւրանոց մը կը աշխատեցնէր այդ ատենօք կենսունակ հայ համայնքին մէջ: Հրանդ ուսանող եղած էր Պոլսոյ հռչակաւոր Ռոպերդ քոլէճին մէջ, երբ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին կը զինուորագրուի անգլիական բանակին, ուր կը ծառայէ հաղորդակցութեան բաժանմունքին մէջ իր լեզուական և գրաւոր հմտութեան պատճառով: Ցեղասպանութեան ժամանակ անգլիական բանակի անդամակցութիւնը զինք կը փրկէ տեղահանութենէ: Սակայն իր ծնողքը՝ Սիրական և Մարի և իր միակ քոյրը՝ Սիրանոյշը կ'աքսորուին դէպի Սուրիոյ անապատ՝ Տէր-Զօր: Հոն է, որ Սուրիոյ պետական համակարգի հայ բժիշկ, տոքթոր Սրապեանը ընտանիքը կը փրկէ որոշ մահէ և կ'ամուսնանայ Սիրանուշին հետ: Տարի մը ետք Սիրանոյշ կը մահանայ ծնունդաբերութեան ատեն, սակայն մանչը՝ Յակոբ կ'ազատի և կը մեծնայ մեծ մօր և մեծ հօր հոգատարութեան տակ: Պատերազմէն ետք Հրանդ կը փնտռէ ծնողքը և վերջ ի վերջոյ զանոնք և իր քրոջ որդին Հալէպի մէջ կը գտնէ: Այդ ժամանակ անգլիական բանակի պաշարի և ճաշարանի տնօրէն ըլլալով՝ Հրանդ տեղաւորուած էր Գահիրէ: Այսպիսով՝ Սիմոնեան ընտանիքն ու փոքրիկ Յակոբը կը հաստատուին Եգիպտոս՝ իր քով: Երբ տոքթոր Սրապեան սուրիական բանակի ծառայութենէն ազատ կ'արձակուի, ետ կը պահանջէ իր զաւակը և կը ստանձնէ անոր խնամքը. աւելի ուշ Յակոբ Սրապեան կը հաստատուի Պէյրութ:

1930-ական թուականներու սկիզբը Հրանդ կ'ամուսնանայ Աղաւնի Իսբենճեանին հետ, որուն հայրը՝ Յարութիւն (Արթին) միացած էր իր ազգականներուն, որոնք արդէն Եգիպտոս հաստատուած էին Եդեսիայէն (այսօր թուրքերը կը կոչեն Թոքաթ): Անոր մայրը՝ Տիգրանուհին, ծագումով ակնցի էր: Արթին Իսբենճեան մեծահարուստ ներկայացուցիչն էր յայտնի Մելքոնեան ծխախոտի ընկերութեան, որ յետագային կոչուեցաւ Մերձաւոր Արևելքի ծխախոտի ընկերութիւն (Near Eastern Tobacco Company): Ան նաև եղած է Հայ բարեգործական ընդհանուր միութեան (ՀԲԸՄ) Եգիպտոսի մասնաճիւղի ատենապետ: Անոր Մաթարեայի երեքյարկանի դղեակը հանդիպման վայրը

Հայրական ընտանիքը

եղած էր շրջանի հայ գրագէտներուն, ինչպէս՝ Արշակ Ալպոյաճեան, հայ գաղթականութեան պատմութիւնը արձանագրող բեղմնաւոր գրող Պետրոս Տեբոյեան, Գահիրէի Ռամկավար ազատական կուսակցութեան (ՌԱԿ) «Արև» օրաթերթի խմբագիր: Զեռներէց մարդ մը ըլլալով՝ Արթին Իսբենճեան կը զբաղի մեղուաբուծութեամբ, կը մշակէ հարսանեկան ծաղկեփունջերու ծաղիկներ, յատկապէս՝ շուշաններ, ինչպէս նաև կ'արտադրէ «պարսիմ» ձիերու յատուկ կեր, որ մեծապէս պահանջուած էր տեղացի և արաբ ձիաբուծներու կողմէ:

Իր ամուսնութենէն ետք Հրանդ Սիմոնեան պատուաւոր արձակում կը ստանայ անգլիական բանակէն և կը դառնայ տնօրէն Մերձաւոր Արևելքի ծխախոտի ընկերութեան Հին Գահիրէի տեղաշրջանին, որ կը ներառնէր յայտնի Խան Էլ-Խալիլիի զբօսաշրջիկական կեդրոնը և Ալ-Ազհար մզկիթի թաղամասը: Ընտանեօք կը հաստատուին Մաթարեայ՝ ընդարձակ դղեակի մը մէջ, Իսբենճեաններուն մօտ: Հոն է, ուր կը ծնին Սոնան (1933-ին) և իր երկու եղբայրները՝ Յակոբը (1931-ին) և Նորայրը (1942-ին):

Սոնան իր նախնական ուսումը ստացած է Մաթարեայի Շիշմանեան անձնական դպրոցը՝ ապա նախակրթարանը աւարտելով Հելիոպոլիսի Նուպարեան ազգային վարժարանին մէջ, որ հիմնուած էր Եգիպտոսի բարձրաստիճան պետական պաշտօնեայ և Հայ բարեգործական ընդհանուր միութեան հիմնադիր Պօղոս Նուպար Փաշային կողմէ: Նուպարեանի իր ուսուցիչները եղած են Բենեամին Թաշեան՝ յայտնի

Համալսարանն ավարտելիս

Սոնան ամուսնու և զաւակներու հետ

հրատարակիչ, հայերէնի դասագիրքերու և խմբագիր Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (ՀՅԴ) օրկան «Յուսաբեր» օրաթերթին, Հմայեակ Ամիրեան՝ հայոց պատմութեան դասագիրքերու հեղինակ և Նուարդ Թիրեաքեան՝ գրող, ազգային գործիչ և դուստրը ՀՅԴ ղեկավար Հրաչին և յեղափոխական վաղահաս շարժումներու մասնակից «կարմիր» Իսկուհիին: Իրենց դպրոցական տարիներուն Սոնան և իր եղբայրները գործօն մասնակիցներ եղած են ՀՄԸՄ «Կամք» սկաուտական շարժումին՝ հիմնելով անոր Մաթարեայի մասնաճիւղը: Սոնան կը գործէ իբր «աքելա», այսինքն՝ խմբապետ կրտսեր սկաուտներու և կը պատրաստէ դաստիարակչական ծրագիր. ամրապնդելու համար անոնց ինքնութիւնն ու ազգային ժառանգութիւնը: Իր մշակած այս ծրագիրը կ՚օգտագործուի այլ մասնաճիւղերու կողմէ ևս: Մաթարեայի խումբը կը զբաղէր նաև պատմուածքներ ու վիպակներ գրելով:

Միջնակարգէն ետք Սոնան կը յաճախէ իրլանտացի տոմինիկեան մայրապետներու Սուրբ Քլէր քոլէճը Հելիոպոլիսի մէջ, որ այն ատեն Գահիրէի արուարձաններէն մէկն էր, իսկ հիմա մաս կը կազմէ Գահիրէի Մասր Ալ-Կատիտա և Ալ-Նոժա թաղամասերուն: Սոնան յաջողութեամբ կ՚ամբողջացնէ Լոնտոնի աւարտական ծրագիրը (London Matriculation Program):

Սոնան իր բարձրագոյն ուսումը կը ստանայ Գահիրէի Ամերիկեան համալսարանին մէջ (AUC)՝ արժանանալով արուեստից պսակաւորի վկայականի՝ ընկերաբանութեան և հոգեբանութեան մասնագիտութիւններուն գծով: Համալսարանական տարիներուն կը մասնակցի Բանավէճի ակումբին և «Maskers Club» թատերական խումբին, ուր արժանայիշակ դերով բեմ կը բարձրանայ, որպէս աւագ քոյրը, Անդոն Չեքովի «Երեք քոյրերը» թատերախաղին մէջ: Հանրածանօթ եգիպտահայ լուսանկարիչ Վան Լէո (Լևոն Պոյաճեան) այս թատերախաղի երեք քոյրերու դերերը կատարող դերասաններուն (որոնցմէ մէկը Սոնան էր) սև-ճերմակ նշանաւոր լուսանկարները առած է, լուսանկարներ, որոնք հիմա մաս կը կազմեն հռչակաւոր լուսանկարիչի՝ AUC-ի նուիրուած արխիւին:

Աւարտելէ ետք թէև կարելիութիւնը ունէր AUC-ի ընկերաբանական բաժանմունքէն ներս գիտական հետազօտիչ դառնալու, Սոնան կ՚որոշէ անգլէրէն և գրականութիւն դասաւանդել Գալուստեան ազգային վարժարան, իսկ յետոյ՝ համբաւաւոր հաստատութիւն Գահիրէի աղջիկներու ամերիկեան քոլէճին մէջ (American College for Girls). այսօր այդ դպրոցը կը կոչուի Ռամսէս աղջիկներու քոլէճ:

1957-ին Սոնան կ՚ամուսնանայ իր Գալուստեան ազգային վարժարանի գործակից Սարգիս Ջէյթլեանին հետ, որ շուտով կը դառնայ խմբագիր «Յուսաբեր» օրաթերթին:

Սարգիսը Սոնայէն բոլորովին այլ ծագում ունէր: Անոր հայրը՝ Թովմասը, Խըտրը Պեկէն էր, Մուսա լեռան վեց գիւղերէն մէկէն, որ Օսմանեան կայսրութեան կողմէ գրաւուած Կիլիկիոյ լեռնային շրջաններէն է, Միջերկրական ծովի եզրին, Ալեքսանդրէթի ծոցին մօտ: Այսօր կը գտնուի Թուրքիոյ մէջ՝ Սուրիոյ հայաւան Քեսապ գիւղէն հիւսիսը:

Երիտասարդ տարիքին Թովմասը անկանոն կամ «չեթէ» զինեալներէն էր, որ Մուսա լեռան հայ գիւղերը կը պաշտպանէին՝ դիմադրական աշխատանք տանելով թուրքերու ոտնձգութիւններու դէմ: Աւելի ուշ ան կը դառնայ ֆետայի (ազատամարտիկ) և ցեղասպանութեան ժամանակ իր մօր՝ Վարդիրի հետ միասին ան, իբր սուրհանդակ, կը մասնակցի Մուսա լեռան ինքնապաշտպանութեան: Հերոսական ինքնապաշտպանութիւն մը, որու պատմութիւնը յաւերժացած է «Մուսա լեռան քառասուն օրերը» Ֆրանց Վերֆելի մեծահամբաւ վէպին մէջ և վերջերս՝ «Խոստումը» («The Promise») ամերիկեան ֆիլմին մէջ:

Դիմադրող հայերը ֆրանսական ռազմանաւերով կը փոխադրուին Եգիպտոսի Բորդ Սայիտ նաւահանգիստը: Թովմասը այն երիտասարդներէն կ՚ըլլայ, որ կ՚որոշէ միանալ ֆրանսական բանակի նորաստեղծ

Հերթական գրքի շնորհանդէսին

հայկական լեգէոնին՝ կռուելու համար ֆրանսացի և անգլիացի դաշնակիցներուն կողքին թուրքերուն դէմ, 19 Սեպտեմբեր, 1918-ին, Արարայի ճակատամարտին, որ Համաշխարհային առաջին պատերազմի վերջին ամիսներու ամէնէն վճռական Մէկիտոյի ճակատամարտին կարևոր գործողութիւններէն մէկն էր: 1919-ին՝ պատերազմէն ետք, Մուսա լերան հայութիւնը կը վերադառնայ իր հայրենի գիւղերը: Հոն է, ուր Սարգիսը՝ Թովմասին անդրանիկ զաւակը կը ծնի Խըտրը Պեկ գիւղին մէջ, 1929-ին:

1939-ին, երբ Հայկական Կիլիկիան կը բռնագրաւուի Քեմալական Թուրքիոյ կողմէ, Թովմաս և իր ընտանիքը Մուսա լերան այն դարձեալ տարագիր բնակիչներէն կ'ըլլան, որ Ֆրանսայի գաղութատիրական իշխանութեան կարգադրութեամբ կը հաստատուին Լիբանանի Պեքա հովիտի ճախճախուտ մէկ շրջանը: Հայ գաղթականները ճախճախուտը կը վերածեն բարգաւաճ Այնճար գիւղաքաղաքին: Եգիպտոս փոխադրուելէ առաջ Սարգիս իր ուսումը կը ստանայ Երուսաղեմի հայկական դպրեվանքին և Պէյրութի հայ ճեմարանին մէջ:

1960-ական թուականներուն՝ Եգիպտոսի քաղաքական վերիվայրումներուն ընթացքին, Կամալ Ապտել Նասերի իշխանութեան տակ Իսբենճեան և Սիմոնեան ընտանիքներու ծխախոտի առևտրական ձեռնարկութիւնները կ'ազգայնացուին:

1962-ին Սարգիս և Սոնա Ջէյթլեան առիթը կ'ունենան փոխադրուելու Լոս Անճելոս, երբ Սարգիսին կ'առաջարկուի ստանձնել ՀՅԴ-ի օրկան «Ասպարէզ» օրաթերթի խմբագրի պաշտօնը: Սակայն անոնք կ'որոշեն հաստատուիլ Այնճար, Լիբանան իրենց դուստրերուն՝ Սալբիին (1959-ի ծնունդ) և Կարինին (1961-ի ծնունդ) հետ: Հոն Սարգիս կը ստանձնէ համայնքի ղեկավարութեան դերը՝ դառնալով տեղական ՀՅԴ կոմիտէի հերթապահ և տնօրէն «Յառաջ» ազգային վարժարանի: Իր օրով այս հաստատութեան նախակրթարանը կ'ընդարձակուի ու կը հաստատուի իբր վարկաւոր երկրորդական վարժարան՝ գիշերօթիկով միասին: Սոնան դպրոցէն ներս կը ներկայացնէ դաստիարակչական ծրագիրներ, որոնք կ'որդեգրուին շաբաթական դրութեամբ: Ան նաև կը զբաղի ազգային ծառայութեամբ՝ դառնալով գործունեայ անդամ Հայ օգնութեան միութեան տեղական մասնաճիւղին՝ դասախօսութիւններ տալով հայ կնոջ դերի պատմութեան մասին և կազմակերպելով աշխատանոցներ հայ մշակոյթի և ինքնութեան մասին: Սոնա և Սարգիս կը ներշնչեն ամբողջ սերունդ մը, որ Այնճարը կը վերածէ կարևոր սփիւռքահայ գաղութի, առևտրական և զբօսաշրջիկական կեդրոնի և յայտնի մշակութային փառատօնի մը վայրի:

1965-ի վերջաւորութեան՝ իրենց մանչ զաւակի՝ Հրազդանի ծնունդէն ետք, Ջէյթլեան ընտանիքը կը տեղափոխուի Պէյրութ, ուր Սարգիս կը ստանձնէ ՀՅԴ «Ազդակ» օրաթերթի խմբագրի պաշտօնը ու ապա՝ հայ գաղութի ղեկավարութիւնը՝ որպէս ՀՅԴ Լիբանանի կեդրոնական կոմիտէի հերթապահ: Շնորհիվ անոր նշանակալի առաջնորդութեան, կազմակերպչական հմտութեան և ամուր հաւատամքին, որ ընկերային հաստատութիւններու բարեկարգութիւնը անհրաժեշտ մասնիկն է ընկերային բարեփոխման, հայ գաղութի ինքնակազմակերպումը կ'աշխուժանայ, և գաղութը կը նուաճէ աւելի լայն ներկայացուցչութիւն երկրի խորհրդարանին և կառավարութեան մէջ: Իր ղեկավարութեամբ լիբանանահայ երիտասարդութիւնը կը վերանորոգէ իր քաղաքականացումն ու յեղափոխականացումը և ինքնակազմակերպման ճիգերը, կ'արմատականանայ յատկապէս հայ երիտասարդութեան նուիրումը Հայ դատի արդար լուծման: Սարգիսի խմբագրականները կը մշակեն հայկական արևելումի ռազմավարութիւնը: 1972-ին ան կ'ընտրուի ՀՅԴ Բիւրոյի անդամ և կը ստանձնէ Բիւրոյի պաշտօնական հրատարակութեան «Դրօշակ-Ազդակ Շաբաթօրեակի» խմբագրապետութիւնը: Աւելի ուշ ան ՀՅԴ համաշխարհային մամուլի պատասխանատուն կը դառնայ:

Սոնան գրելով և դաստիարակչական աշխատանքներով կը զբաղի: Յօդուածներ կը գրէ «Դրօշակի» մէջ՝ Սօսի անունին տակ: 1968-էն 1974 անգլերէն և գրականութիւն կը դասաւանդէ Խանամիրեան ազգային վարժարան և 1978-էն 1989 կը դասաւանդէ թէ՛ անգլերէն, թէ՛ հայոց պատմութիւն «Նշան Փալանճեան» ճեմարան և Պէյրութի հայ աւետարանական երկրորդական վարժարան: Նաև յաճախակի դասախօսութիւններ կը ներկայացնէ ՀՕՄ-ի տարբեր մասնաճիւղերուն:

1968-ին Սոնա Ջէյթլեանի առաջին գիրքը՝ «Հայ կնոջ դերը հայ յեղափոխական շարժման մէջ» խորունկ ուսումնասիրութիւնը կ'արժանանայ Անթիլիասի Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Գէորգ Մելիտինեցի» մրցանակին: Այս ատենին նորատեսակ գիրքը կը համարուի առաջնորդող գործ մը, որ ստեղծեց և հաստատեց հայ կիներու ուսումնասիրութեան նոր դաշտը: Սոնան կ'օգտագործէ հիմնական աղբիւրներ: Հարցազրոյցներ կը վարէ և կը ստուգաբանէ չհրատարակուած յուշեր, ինչպէս 1920-ին քեմալական

Պատմաբաններու և տարբեր գործիչներու հետ

ուժերուն դէմ Հաճընի ինքնապաշտպանութեան մասնակից Ակուլինէ Խանճեանի ձեռագիր վերյիշումները: Կը յայտնաբերէ Տոքթոր Վիգէն Օհանջանեանի ձեռագիր նամակը, որ կը պարունակէր անձնական տեղեկութիւններ իր մօր՝ Սօֆի Արէշեան-Օհանջանեանի (Ռուպինա) մասին, որ մասնակցած էր 1905-ի օսմանեան սուլթանի ահաբեկչական ծրագրին կազմութեան և իրականացման: Կ'արձանագրէ ականատեսներու վկայութիւնները Սփիւռքի մէջ բնակող հայ յեղափոխական սերունդի անդամներու հետ: Անոնցմէ գլխաւորը Սիմոն Վրացեանն էր, Հայաստանի Հանրապետութեան վերջին վարչապետը, որ այն ատեն Պէյրութի հայ ճեմարանի տնօրէնն էր և անձամբ կը քաջալերէր Սոնային, որ շարունակէ իր վիթխարի գործը: Այլ ներշնչող անձ մը, որուն հետ Սոնան հարցազրոյց կ'ունենայ, Հեղուշ Եղիազարեան-Փափազեանն էր, որ Թիֆլիս, իբր երիտասարդ հայ գործիչ, մօտէն ճանչցած էր շատ ուրիշ երիտասարդ յեղափոխականներ, ինչպէս, օրինակ՝ նոյնինքն Ստալին և Մոսկուա բժշկութիւն ուսանած ժամանակ ենթարկուած էր արմատական յեղափոխական հոսանքներու ազդեցութեան: Սակայն իր զօրաւոր ազգային միտքը զինք ստիպած էր, որ հետևի յեղափոխական հայ կիներու օրինակին և նուիրուի իր հարստահարեալ ազգի օգնութեան աշխատանքին:

Կաթողիկոսարանի տպարանը հրատարակած է այս իւրայատուկ աշխատութիւնը: Ծաւալուն հետազօտութիւնը արժանացած է բարձր գնահատանքի և ստացած է դրական գրախօսականներ հեղինակաւոր հասարակական գործիչներու կողմէ, ինչպէս՝ Մուշեղ Իշխան, Պօղոս Մնապեան և Գոհար Թէօլէօլեան: Գիրքը արագօրէն սպառած է: 1992-ին Լոս Անճելըս Հայ օգնութեան միութեան (ՀՕՄ-ի) հովանաւորութեամբ դարձեալ հրատարակուած է հայ յեղափոխական կիներու վերաբերեալ յաւելեալ ուսումնասիրութիւններով ընդլայնուած հրատարակութիւն մը, որուն օրինակներու կարևոր մասը ղրկուած է Հայաստան:

Սոնային վերջին զաւակը՝ դուստրը՝ Հեղնարը ծնած է 1969 թուականին:

70-ական թուականներու սկիզբը Սոնան կը զբաղուի ազգագրական հետազօտութիւններով: Կը հաւաքէ և տպագրութեան համար կը պատրաստէ Մուսա լերան բանաւոր աւանդութիւնները: Տքնաջան աշխատելով՝ հարցազրոյցներ կը կատարէ տարեց գիւղացիներու հետ, որոնք իրենց պապենական հողէն տեղահան ըլլալով՝ փոխադրուած էին Այնճար՝ Լիբանան: Անոնք հեքիաթները կը պատմեն Սոնային՝ Մուսա լերան բարբառով: Մատչելի դարձնելու համար աւելի ընդարձակ ընթերցողներու շրջանակի՝ Սոնան հեքիաթները կը թարգմանէ արևմտահայերէնի՝ պահպանելով իրենց բնիկ լեզուական երանգները, իւրայատուկ տոհմային ոճը, բառերն ու արտայայտութիւնները: Ան կ'ընտրէ հարիւր պատկերազարդ ժողովրդական հեքիաթներ, որոնք 1979-ին կը հրատարակուին Պէյրութի Համազգային կրթական և մշակութային միութեան կողմէ՝ «Մուսա լերան ժողովրդական հեքիաթներ» խորագրին տակ: Գիրքը կը բացուի ազգագրական մանրամասն ներածականով՝ հիմնուած լայնածաւալ ուսումնասիրութիւններու և պատմուածքներու նիւթերու և կերպարներու վերլուծման վրայ: Անոր կը յաջորդեն հեքիաթները՝ ընկերաբանական հասկացութեամբ կարգուած և ներկայացուած հետևեալ բնանիւթերով՝ առասպելական, բարոյական, հնարամտական-երգիծական, կենդանական առակներ և կերպարներու վրայ հիմնուած հեքիաթներ: Գիրքը կ'աւարտի ընդարձակ բառարանով մը, որ կը ներկայացնէ Մուսա լերան հայերէն բարբառը, յատկաբանութիւնները, իւրայատուկ արտայայ-

Հարազատներով շրջապատուած

տութիւնները և հեքիաթներուն մէջ նշուած վայրերու բացատրութիւնները: Առաւել, կայ Մուսա լերան վաստակաւոր դաստիարակ, համայնքի կարկառուն դէմքերէն և Սոնային խորհրդատու Թոմաս Հապէշեանին չհրատարակուած հեքիաթներու յաւելուածը: Գիրքը նկարազարդուած է եգիպտահայ յայտնի արուեստագէտ Լիւսի Թիւթիւնճեանի իւրայատուկ գծանկարներով: Այս գիրքը մագիստրոսական հատոր մը կը համարուի հայ ազգագրութեան տարեգրութեան և հայ մշակութային ժառանգութեան պահպանման գործին մէջ:

Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքին (1975-1990) Սոնան երախտագիտութիւնը կը ստանայ ռմբակոծումի ենթարկուած շրջաններու հայ կիներուն՝ ելոյթ ունենալով ՀՕՄ-ի կազմակերպած հասարակական հաւաքներուն՝ քաջալերելու համար անոնց բարոյական հանգամանքը և ամրապնդելու անոնց վճռականութիւնը, որպէսզի դիմագրաւեն առօրեայ կեանքի դժուարութիւնները և հաւատք ունենան ապագայի նկատմամբ: Անոր ոգևորիչ դասախօսութիւններէն հատուածներ կը բաժնուին ՀՕՄ-ի տարբեր մասնաճիւղերուն և կը տպուին սփիւռքահայ մամուլի մէջ:

80-ական թուականներուն տարիներ շարունակ հայոց առասպելական պատմութիւնը ուսումնասիրելէ ետք Սոնան կը գրէ չորս հատորներէ բաղկացած շարք մը հայ դիւցազներգական հերոս-հերոսուհիներու մասին, ինչպէս նաև հայկական դիցաբանութեան մասին: Այս աշխատութեան մէջ իր նպատակն էր հայկական հարուստ առասպելական պատմութիւնը իր ամբողջութեամբ մատչելի դարձնել ժամանակակից ընթերցողին: Պատանի ընթերցողներու յարմար պատմողական ոճ ունի գրութիւնը՝ ճոխացուած աւանդոյթներու և ժողովրդական տօնախմբութիւններու նկարագրութիւններով: «Արի արանց» կոչուող շարքը կը ներառէ «Հայկ և Արամ նահապետներ» պատմութիւնը, որ հրատարակուած է Պէյրութի Համազգայինի կողմէ, 1983-ին: «Արա Գեղեցիկ և Տիգրան Երուանդեան»-ը և «Արտաշէս թագաւոր»-ը նոյնպէս հրատարակուած են Համազգայինին կողմէ, 1984-ին: Իսկ «Մուշեղ Մամիկոնեան և Գայլ Վահան» հրատարակուած է Լիբանան Անթիլիասի կաթողիկոսարանին կողմէ, 1989-ին: Այս շարքին նկարազարդումը դարձեալ կը կատարէ եգիպտահայ յայտնի արուեստագէտ Լիւսի Թիւթիւնճեան: 1983-էն սկսեալ՝ հայ առասպելական պատմութեան հերոս-հերոսուհիներու մասին այս ստեղծագործութիւնները, ինչպէս նաև Մուսա լերան ժողովրդական հեքիաթները կ՚ընտրուին իբր ամառնային ընթերցանութիւն Լիբանանի հայ գաղութի կեդրոնական կրթական խորհուրդին կողմէ:

Քաղաքացիական պատերազմի տասնհինգ տարեմեայ տարիներուն ընթացքին Լիբանանը դարձաւ ճահիճ մը, ուր տարբեր երկիրներու գաղտնի ծառայութիւնները կը վխտային՝ ներառեալ այն երկիրներու գաղտնի ծառայութիւնները (և իրենց տեղական գործակիցները), որոնք ուղղակի ազդեցութիւն ունէին Հայաստանի վրայ կամ հաշիւ ունէին հայութեան հետ: Օգտագործելով Լիբանանի անօրէնութիւնը՝ բոլոր այս գաղտնի ծառայութիւնները սկսան հաշիւներ մաքրել և ոչնչացնել իրենց շահերին հակասող ղեկավարներ: Սարգիս Ջէյթլեան թիրախ դարձաւ՝ իբր հզօր ազգային առաջնորդ, իբր հայկական արևելումի ռազմավարութեան ռահվիրան և իբրև Հայ դատի արդար լուծման վերանորոգուած պայքարին մէջ անկոտրում մարտունակութեան գաղափարական մարտիկը: Մարտ 28, 1985-ին կ՚առևանգուէ գործակալներու կողմէ ճեմարանի մօտ, շրջանի մը մէջ, որ կը գտնուէր Յառաջդիմական ընկերվարական կուսակցութեան



ապահովական հակակշռին տակ: Ձայկին՝ Հրազդանին օգնութեամբ Սոնան կը փնտռէ իր ամուսինը՝ հետապնդելով բոլոր առկայ տեղեկութիւնները և կարելիութիւնները և մերժելով հրաժարիլ փնտռտուքէն նոյնիսկ ամենէն դժուար և սպառնական պայմաններուն տակ: Սարգիս Զէյթլեան սպաննուեցաւ գերութեան մէջ, և նահատակի աճիւնները ցարդ չեն գտնուած:

1989-ին Պէյրութի ծանր ռմբակոծումներու գիշեր մը Զէյթլեան ընտանիքին յարկաբաժինը հրթիռի ուղիղ հարուած մը կը ստանա՝ մեծ վնաս պատճառելով տան: Սոնան՝ տունը մինակ, հրաշքով ողջ կը մնայ, սակայն կ'ունենայ ուղեղային ցնցում: Անկէ ետք, հետապնդելով հանդերձ ամուսինին դատը, կ'որոշէ միանալ զաւակներուն, որոնք Միացեալ Նահանգներ կը գտնուէին՝ իրենց բարձր ուսումը շարունակելու համար: 1989-ի Դեկտեմբերին ան կը միանայ զաւակներուն Լոս Անճելոս:

ԱՄՆ հաստատուելէ ետք Սոնան կը շարունակէ իր կրթական և հեղինակային աշխատանքները: 1990-ին կը դասաւանդէ Ֆերահեան ազգային վարժարան: 1992-էն սկսեալ՝ կ'աշխատի, իբր խմբագիր, RAND հաստատութենէն ներս, որ Սանթա Մոնիքա գտնուող ԱՄՆ-ի վերլուծական համբաւաւոր կեդրոններէն մէկն է: Երկու տարի ետք իր տղուն՝ Հրազդան Սարգիս Զէյթլեանին հետ միասին կը հիմնէ հրատարակչատուն մը՝ նուիրուած Սարգիս, Սոնա և Հրազդան Զէյթլեաններու գրութիւններուն խմբագրութեան և հրատարակութեան:

Սոնան նաև կը շարունակէ իր գործակցութիւնը հայ գաղութի կազմակերպութիւններուն հետ, ինչպէս՝ Հայ օգնութեան միութիւն, Հայ կանանց միջազգային ընկերակցութիւն (AIWA) և Հայ բարեգործական ընդհանուր միութեան «Հայ կին»-ը: Ան յաճախ կը դասախօսէ հայ կնոջ վիճակին և դերին մասին մեր խռովայոյզ պատմութեան ընթացքին. հայ կնոջ դերը 19-րդ դարու Պոլսոյ և Թիֆլիսի զարթօնքի շարժումին մէջ մինչև ազգային-ազատագրական պայքար, անոնց անընկրկում դիմադրական ուժը ցեղասպանութեան տարիներուն: Կը դասախօսէ կիներու գաւառային մարտական խումբերու մասին, որոնք դժուար ռազմային գործողութիւններ, գաղտնի առաքելութիւններ, հետախուզական և խափանարարական աշխատանքներ ստանձնելով՝ կը մասնակցէին ֆետայական կռիւներու քիւրտերու յարձակումներու դէմ և ինքնապաշտպանական մարտերու թրքական բանակին դէմ: Այս շրջարկէն ներս կը դասախօսէ կիներու կազմած նախնական դարմանումի միաւորներու մասին, որոնք իրենց պատրաստած բուժիչ օծանելիքներով կը խնամէին վիրաւորները: Անկէ անդին կիները տեղահաններու և բանտարկեալներու պէտքերը կը հոգային, ֆետայիներուն համար թաքստոցներ կ'ապահովէին և փակուղիներ կը փորէին իրենց տուներուն յատակը՝ զինամթերք պահելու համար: Սոնա կը դասախօսէ կիներու մասին, որոնք կողոպտումէ փրկած են ազգային ժառանգութեան պատկանող սրբազան ձեռագիրներ, աւետարաններ և պատմական գիտական աշխատութիւններ, ինչպէս Մշոյ նշանաւոր քարոզչական գիրքը իր կաշիէ կողքի ամբողջ ծանրութեամբ շալկած, տարած են դէպի ապահովութիւն: Ան կը դասախօսէ յետցեղասպանութեան տարիներու մասին, երբ հայ կիներ փրկած են թուրքերու, քիւրտերու կամ արաբներու կողմէ գերի բռնուած կիներն ու երեխաները, խնամած են հազարաւոր որբեր, ապահոված են անոնց ապրուստը, մասնակցած են գաղթականներու վերաբնակեցման աշխատանքին և Միջին Արևելքի հայ գաղութներու կառուցման: Սոնայի այլ յիշատակելի դասախօսութեան շարքը կը ներկայացնէ Հայաստանի առաջին հանրապետութեան ժամանակ հայ կնոջ քուէարկելու իրաւունքին հաստատումը, ընտանիքի և քաղաքացիական ընկերութեան հոլովոյթը հայ իրականութեան մէջ, ազգային-մշակութային ինքնութեան դերը, հայկական կնոջականութեան (ֆեմինիզմի) յղացքը, կիներու առաջնորդութեան յատկութիւնները, հերոսուհիներու դերը հայ առասպելական պատմութեան մէջ և հեքիաթներու դաստիարակչական արժէքը:

Սոնան ներկայացուցած է հետևեալ դասախօսական շարքերը և մասնակցած է հետևեալ գիտաժողովներուն՝

Յունուար 1985-ին կը սկսի դասախօսական շրջագայութիւն մը Գահիրէ և Ալեքսանդրիա՝ կազմակերպուած ՀՕՄ-ի, «Յուսաբեր» մշակութային միութեան և ՀՅԴ «Յուսաբեր» օրաթերթի կողմէ՝ նիւթ առնելով «Միացեալ ազգերու կազմակերպութեան կնոջ իրաւունքը զարգացնելու նուիրուած տասնամեակը (1975-1985)» և «Հայ կնոջ իրաւունքներու վիճակը»:

Նոյեմբեր 10-13, 1988-ին Իտալիոյ Վենետիկ քաղաքի մէջ կը մասնակցի ՀՕՄ-ի համահայկական յառաջընթաց համագումարին՝ «Կամրջել հեռաւորու-

թիւնները» (Bridging Distances)։ Սոնան կը զեկուցէ երէկուայ, այսօրուայ և վաղուայ հայ կին առաջնորդի յատկանիշներուն մասին։ Իր դասախօսութիւնը ՀՕՄ-ի կողմէ կը հրատարակուի և կը բաժնուի անոր համաշխարհային մասնաճիւղերուն։ Դասախօսութիւնը նաև սպաներէնի թարգմանուած է և բաշխուած Արժանթինի, Ուրուկուէյի և Պրազիլի հայ գաղութներուն մէջ։

Մարտ 9, 1990-ին կը մասնակցի ՀՕՄ-ի գիտաժողովին Տալաս՝ Թեքսասի մէջ և կը ներկայացնէ հետեւեալ նիւթը՝ «Հայ ընտանիքին մարտահրաւէրները՝ բախում, չարաշահում և սեռերու կենտերային անհաւասարութիւն»։

Յունուար 1991-ին դասախօսական շրջագայութիւն կ՚ունենայ Արժանթին և Ուրուկուէյ և այցելելով հայ գաղութները՝ կը խօսի հայ կին գործիչներու, դաստիարակներու և գրողներու ազդեցութեան մասին ազգին ապագան կերտելու գործընթացին մէջ։ Նիւթ առած էր հայ ազգային-ազատագրական պայքարին օրերուն զինեալ դիմադրութեան ընթացքին հայ կնոջ տարած պատրաստութիւնները, հեռակայ շրջաններու հետ կապ ստեղծելը, ազգային զօրաշարժի և զինեալ պայքարի ենթահող պատրաստելը՝ յանուն արդարութեան, հաւասարութեան և ազատութեան և 1910-էն սկսեալ՝ ՀՅԴ շարքերուն իրենց միանալը։

Յուլիս 3, 1992-ին Պոսթոնի մէջ ՀՕՄ-ի 72-րդ ընդհանուր ժողովի առթիւ կը ներկայացնէ երիտասարդական օրակարգի մաս կազմող աշխատանոց մը՝ «Ուղղութիւններ և միջոցներ. կիրարկելի առաջարկներ՝ ի նպաստ ՀՕՄ-ի նպատակներուն» խորագրով։

Սեպտեմբեր 19-21, 1994-ին կը մասնակցի Լոնտոնի մէջ Հայ կանանց միջազգային ընկերակցութեան (AIWA) առաջին միջազգային համագումարին, որ կազմակերպուած էր Պարպարա Մերկերեանի և Տոքիս Տ. Ճաֆերեանի կողմէ։ Իբր նիւթ Սոնան կը ներկայացնէ ազգայնականութիւնը և հայ կնոջ իրաւունքներու շարժումի զարգացումը թեման։ Այն բազմաթիւ հարցումներ կը յառաջացնէ մասնակիցներու կողմէ, որոնք ծանօթ էին արևմտեան կնոջականութեան ֆեմինիզմի պահանջած անհատական իրաւունքներուն, մինչդեռ հայ կնոջ համար անհատական և ազգային իրաւունքներու գաղափարները անբաժանելի էին։ Համագումարի նիւթերը հրատարակուած են AIWA-ի կողմէ՝ «Հայ կինը անդադար փոփոխութեան ենթակայ աշխարհին մէջ» հատորի մը վերնագրով։

1997-ին կը մասնակցի AIWA-ի երկրորդ միջազգային համագումարին, որ տեղի ունեցաւ Փարիզ, Պարպարա Մերկերեանի և Ճոյ Ռենճիլեան-Պուրկիի կազմակերպութեամբ։ Սոնային աշխատասիրութիւնը առաջին անգամ ըլլալով՝ կը քննարկէ արևմտահայ մամուլի ռահվիրայ կիներու լրագրութիւնը։ Ան կը կեդրոնանայ Սեզայի վրայ, որ նշանաւոր կին խմբագիր-հրատարակիչ եղած է։ Տղամարդոցմէ գերիշխուած հայ մամուլի ծիրէն ներս արհեստագէտ կիներու ներդրումի մասին զեկոյցը մեծ հետաքրքրութիւն կը յառաջացնէ։ Սոնային խոր վերլուծումները հետաքրքրութիւն կը յառաջացնեն նաև Սեզային ստեղծագործութիւններու նկատմամբ։ 2000 թուականին AIWA-ն համագումարի զեկոյցները հրատարակուած է «Հայ կիներու ձայները» հատորի մը վերնագրով։

Նոյեմբեր 7, 1998-ին կը ներկայանայ, որպէս օրուան բանախօս, Ազգային հայ կրթական յանձնախումբի (ANEC) ԱՄՆ-ի միջարևմտեան շրջանային ժողովին, որ տեղի կ՚ունենայ Կլէնվիու՝ Շիքակօ։ Իր հայերէն և հայոց պատմութիւն ուսուցանելու ամբողջական ծրագիրը ներկայացուեցաւ ՀՕՄ-ի շաբաթօրեայ դպրոցներու ուսուցիչներուն։

2008-ի Փետրուար 29-էն Մարտ 1, իբր անկախ գիտնական, կը մասնակցի UCLA համալսարանի մէջ տեղի ունեցած Մուսա լերան, Տէօրթ-եօլի և Քեսապի նուիրուած միջազգային գիտաժողովին։ Գիտաժողովը կազմակերպուած էր UCLA-ի հայ կրթական միութեան հովանաւորած հայագիտական ամպիոնի փրոֆեսոր Ռիչըրտ Յովհաննէսեանի կողմէ։ Սոնան կը զեկուցէ Մուսա լերան բանաւոր աւանդոյթի մասին և կը ներկայացնէ վերլուծական քննարկում՝ նիւթերու և տիպարներու զարգացման, ինչպէս նաև գիւղացիներու առօրեայ կեանքին մէջ առասպելներու դերին մասին։ 2016-ին Փրոֆ. Յովհաննէսեանը խմբագրած և հրատարակած է UCLA-ի գիտաժողովին զեկոյցները՝ «Հիւսիսային Միջերկրականի հայ գաղութները» խորագրով հատորի մը մէջ։ Սոյն հատորը կը պարունակէ Սոնային խոր ուսումնասիրութիւնը՝ մուսալեռցի պատմիչներուն նկարներով։

Ապրիլ 12, 2008-ին կը մասնակցի ՀԲԸՄ-ի «Հայ կին»-ի երրորդ տարեկան գիտաժողովին, որ տեղի կ՚ունենայ Քալիֆորնիոյ (Լոս Անճելոսի) պետական համալսարանի (Cal State LA) ընկերային ծառայութեան բաժանմունքէն ներս։ Սոնան կը դասախօսէ



«ԱՄՆ-ի հայ գաղութներու կարգավիճակի» մասին:

Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակին առթիւ Սոնան ՀՕՄ-ի կողմէ կ՚ընտրուի՝ հանդիսաւոր ուղերձ ներկայացնելու Թորոնթօ՝ Քանատա, Մարտ 1, 2015-ին և յետագային՝ Էսսինօ՝ Քալիֆորնիա, Հոկտեմբեր 23, 2015-ին:

Մայիս 4-5, 2019 ան կը մասնակցի երկրորդ հայագիտական կնոջականական ֆեմինիստ աշխատանոցին՝ «Դիմադրութեան և յեղափոխութեան կենտերային մօտեցումներ» (Gendering Resistance and Revolution), որ կազմակերպուած էր UC Ըրվայն (UCI) համալսարանի Մեղրունի հայագիտական ամպիոնի փրոֆ. Հուրի Պէրպէրեանի կողմէ: Սոնային զեկոյցը՝ «Մոռացումէ տեսանելիութիւն՝ փնտռելով կնոջ դերը հայ յեղափոխական շարժումին ընթացքին և անկէ ետք» կը ներկայացնէ իր յայտնաբերած էական աշխատանքը հայ կնոջ չուսումնասիրուած պատմութեան մասին: Սոնան կը խօսի իր որոնումներուն մասին, կը նշէ հիմնական աղբիւրներ, անձնական յուշեր, ականատեսներու վկայութիւններ և հրատարակութիւններ արևելահայ և արևմտահայ կին գործիչներու մասին, որոնք իրենց ներդրումը կը բերէին ազգին ապագայի կերտման գործընթացին: Համագումարին ընթացքին կիներու նուաճումներու մասին իր երկու մրցանակակիր գիրքերը բարձր գնահատանքի արժանացան, և ինքը ողջունուեցաւ՝ իբր օրինակելի տիպար և ներշնչումի աղբիւր անոնց, որոնց համար, որ նման ուսումնասիրութիւններ կը կատարեն հայ կնոջ պատմութեան մասին:

Սոնան ունեցած է նշանակելի դասախօսութիւններ:

Մարտ 15, 1990-ին Շիքակոյի «Բարև» օրաթերթի հիւր դասախօսը եղած է: Նիւթն էր՝ «Հայ մշակոյթ և ինքնութիւն»:

Նոյեմբեր 15, 1990-ին Պոսթոն՝ որպէս ՀՕՄ-ի 80-րդ ամեակի տօնակատարութեան օրուան բանախօս, կը ներկայացնէ «Պոլսոյ հայ մտաւորական կիներու ազդեցութիւնը ազգի ընկերային կեանքի վրայ» ուղերձը:

Յունիս 7, 1992-ին և անոր յաջորդող շաբաթներուն ընթացքին կը ներկայացնէ դասախօսական շարք մը ՀՕՄ-ի «Մայր» (Հոլիվուտ, Քալիֆորնիա) և «Անահիտ» (Կլենտէյլ, Քալիֆորնիա) մասնաճիւղերուն հետևեալ նիւթերու շուրջ՝ «Կիներու նկարագրումը Լևոն Շանթի ստեղծագործութիւններու մէջ», «Կիներու նկարագրումը Գրիգոր Զոհրապի ստեղծագործութիւններու մէջ», «Կիներու նկարագրումը Զապէլ Եսայեանի ստեղծագործութիւններուն մէջ» և «Գիւղաբնակ և քաղաքի հայ կիներու ապրելակերպը Թլկատինցիի ստեղծագործութիւններու մէջ»:

Մայիս 19, 2001-ին ՀԲԸՄ-ի «Հայ կին»-ի հրաւէրով կը ներկայացնէ «Խորհրդային Միութեան քաղաքականութեան ազդեցութիւնը Հայաստանի ընկերային և մշակութային կեանքի վրայ» նիւթը:

Նոյեմբեր 15, 2003-ին ՀԲԸՄ-ի «Հայ Կին»-ին կը ներկայացնէ կոթողական դասախօսութիւն մը՝ «Քննարկում Հայաստանի հասարակական կազմակերպութիւններու (NGOs) ազդեցութեան» նիւթը:

Մայիս 19, 2005-ին հիւր դասախօսը եղած է Հայ կանանց միջազգային կազմակերպութեան տարեկան ժողովին, Պոսթոն: Նիւթն էր՝ «Հայ կնոջ դերի շարունակականութիւնը ու յեղաշրջումը»:

Մայիս 2007-ին, իր գիրքին՝ «Հայութեան ներդրումը Եգիպտոսի միջնադարեան և արդի պատմութեան

մէջ» հրատարակութեան առթիւ Շիքակոյի «Բարև» օրաթերթը զինք կը հրաւիրէ՝ զեկուցելու «Արդի Եգիպտոսի ուշագրաւ հայ վարչագէտներ և քաղաքագէտներ» նիւթին մասին:

Նոյեմբեր 20, 2008-ին մարդկային իրաւունքներու հռչակման 60-րդ ամեակի առթիւ կը ներկայացնէ «Ինչպէս հակակշռել ընտանեկան բռնութիւնը» նիւթը ՀԲԸՄ-ի «Հայ կին»-ի կազմակերպած լսարանի մը ընթացքին:

Մարտ 17, 2009-ին հիւր դասախօս եղած է Թորոնթօ, Քանատայի ՀՕՄ-ի Ռուպինա մասնաճիւղի Միջազգային կիներու օրուայ առթիւ: Նիւթն էր՝ «Հայ կնոջ դերի հոլովոյթը արդի հայոց պատմութեան ընթացքին»:

Մարտ 1, 2015-ին ցեղասպանութեան հարիւրամեակի նուիրուած ձեռնարկին ՀՕՄ-ի կողմէ օրուան բանախօսը կ'ընտրուի: Ժողովրդական մեծ ընդունելութիւն ստանալով՝ նոյն ուղերձը վերստին կը ներկայացնէ Էսսինօ՝ Քալիֆորնիա, Հոկտեմբեր 23, 2015-ին:

Իր դասախօսութիւններուն զուգահեռ Սոնան կը շարունակէ գրել և հրատարակել: Տասնեակ մը տարիներ շարունակ հետազօտական աշխատանք տանելէ ետք՝ 2004-ին, ան կը հրատարակէ ընդարձակ ուսումնասիրութիւն մը Եգիպտոսի հայերուն մասին՝ «Հայութեան ներդրումը Եգիպտոսի միջնադարեան և արդի պատմութեան մէջ» խորագրով, որուն օրինակները շուտով կը սպառին: Հատորը հրատարակած էր Մոնրէալ Քանատայի եգիպտահայ միութիւնը: Մեծ ընդունելութիւն ստանալով՝ Սոնա հատորը կը թարգմանէ անգլերէնի: 2006-ին կը վերահրատարակուի յաւելուած՝ բաժիններով: Գիրքի կողքին գովաբանուած գեղարուեստական պատկերը նախագծուած է հեղինակի տղուն՝ ճարտարապետ Հրազդան Ջէյթլեանի կողմէ: Եգիպտոսի Հայաստանի Հանրապետութեան հիւպատոս տոքթ. Ռուբէն Կարապետեան, որ գիրքին յառաջաբանը գրած է, կը հիւրընկալէ գիրքին անգլերէն տարբերակին շնորհանդէսը Գահիրէի մէջ: Գնահատական պատգամներ գրուած են նաև ԱՄՆ-ի Եգիպտոսի հիւպատոս՝ Նապիլ Ֆահմիի և ԱՄՆ-ի Արաբական պետութիւններու միութեան հիւպատոս տոքթ. Հիւսէյն Հասունայի կողմէ: Որպէս եգիպտահայերու երկարատև և կարևոր ներդրումը վաւերագրող իւրայատուկ աղբիւր՝ Սոնային գիրքը հայ-եգիպտական պատմական յարաբերութեանց հիմքերը կը վերահաստատէ և դրական ազդեցութիւն կ'ունենայ նոր հիմնուած Գահիրէի համալսարանի հայագիտական ծրագրին:

Գիրքին պաշտօնական ձօնին (Ապրիլ 2, 2006) Սոնան կ'անդրադառնայ հայ-եգիպտական փորձառութեան պատմութեան՝ վկայելով. «Թէև հայերը Եգիպտոսի փոքրամասութիւններէն թիւով ամէնէ քիչն են, հպարտ եմ՝ իմանալով, որ դասակարգային հասկացողութեամբ հայերը առաջնահերթ դիրքեր գրաւած են պետական կառոյցէն ներս՝ իրենց բերած ներդրումով, տեղական տնտեսութեան՝ իրենց ճոխացումով և արտաքին առևտուրի՝ իրենց ընդլայնումով»: Գիրքին շնորհանդէսի առիթով Գահիրէ գտնուած ժամանակ Սոնան հարցազրոյց կ'ունենայ Գահիրէի գլխաւոր թերթին՝ «Ալ Ահրամ»-ին հետ, հանրաճանաչ ամսագիր «Եգիպտոսը այսօր»-ին (Յուլիս 11, 2006) խմբագրական կազմէն Դաւիթ Լի Ուիլսոնի հետ, ինչպէս նաև հայկական թերթերու և եգիպտական հեռատեսիլի կայաններու հետ: Գիրքին թէ՛ հայերէն, թէ՛ անգլերէն տարբերակները մեծ պահանջք կ'ունենան, և օրինակները շուտով կը սպառին:

Ամերիկեան բազմամշակութային ընկերութեան հայկական աւանդոյթներն ու արժէքները ներկայացնելու համար, նաև դաստիարակչական աղբիւր հայթայթելու համար գաղթական հայ աշակերտներուն համար, որոնք անգլերէնը կը սորվէին իբր երկրորդ լեզու, Սոնան կը խմբագրէ և հրատարակութեան կը պատրաստէ իր Մուսա լերան հաւաքածոյէն կարգ մը հեքիաթներ: 1993-ին ՀՕՄ-ը և 2007-ին «Ապրիլ» գրատունը Լոս Անճելըսի մէջ կը հրատարակեն իր երկու պատկերազարդ, երկլեզու (հայերէն-անգլերէն) հեքիաթները: Առաջինը՝ «Մէկ հատիկը» նկարազարդուած է Շուշիկ Ասլանեանի կողմէ, իսկ երկրորդը՝ «Երախտագէտ կենդանիները» նկարազարդուած է Ալիք Արզումանեանի կողմէ. երկուքն ալ յայտնի ամերիկահայ գեղարուեստագէտներ են: Այս գիրքերը ընդարձակօրէն օգտագործուած են Քալիֆորնիոյ հանրային դպրոցներու մէջ: Նաև յատկացուած են Հայաստանի հայ աշակերտներուն, որոնք կը փորձեն անգլերէնի հմտութիւն մշակել:

2013-ին միաձայն քուէարկութեամբ աննախընթաց երկրորդ անգամ ըլլալով՝ Սոնան կ'ընծայուի Կիլիկիոյ կաթողիկոսարանի «Գէորգ Մելիտինեցի» մրցանակը իր հայերէն գիրքին՝ «Հայ կնոջ կեանքի ուղիին հետքերով»-ին համար: Հայ կնոջ պատմութեան նուիրուած կատարեալօրէն ուսումնասիրուած ընդարձակ աշխատութիւն մըն է այս: Գիրքը կը կեդրոնանայ հայ կնոջ վիճակի՝ յանուն սեռերու հաւասարութեան և ընկերային ներառնումի անձնական և հաւաքական նախաձեռնութիւններու և պատմական թշուառութիւններու ընդդէմ ունեցած անոնց տոկունութեան վրայ: Հատորը բաժնուած է հետևեալ պատմական շրջաններու՝ քրիստոնէութեան թափանցում, աւատատիրական իշխանական ընտանիքներու դարաշրջան, Օսմանեան կայսրութիւն, Հայաստանի առաջին հանրապետութիւն, Խորհրդային Միութեան 70 տարիները, Հայաստանի երկրորդ հանրապետութիւն և համաշխարհային ցրուածութիւն: Այս համապարփակ աշխատութիւնը հրատարակուած է Կիլիկիոյ կաթողիկոսարանի հրատարակչատան կողմէ և ընդունուած է որպէս հայոց պատմութեան մէջ կնոջ հիմնական դերի ամէնէն արժէքաւոր վկայութիւնը:

Իր հրատարակուած գիրքերէն անդին Սոնան՝ յաճախ Սօսի անունին տակ, գրած է յօդուածներ, գրախօսականներ, գիտաժողովի զեկոյցներ, հանրային զեկոյցներ, գրադատութիւններ, հրապարակագրութիւններ Հայաստանի ընթացիկ հարցերու մասին: Անոնք լոյս տեսած են հետևեալ հրատարակութիւններուն մէջ՝ «Յուսաբեր» օրաթերթ (Գահիրէ, Եգիպտոս), «Ազդակ» օրաթերթ (Պէյրութ, Լիբանան), «Նոր կեանք» շաբաթաթերթ (Կլէնտէյլ, Քալիֆորնիա) և

«Հայ կին» հանդէս (Փասատինա, Քալիֆորնիա):

Իր յաճախ մէջբերուած հարցազրոյցներէն է Թորոնթոյի ՀՅԴ «Արծիւ» հրատարակութեան հետ ունեցած հարցազրոյցը (Յունուար 1, 2016-ին) «Հայ կնոջ դերը յետցեղասպանութեան ազգային վերընձիւղման աշխատանքին մէջ» նիւթով: Ուրիշ մը՝ Պոսթոնի «Armenian Weekly»-ի (Մարտ 19, 2015) մէջ լոյս տեսած հարցազրոյցը Ռուբէն Ճանպազեանին հետ: Ի պատասխան հարցումին, թէ ինչո՞ւ յարատև կը գրէ կիներու մասին, Սոնա Ձէյթլեան կ՚ըսէ. «Ձիս միշտ մտահոգած է, որ հայ կնոջ պատմութիւնն անտեսուած է: Օրինակ՝ առնենք յեղափոխականներու յուշերը կամ հայոց պատմութեան որևէ գիրք: Պէտք է ուշադրութեամբ կարդաս, որպէսզի մէկ կամ երկու նախադասութիւն գտնես կիներու մասին: Կանուխ անդրադարձայ, որ կիները արդար վերաբերմունք չէին ստացած գրական կամ պատմական աղբիւրներու մէջ: Ուրեմն նպատակս անոնց յիշատակը պահել և պահպանել էր, բան մը, որ վերածուեցաւ կեանքիս առաքելութեան: Այս միտումով է, որ սկսայ հետազօտել հայ կիներու նիւթը և հետաքրքրութիւնս ընդլայնեցաւ ընթերցումներուս և ուսումնասիրութիւններուս հետ»:

Սոնան ստացած է գովասանքի նամակներ և գնահատանքներ իր դաստիարակչական և մտաւորական ներդրումին համար, ինչպէս նաև հայկական գաղութներու ծառայութեան իր նուիրումին համար:

Սեպտեմբեր 18, 1991-ին Եգիպտոսի ազգային վարժարաններու (Գահիրէի «Գալուստեան», Հելիոպոլիսի «Նուպարեան» և Ալեքսանտրիայի «Պողոսեան» դպրոցներու) շրջանաւարտները կը պատուեն Սոնա Ձէյթլեան՝ որպէս լաւագոյն ուսուցիչ, Թորոնթօ՝ Քանատայի մէջ տեղի ունեցած յուզիչ արարողութեան մը ընթացքին: Ներկայ կը գտնուէին իր նախկին գործակիցներն ու աշակերտները, որոնք ժամանած էին աշխարհի տարբեր քաղաքներէ: Ձեռնարկին Սոնան իրենց շնորհակալութիւն կը յայտնէ յիշատակները բաժնելու համար, տարիներու ընթացքին իրենց ընկերային կապերը խնամելու համար և քաղաքացիական կրթութիւնը արժևորելու համար գիտակից և յանձնառու Սփիւռքի գաղութներ կերտելու աշխատանքին մէջ: Նկատելի է, որ Սոնային նախկին աշակերտները միշտ կապ պահած են իր հետ՝ զինք կոչելով նուիրեալ դաստիարակ, ոգևորիչ դասախօս և օրինակելի ու ներշնչող անձնաւորութիւն:

1992-ին ՀՕՄ-ի շրջանային վարչութիւնը Սոնային կը շնորհէ ոսկէ շքանշան՝ գաղութի ծառայութեան և դաստիարակչական գործունէութեան ոլորտներէն ներս իր վաստակին և անձնազոհ ծառայութեան համար:

1995-ին, նկատի ունենալով գաղութի առաջնորդական իր ջանքերը, կը նշանակուի Կուստաւ Վոն Կրիւնպոմ Մերձաւոր Արևելքի գիտութեան կեդրոնի խորհրդատուական խորհուրդի անդամ և կը մասնակցի անոր գործունէութեան ընդլայնման աշխատանքին:

Ապրիլ 12, 2008-ին Քալիֆորնիոյ (Լոս Անճելըս) պետական համալսարանի ընկերային ծառայութեան բաժանմունքին կողմէ կը գնահատուի շնորհակալագիրով իր ազդեցիկ դաստիարակչական յանձնառութեան համար:

Մայիս 3, 2015-ին Սոնան կը պատուուի ծայրագոյն պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց Գարեգին Բ-ի կոնդակով, ինչպէս նաև հոչակաւոր «Ս. Սահակ և Ս. Մեսրոպ» շքանշանով՝ իր մտաւորական արտադրութեան, դաստիարակչական աշխատանքին, հայ կնոջ պատմութիւնը արձանագրելուն և գաղութի ծառայութեան համար: Կոնդակը կը գովաբանէ զինք՝ հաստատելով. «Գահիրէի ձեր օրերէն, ապա Պէյրութ և Լոս Անճելոս դուք եղած էք նուիրեալ ուսուցիչ՝ լեցնելով հայ երիտասարդներու սիրտերը իրենց հարուստ ժառանգութեան սիրով: Ձեր բծախնդիր հետազօտութեան ճամբով ծանօթացած էք հայ կիներու, հերոսուհիներու, որոնք ճգնաժամի ատեն յաղթահարած են բոլոր արգելքներն ու մարտահրաւէրները՝ եռանդով և տաղանդով: Կը գնահատենք ձեր թանկագին ներդրումը հայ ազգի կեանքէն ներս»: Գնահատանքի արարողութեան կը հետևի յիշատակի պատարագ Պըրպէնք, Քալիֆորնիոյ առաջնորդանիստ Սրբոց Ղևոնդեաց մայր տաճարին մէջ: Ընդունելութեան ընթացքին Սրբազան Հովնան արքեպիսկոպոս և ՀԲԸՄ «Հայ կին»-ի հիմնադիր և նախագահ Սոնա Եագուպեան բարձրագոյն գնահատանքներ կ՚ընծայեն պատուած Սոնային: Սոնայի նախկին աշակերտ Նուպար Արոյեանի կողմէ երախտագիտական նամակ մը կ՚ընթերցուի: Խօսք կ՚առնէ տղան՝ Հրազդանը և Ձէյթլեան ընտանիքի կողմէ ներկաներուն շնորհակալութիւն յայտնելէ ետք մօր վաստակը կ՚ամփոփէ՝ ըսելով. «Ան սահմանած է հայ կիներու անհրաժեշտ կեդրոնական դերը ոչ միայն հայ ընտանիքի բեղմնաւորման մէջ, բայց նաև հայ կիներու հիմնական և հիմնարար դերը՝ որպէս յառաջադէմ, տաղանդաւոր և տոկուն անձնաւորութիւններ, որ կերտած են հայ տղամարդուն հետ հաւասարապէս մեր պատմութեան հայկական արևելումը»:

ՀԲԸՄ-ի «Հայ կին»-ի 30-րդ ամեակի առթիւ կազմակերպիչ յանձնախումբը որոշած է պատուել երեսուն ղեկավար կիներ, որոնք ժիր աշխատանք տարած են հայ գաղութի բարեկեցութեան համար և «արժևորած են հայրենիքի հետ յարաբերութեան կարևորութիւնը»: Սոնան այդ երեսունէն մէկն է, որ պիտի պատուուի «Ազդեցիկ ղեկավարութիւն տօնախմբում» ձեռնարկին, որ տեղի պիտի ունենար Նոյեմբեր, 2023-ին Քալիֆորնիոյ (Նորթրիճ) պետական համալսարանին (CSUN) մէջ:

Սոնան, իր չորս զաւակները և անոնց ընտանիքները՝ չորս թոռնիկներով, կը բնակին Քալիֆորնիա: Հայոց պատմութեան և հայ կնոջ հարցերու շուրջ հետազօտութեան և գրութիւններու, ուսուցման և գաղութներու մէջ գործունէութեան երկար ասպարէզով Սոնան կը շարունակէ իր մտաւորական զբաղումն ու աշխատանքը, որ կը դաստիարակէ և կը ներգրաւէ հայ կիներու նոր սերունդ մը և հեղինակութիւն կու տայ անոնց:

Ուրկէ՞ սկսիլ

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Մարդուժ պատրաստել...

Կենսական նպատակ եւ անյետաձգելի յանձնառութիւն:

Հիմա նաեւ հայրապետական պատգամ: Չէ՞ որ տարին այդ նպատակին յատկացնել յայտարարեց Արամ Ա կաթողիկոսը՝ իրաւամբ նշելով, որ «մեր կառոյցները կենսաւորողը, մեր համայնքները ծաղկեցնողը, Սփիւռքը, որպէս հայակեդրոն գոյութիւն, ամրապնդողը, անոր ազգային ինքնութիւնը պահողը, եւ որակ, եւ ուղղութիւն տուողը իր մարդուժն է՝ հոգեմտաւոր պատրաստութիւն, մասնագիտական կազմաւորում ու ամբողջական նուիրում ունեցուղ մարդուժը»:

Բայց ուրկէ՞ սկսիլ. ահա հարցը, որ կ՚ուզեմ խորհրդակցութեան առարկայ դարձնել մեր ընթերցողներուն հետ:

Իսկ այդ հարցումին պատասխանն ալ որոնելէ առաջ կ՚ուզեմ ես ինծի հարց տալ, թէ ինչո՞ւ հիմա կ՚առաջադրուի այս: Մի՞թէ մարդուժի պատրաստութիւնը մեր օրակարգի մնայուն հարցը պէտք չէ եղած ըլլար մեր բոլոր կազմակերպութիւններուն համար, բոլո՛ր ժամանակներուն: Եւ ինչպէ՞ս ստեղծուեր էին ու գործեր այդ կազմակերպութիւնները ի սկզբանէ, եթէ ոչ այն լռելեայն հասկացողութեամբ, որ ի՞նչ նպատակի համար ալ, որ անոնք գոյութիւն էին առած, ամենէն առաջ պէտք էր, որ սկիզբէն ապահովէին անհրաժեշտ մարդուժը՝ արիւնոտ գոյամարտը մղելու,

թէ յետոյ վերապրումը կազմակերպելու եւ պայքարը շարունակելու համար:

Ենթադրենք, թէ դանակը այժմ ոսկորին է հասած, եւ չունինք այլընտրանք:

Պատրաստել մարդուժ:

Եւ ի՞նչ պէտք է հասկնալ այս բառով: Այո՛, ամեն ժամանակէ աւելի ուսեալ ու իրենց այլազան ասպարէզներուն մէջ հմուտ սերունդներ են, որ կը յաջորդեն իրարու մեր, թէ աշխարհի այլ ժողովուրդներու կեանքին մէջ: Ատկէ աւելի ուզածը ի՞նչ է ուրեմն: Ի՞նչ է սուր այն կարիքը, ի՞նչ իւրայատուկ ոլորտի մարդուժ է, որ կը պակսի մեզի, որուն համար ձայն բարձրացուց Կիլիկիոյ Վեհափառը:

Իսկ ո՞վ պիտի ըլլայ պատրաստողը: Ինչո՞ւ չենք պատրաստած ցարդ: Այժմ ունի՞նք միջոցները պատրաստելու համար: Եւ որքա՞ն ժամանակ կայ մեր առջեւ այս յանձնառութեան համար:

Այս հարցումներն ալ ի հարկէ կը կարօտին պատասխանի, եւ այս յօդուածը չի յաւակնիր տալու այդ պատասխանները:

Ահա, սակայն, կարգ մը կէտեր հաւաքական մտորման համար:

Պատրաստե՛լ:

Առաջին՝ ուսուցիչ պատրաստել: Մեր գլխաւոր՝ թիւ մէկ խնդիրը, ուսուցիչի՛ պակասն է: Մեր վարժարանները ուսուցիչ կը փնտռեն ու չեն գտներ: Հայերէն դասաւանդող ուսուցիչ: Հայերէնո՛վ դասաւանդող: Լեզու, մշակոյթ, պատմութիւն, կրօն եւ մասամբ նորին: Լեզուին ու այդ բոլորին լաւապէս տիրապետող ուսուցիչ: Դաստիարակ: Կոչում ունեցող, իր հմտութենէն անդին՝ ոգի՛ ունեցող, ոգի՛ ներշնչող դաստիարակ:

Պատրաստութիւնը՝ մէկ խնդիր: Բայց կայ նաեւ անոր մարդավարի ապրուստը հոգալու հարցը, առանց որուն արդար լուծման՝ մենք տեղ չենք հասնիր: Այսօրուան կեանքի մակարդակով ապրելու հնարաւորութիւն ընծայելու մասին պէտք է խորհիլ: Այլապէս ո՞ր փայլուն ուսանողը պատրաստ պիտի ըլլայ այդ ասպարէզը ընտրելու: Շատ աւելի նուազ յոգնեցուցիչ ու շատ աւելի լաւ վարձատրող ասպարէզներ կան ի վերջոյ: Իսկ այդ հրապուրիչ ասպարէզները մտնելու անկարողներո՞ւն պիտի մնայ ուսուցչական, թէ ազգային պաշտօնները ստանձնելու պարտաւորութիւնը:

Պատրաստե՛լ:

Երկրորդ՝ գրող, հրապարակագիր, լրագրող պատրաստել: Առանց յատուկ պատրաստութեան՝ շատերս վերցուցած ենք այդ դերերը, սակայն մեր գրականութեան ու մեր մամուլի ներկայ վիճակը բաւարար չէ՞ ցոյց տալու համար, որ հոս եւս մեծ բաց մը կայ: Եւ եթէ չկարդանք մեր գիրքերը, եթէ չբանանք մեր մամուլի էջերը, ուրկէ՞ պիտի ստանանք մեր առօրեայ սնունդը, հոգեւո՛ր մեր սնունդը, ազգայի՛ն մեր սնունդը: Ո՞վ է մտածողը այս մասին: Ո՞վ մտահոգ է այս առնչութեամբ: Ո՞ր կազմակերպութիւնն է, որ տրամադիր է գրո՛ղ ապրեցնել, հրապարակագիր վարձատրել, լրագրող խրախուսել:

Պատրաստե՛լ:

Երրորդ՝ գործիչ պատրաստել, ղեկավա՛ր՝ մշակութային, թէ կազմակերպական մարզերուն համար: Չի՛ պակսիր տաղանդը, չի պակսիր ստեղծագործական հրայրքը, բայց ո՞վ ամավարկ կը յատկացնէ այս ուղղութեամբ: Եւ ո՞վ, ո՞ր կազմակերպութիւնը պատրաստ է անհրաժեշտ վարձատրութիւնը յատկացնելու, որ իր պարախումբերն ու երգչախումբերը չմնան առանց ղեկավարի, իր թատերախումբերը՝ առանց բեմադրիչի, իր երիտասարդական ու պատանեկան միութիւնները՝ առանց վարիչի, իր քաղաքական աշխատանքները՝ առանց լիաժամ նուիրեալ գործիչներու: Սիրողական մակարդակէն վե՛ր: Իրենց ասպարէզներուն մէջ հմո՛ւտ: Եւ մի՛շտ ոգի ունեցող ու ոգի՛ հաղորդող:

Այո՛, պատրաստել:

Դեռ չեմ խօսիր այլ ոլորտներու մասին. տնտեսականէն, մարզականէն մինչեւ պաշտպանականը:

Կասկած չկայ, որ այս բոլորին համար մենք՝ Սփիւռք, թէ հայրենիք, մարդուժի կարիք ունինք, մարդուժ պատրաստելու պարտաւորութիւնը ունինք: Այս պահուս անորոշ է, թէ այս ուղղութեամբ ի՞նչ կը ծրագրուի Հայաստանի մէջ, եւ ո՞վ է ծրագրողը, սակայն ազգովին չենք կրնար խուսափիլ մեր այդ պարտաւորութենէն Սփիւռքի պարագային:

Բայց, այո՛, ուրկէ՞ սկսիլ:

Առանց անտեսելու կարեւորութիւնը առկայ մարդուժը ճանչնալուն, համախմբելուն եւ զինուորագրելուն՝ նոր մարդուժի պատրաստութիւնը սկսիլ մանկապարտէզներէն, ընտրել յատկութիւններ ու ձիրքեր ցոյց տուող երեխաները, հետեւիլ եւ օժանդակել անոնց ուսման, զարկ տալ անոնց կարողութիւններուն, բացայայտել այդ կարողութիւնները եւ այդպէս քաջալերել զանոնք մինչեւ անոնք հասնին դառնալու մեր ներուժը բոլոր վերոյիշեալ մարզերէն ներս:

Անհրաժեշտ է ի սկզբանէ նիւթական կոռւանները ստեղծել, այնպէս, ինչպէս կը յաջողինք գոյացնելու շէնքերու՝ եկեղեցիներու, դպրոցներու կամ ակումբներու շինութեան կամ նորոգութեան պէտք եղած գումարները: Այո՛, այդ գումարներէն շատ աւելիին, տասնապատիկ, թէ հարիւրապատիկ աւելիին պէտք ունինք մարդուժի պատրաստութեան համար, բայց ես ունիմ անխախտ համոզումը, թէ կրնանք ի մի բերել մեր գոյութեան երաշխիք դառնալիք նիւթական այդ կոռւանները:

Բայց մանաւանդ անհրաժեշտ է այս գործին մօտենալ համահայկական առումով, բոլորին հետ խորհրդակցաբար, բոլորին մասնակցութեամբ՝ թէ՛ կարիքներու ճշտումին, թէ՛ գործնական քայլերու որոշումներուն համար: Բոլորը՝ ներառեալ քաղաքական տարբեր կողմերը, եկեղեցական բոլոր համայնքները, բոլոր միութիւնները եւ բոլոր անոնք, որոնք այս առնչութեամբ կրնան օգտակար ներդրում մը ունենալ:

Սկսիլ համազգային գործակցութենէն: Մնացեալը աւելի հեշտ կ՚իրականանայ: ■

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ՝ ԴԵՊԻ ՌԱԶՄԱԴԱՇՏ ԿՈՉԸ

25 մայիսի, 1918 թ.
Երևան

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Թուրքիայի կորստաբեր պահանջները և վիրաւորական տրամադրութիւնը վերջապէս ազդեց հայ ժողովրդի հոգու վրայ: Այժմ, գոնէ, պարզւում է, որ մենք մեր յոյսը պիտի կապենք մեր խիզախութեան հետ: Ամեն տեղ ոգևորութիւն է տիրում: Սարդարաբադի շրջանում հայ զինուորներն ու նրանց եզդի դաշնակիցները գովելի արիութեամբ յետ են վանում թշնամուն՝ թուրք ասկեարներին և թուրք ու քիւրդ խուժանին: Էջմիածնի գաւառի բոլոր գիւղերից օգնութեան են գնում քաջերին: Աւելի սրտապնդիչ թռիչքներ են կատարում Դիլիջանի շրջանում:

Ժողովուրդը ոտքի է կանգնել և իր հազարաւոր զաւակներին մղում է դէպի ռազմի դաշտ: Հայ գիւղացիները տալիս են իրենց ամբողջ ունեցածը՝ հրացան, փամփուշտ ու հաց: Հայ ժողովուրդը հարիւրաւոր դարեր քաջութեամբ է պաշտպանել իր հայրենի օջախը, իր տունն ու ընտանիքը. նրան յաղթել են, բայց նրա հոգին ընկճել չեն կարողացել: Վերջին պատերազմական և քաղաքական անցքերը որոշ լքում, ոգու անկում էին առաջացրել: Այսօր այդ հիւանդութիւնը բուժւում է, հին խիզախութիւնը վերածնւում է, և այդ փրկութեան միակ իրական ելքն է մեր դժուարին պայմաններում ու ժամանակներում:

Ի զէն, մեր քաջեր, դէպի ռազմադաշտ:

Երևանի Հայոց Ազգային Խորհուրդ

ԴՐԱՍՏԱՄԱՏ ԿԱՆԱՅԱՆ (ԴՐՈ)
Ծնվել է 1883 թ. մայիսի 31-ին Իգդիրում – մահացել է 1956 թ. մարտի 8-ին Բոստոնում:
Ազգային ազատագրական պայքարի և Առաջին հանրապետության
նշանավոր ռազմական գործիչ

ԴՐՕՇԱԿ